

ԷԶՄԻԱԾԻՆ



1963

ՌՆԺԲ

Ի ՏԱՐԻ

Փ ԵՄՐԱՆԱՐ

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Բ

1963



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Ղևոնդյանց պզով և Վարդանանց լուսեղեն հանապարտով	3
Յանն Կիլիկիա Կարողիկոսության Ամենապատիվ Յ. Զարեն Սրբազան Արքեպիսկոպի մահ— վան առիվ փոխադրված հեռագրեր	5
<u>Հանգիստ Ամենապատիվ Յ. Զարեն Սրբազան Արքեպիսկոպի</u>	7
<u>Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ ՈՒ Մ</u>	9
Վարդանանց տանը Մայր Աթոռում	10
ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՊՈԶԱՊԱՆԱՆ— «Արիւն մարտիրոսաց՝ սերմն քրիստոնէից»	12
ՔՈՐԳՈՄ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԱՅՏԱՐՑԱՆ— Մեծ խնայքը	14
Գ. ՀԱԿՈՐՑԱՆ— Հայ տաղին բանաստեղծը՝ Մեսրոպ Մաշտոց	16
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ— Պալիս և իր դերը	26
Թ. ԹՈՒՄԱՆՅԱՆ— Խոսնի հասակը և շարքավազ օրերը որոշելը	34
Հ. ԽԱՎՓԱԽԶՅԱՆ— Միջնադարյան Հայաստանի հավանագիտաներն ու հավալայանները Տեղիքը (խոսք՝ ՍԻԱՄԱՆԹՈՏԻ, Երաժշտության՝ Ն. ՔԱՀՄԻԶՅԱՆԻ)	37
ԿՏՈՒՐԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՐԻԿՅԱՆ— Հայկական երաժշտիկ	45
Վերահամադրվում «Revue des études arméniennes» հանդեսին	49
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ— Մաթիսների հայացքի տակ	56
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	57
	58



**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՐՄԱԳԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“.
Rédaction de la revue „Etchmiadzine“, Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1963 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՂԵՎՈՆԴԹԱՆՑ ՈԳՈՎ ԵՎ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԼՈՒՍԵՂԵՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Ամեն ճշմարիտ հայ անգիր գիտի Ղևոնդյանց՝ Հայ Եկեղեցու պարծանք և նախատակ այդ հոգևորականների և Վարդանանց՝ հայրենիքի քաջամարտիկ այդ պինվորների հերոսական պատմությունը, որոնք «արդարութեամբն ճոխացեալ, իմաստութեամբ պայծառացեալ, հեղին քարինս իւրեանց ի նորոգումն Եկեղեցւոյ» և հայրենեաց:

Մանկական մեր ամառիկ թոթովանքների հետ, հուլիսումով և հպարտությամբ, կրկնել ենք «Իմ հայրենեաց հոգի Վարդան»-ի անունը:

Դպրոցական գրասեղանների առաջ, հայոց պատմության դասագրքերի էջերից, նայել և իմանդավառել է մեզ արի և կարմիր Վարդանը, փառքի դափնիներով պսակված, սաղավարտ ի զլուխ, արծվաբիթ և առնական հայացքով, ձեռքը դրած տիրականորեն հայրենիքի պաշտպան սրի վրա:

Ամեն տարի բեմի վրա կենդանացել է Վարդանի հերոսական կերպարը իր հմայիչ և սրտառուչ հայրենասիրությամբ, իր շողափայլ պեն ու պրահի մեջ:

«Իմ հայրենեաց հոգի Վարդան,

Հոգիս հոգուդ եղնի դուրբան»:

Վարդանը մեզ հետ էր ամեն տեղ. Վարդանը մերն էր, որովհետև Վարդանը ինքը հայ ժողովուրդն է և Վարդանի մարտը, Վարդանի պատմությունը հայ ժողովրդի պատմությունն իսկ էր:

Այս իմաստով, Վարդանանց հերոսամարտի ոգեկոչումը ամեն տարի Մեծ պահոց բարեկենդանից երկու օր առաջ, լույս մի սրտագին վերհիշումը չէ դյուցազնական մի դրվագի, այլ 1500 տարիներից ի վեր տևող, ոգեշնչող, ապ-

րեցնող, անտեսանելի՝ բայց միշտ ներկա մի մեծ ուժ, մի մեծ ոգի, մի մեծ պատգամ:

Ամեն հայ իր սրտի մեջ ունի Վարդանից մի կայծ, Ղևոնդից մի ճառագայթ, որը նրան դարձնում է ուխտապահ պինվորը այն հոգևոր, եկեղեցական, մշակութային և հայրենասիրական արժեքներին, որոնց համար Ավարայրի դաշտում հերոսաբար ընկան Վարդանանց և Ղևոնդյանց:

Վարդանանց հերոսամարտը այս իմաստով սոցիորված է ազգային գիտակցության և արժանապատվության բարձր պաշտպանությամբ, սրտառուչ և անձնուրաց հայրենասիրությամբ, որոնք մինչև այսօր ցնցում են մեզ, ապրեցնում և ամրապնդում հավատարիմ մնալու նրանց ոգուն և պայքարին:

Ավարայրը անցյալում մեր ժողովրդի մզած ազգային ազատագրական պայքարի պանծալի բարձունքներից մեկն է, իրավ արտահայտությունը հայ ժողովրդի հավաքական, ազգային գիտակցության, բարոյական կորովի, բարձր նկարագրի, հայրենասիրության և եկեղեցական ուխտապահության:

Արդարև, Վարդանանց հերոսամարտը, Ավետարանի լույսով արիացած, դարձավ «մահ իմացեալ անմահութիւն», ինչպես գրում է ոսկեգրիչ Եղիշեն:

Ժամանակավոր պարտություններ չեն որոշում ժողովրդի բախտն ու ապագան: Ժողովրդի ուժը նրա գիտակցության մեջն է: Գիտակից մի ժողովուրդ երբեք չի կորչի:

Եվ Ավարայրի դաշտում դրսևորվեց հայ ժողովրդի հավաքական այդ գիտակցությունը, միասնությունը: Մարտի դաշտ իջած ամեն մի

հայ ժազմիկ՝ պորավար, հոգևորական, ազատ, շինական, անգամ կանայք և միանձնուհիներ, գիտեր, թե ինչի՞ համար էր կռվում և արյուն թափում: Հայ հոգու և հայ հողի վրա կախված ընդհանուր աղետը, հայության գոյության սպառնացող մեծ վտանգը առաջ էին բերել մասսայական, գիտակից հերոսություն: Հայրենիքը, որպես ոգեկան ամբողջություն, ներշնչված էր մի բարձր գաղափարախոսությամբ, որի մեջ իրար էին կցորդված հայ հավատի նվիրականությունը և հայրենիքի իրավ սերը. «Ջաջութեամբ միայն հեռացուք, պանուկ և պոգի և եթ ժառանգեսցուք, բայց յարութիւնս քաջութեան վատութիւն մի՛ խառնեսցուք»:

Համաժողովրդական այս գիտակից, կորովի ոգու առաջ, այս պայծառ գիտակցության առաջ, բարոյապես պարտվում է նախ թշնամին և պինաթափ է լինում. «Ոչ ի կապանաց պանգիտեն, ոչ ի տանջանաց երկնչին, Վմահ քան վկեանս ընտրեն. ո՛վ է որ կարէ սոցա դիմադարձ լինել»:

Ղևոնդ և Վարդան իրենց խմբերով եղան լուծողովորդական կամքի արտահայտիչները և գիտակից պայքարի կազմակերպիչները: Նրանց մեջ խոսում էր ծայրը հայրենիքի և ժողովրդի:

Ավարայրը, այս մտածման լույսի տակ, հավաքական սրբացումն է հայ ժողովրդի և հերոսացումը՝ Հայ Եկեղեցու:

Ղևոնդյանց ոգով և Վարդանանց խորհրդով սերունդներ են դաստիարակվել: Եվ այսպես անցան դարեր և դարեր:

Վարդանանց հերոսամարտի եկեղեցական, մշակութային, քաղաքական, հայրենասիրական նշանակությունը է՛լ ավելի վճռական դեր է կատարում մեր պատմության հաջորդ տարիներին, ամեն անգամ, երբ օտարը ծեծք է բարձրացնում մեր ազատության, մեր հոգու անկախության և մտածման դեմ:

Մերկացնում է հայ ժողովուրդը Ղևոնդի օրհնությամբ տրեգործված և Վարդանանց արյունով ներկված ազատության սուրը և իջնում է

մարտի դաշտ վճռական և արի. «Զայսմ հաւատոց պմեզ ոչ ոք կարէ խախտել»:

Նույն վճռականությամբ պայքարում է հայ ժողովուրդը նաև իր ոգեկան ազատությունը խեղդել փորձող բռնակալների դեմ. դավաճաբանական վեճերի բուռն ջրջանում. «Հաւան եմք ընդ հարսն մեր ի դժոխս իջանել և ոչ ընդ Հոռոմոցն յերկինս ելանել» (Ստեփանոս Օրբելյան):

Անցնում են դարեր և ապրում է հայ ժողովուրդը, ապրում և պայքարում: Փոխվում են ժամանակները, փոխվում են նաև պայքարի ձևերն ու կերպերը, բայց մնում է հայ ժողովրդի գիտակից վճռականությունը ապրելու, պահելու իր հոգու և մտքի անկախությունը, իր հայրենիքի սրբազան հողը:

Ոգեկան, բարոյական այս հաղթանակներն են որ ամրապնդում են մեր հայրենիքն ու Եկեղեցին, մեր ժողովուրդը:

Հայության ուխտը անքակտելի է, որովհետև «սրբազան ուխտն հաւատոց մերոց ոչ եթէ ընդ մարդոյ է, այլ անլուծութեամբն Աստուծոյ, որում չիք հնար քանդել և ի բաց ելանել, ոչ այժմ և ոչ յապա և ոչ յաւիտեանս և ոչ յաւիտենից յաւիտեանս»:

Վարդանը, ինչպես իր ճառի մեջ նշում է, հայ սերունդներին կտակել է «հաւատք, պատիւ, և՛ ազգ, և՛ ազատութիւն, և՛ լեզու»:

Հայ ժողովուրդը աչքի լույսի պես պահպանել է այդ ավանդները, պահպանում է նաև այսօր, վերածնված իր Մայր հայրենիքի խաղաղ և ապահով հովանու տակ, իր ստեղծագործ աշխատանքով, օրհնությամբը նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետի:

«Դարերը կանցնին, բայց Վարդանը քաջ, Վարդանը կարմիր կերթա միշտ առաջ»:

Ու Վարդանի հետ կըլլի միշտ առաջ հայ ժողովուրդը, Ղևոնդյանց ոգով, Ավարայրի քաջամարտիկների լուսեղեն ճանապարհով:





Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Զ

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԶԱՐԵՀ ՍՐԲԱԶԱՆ ԱԹՈՌԱԿԱԼԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

ԷԶՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ

ԷԶՄԻԱԾԻՆ

Անսահման վշտով կհայտնենք մահը Նորին Սրբություն Զարեհ Ա Կիլիկիո Կաթողիկոսին երկուշաբթի, փետրվար 18-ին, սրտի տագնապի հետևանքով:

ԱՆԹԻԼԻԱՍ

ԽՈՐԵՆ ԱՐՋԵՊԻՍԿՈՊՈՍ

18 փետրվար 1963

ԽՈՐԵՆ ԱՐՋԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՆԹԻԼԻԱՍ

Մեծ վշտով ստացանք Ձեր հեռագիրը Զարեհ Սրբազան Աթոռակալի մահվան մասին ուղղյալ Էջմիածնի Կաթողիկոսարանիս:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը խոր կսկիծով ընդունեց սույն անսպասելի և դառնաղետ գույժը և աղոթում է Փրկչի իջման Ս. Սեղանի առաջ իր սիրեցյալ Եղբոր արդար հոգվույն խաղաղության և Տանն Կիլիկիո Աթոռի անսասանության համար:

Թող Աստված լուսավորյալ պայծառացնի հանգուցյալի հոգին և Ա. Հոգով մխթարի Ձեր միաբանությունը և հավայն ժողովուրդը:

Վարդանանց տոնին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, հոգեհանգիստ Ա. Էջմիածնի Մայր Տաճարում:

Հաճեցեք հեռագրել թաղման օրը:

ՍԱՀԱԿ ԱՐՋԵՊԻՍԿՈՊՈՍ

ԷԶՄԻԱԾԻՆ

Ատենապետ Գերագույն Հոգևոր նորհրդի

19 փետրվարի 1963 թ.

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ Տ. ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐԺԻՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Վշտահար սրտով կիսնդրենք Ձեզմե, որ Ա. Աթոռիդ կողմե հատուկ պատվիրակություն Մեր անունով ներկա ըլլա Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Սրբապան Աթոռակալ, Մեր ողբացյալ Ջարենի Եղբոր թաղմանական արարողությանը:

Ա. Էջմիածնեն վերջին ողջույն և օրհնություն ի Տեր հանգուցյալ Մեր Եղբոր հիշատակին:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Կաթողիկոս Ամենայն Հայոց

22 փետրվարի 1963 թ.

ԽՈՐԵՆ ԱՐՋԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Ա Ն Թ Ի Լ Ի Ա Ս

Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, Էջմիածնի Մայր Տաճարում, Վարդանանցի մատուցվեց սուրբ պատարագ և հոգեհանգիստ Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ի Տեր հանգուցյալ Ջարենի Սրբապան Աթոռակալի հիշատակին: Պատարագեց Հայկապուն արքեպիսկոպոսը: Դամբանական խոսեց Ասողիկ եպիսկոպոսը, ի ներկայության խումբերամ բազմության: Ներկա էին ողբացյալի ազգականները մեծ թվով, որոնք հետ պատարագի ընդունվեցին Վեհարան Նորին Սրբության կողմից:

ՍԱՀԱԿ ԱՐՋԵՊԻՍԿՈՊՈՍ

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

23 փետրվարի 1963 թ.

ՍԱՀԱԿ ԱՐՋԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Նորին Սրբություն Ջարենի Կաթողիկոսի հուշարկավորությունը վաղն է:

ԽՈՐԵՆ ԱՐՋԵՊԻՍԿՈՊՈՍ

Բ Ե Թ Ր Ո Ւ Թ

23 փետրվար 1963

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն


Խորեն արքեպիսկոպոս Բարդյան միաձայն ընտրվեցավ Տեղապահ:

ՂԵՎՈՆԴ ԱՐՋԵՊԻՍԿՈՊՈՍ

Բ Ե Թ Ր Ո Ւ Թ


Միաբանական ժողովի նախագահ

25 փետրվար 1963





ԵրջանկաՌիշատակ Տ. Զ ա Ր Է Ռ Արքայան, Աթոռակալ Տանն Կիլիկիո Կաթողիկոսութեան



ՀԱՆԳԻՍՏ
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԶԱՐԵՀ ՍՐԲԱԶԱՆ ԱԹՈՌԱԿԱԼԻ
(1915—1963)

Փետրվարի 18-ին Անթիլիասի Կաթողիկոսարանից հորեն սրբազանի ստորագրությամբ Մայր Աթոռում ստացված հեռագիրը գումար էր անակնկալ և դառնադեմ մահը Ամենապատիվ Տ. Զարեհ Սրբազան Աթոռակալի:

Տանն Կիլիկիո Սրբազան Աթոռակալի մահը խորին վիշտ է պատճառում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Մայր Աթոռի միաբանության:

Նորին Ս. Օծության հրամանով, Գերագույն Հոգևոր հորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը ցավակցական հեռագիր է հղում հորեն սրբազանին, հանուն Վեհափառ Հայրապետի, Մայր Աթոռի միաբանության և Գերագույն Հոգևոր հորհրդի խորունկ վշտակցություն հայտնելով Կիլիկյան Աթոռին, միաբանության և ժողովրդին՝ այս մեծ կորստի առթիվ:

Այնուհետև, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, փետրվարի 21-ին, Մայր Աթոռում, Վարդանանց տոնի օրը, պատարագ է մատուցում Հոգևոր Ենթարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը:

«Հայր մեր»-ից առաջ բեմ է բարձրանում Գերագույն Հոգևոր հորհրդի անդամ գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանը և հանուն Վեհափառ Հայրապետի, Մայր Աթոռի միաբանության և Գերագույն Հոգևոր հորհրդի խորունկ վշտակցություն է հայտնում Կիլիկյան Աթոռին, միաբանության և ժողովրդին՝ ամենապատիվ Տ. Զարեհ Սրբազան Աթոռակալի անակնկալ և տխուր մահվան առթիվ:

Այնուհետև Տ. Ասողիկ սրբազանը ջերմորեն խոսում է հանգուցյալի կյանքի և գործունեության մասին և բարեմաղթություններ անում Կիլիկյան Աթոռի պայծառության համար:

Դամբանականից անմիջապես հետո, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Մայր Տաճարի ավագ բեմի ատյանում կատարվում է հոգեհանգստյան հատուկ պաշտոն նորոգ հանգուցյալ Տ. Զարեհ Սրբազանի անմոռաց հիշատակին:

Սուրբ պատարագին և Հոգեհանգստյան արարողության ներկա են նաև հանգուցյալ Սրբազանի հայրենաբնակ բոլոր հարազատներն ու բարեկամները, որոնց մեծ վիշտը բաժանելով, մխիթարում է նրանց Վեհափառ

Հայրապետը, արցունքոտ աչքերով և սփոփանքի սրտագին արտահայտություններով:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է պաշտոնական ցավակցությունը Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի և հանգուցյալի հարազատներին:

Հանգուցյալի հիշատակին «Հոգևոց» արտասանելուց հետո, իր խոսքի մեջ Ամենայն Հայոց Հայրապետը վշտով և ամսոսանքով անդրադառնում է Հայ Եկեղեցու կրած մեծ կորստին հանձին իր սիրելի Նղբոր՝ ողբացյալ Ամենապատիվ Տ. Զարեհ Սրբազան Աթոռակալի մահվան:

Այնուհետև նորին Ս. Օծովությունը բարեմաղթություններ է անում Կիլիկյան Աթոռի անսասանության, միաբանության և ժողովրդի բարօրության համար:

Վեհարանում ևս ներկա էին նաև ողբացյալ Տ. Զարեհ Սրբազանի հարազատները, որոնք առանձինն արժանանում են Վեհափառ Հայրապետի սփոփանքին և ուշադրության:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, նրա անվանակոչության տոնի առթիվ նախատեսված պաշտոնական հանդիսությունը և ընդունելությունը դանց են առնվում, ի հարգանս հանգուցյալի թարմ հիշատակի:

Հանգուցյալ Ամենապատիվ Տ. Զարեհ Սրբազանը ծնվել է 1915 թվականի փետրվարի 14-ին Մարաշ քաղաքում (Կիլիկիա):

Ավագանի անունն է եղել Սիմոն:

1927 թվականին ծնողների հետ գաղթել է Հալեպ (Սիրիա) և հաստատվել այնտեղ, ուր սովորել է Ազգային Մեսրոպյան վարժարանում և ապա շրջանավարտ եղել Հայկազյան վարժարանից:

1930 թվականին ընդունվել է Կիլիկյան Աթոռի նորարաց Դպրեվանքում, որպես առաջին սաներից մեկը:

1935 թվականին հաջողությամբ ավարտելով դպրեվանքի ուսման հնգամյա շրջանը, կուսակրոն քահանա է ձեռնադրվում ձեռամբ Դպրեվանքի վերատեսուչ լուսավորչի Տ. Շահնարեքիսկոպոս Գասպարյանի:

1936—1938 թվականներին հետևում է Բրյուսելի համալսարանի արևելագիտության և պատմության դասընթացներին:

Այնուհետև վանքում կատարում է մի շարք պատասխանատու և կարևոր պաշտոններ:

1940 թվականին ընտրվում է Հալեպի թեմի առաջնորդական տեղապահ և 1943-ին առաջնորդ:

1947 թվականի փետրվարին կոչվում է եպիսկոպոսական աստիճանի Տ. Գարեգին Վեհի ձեռամբ, ռեզիդենտ Ս. Փառեն, Տ. Դերենիկ, Տ. Խորեն և Տ. Ղևոնդ եպիսկոպոսներին:

1956 թվականի փետրվարից մինչև 1963 թվականի փետրվարը վարում է Կիլիկիո Կաթողիկոսության աթոռակալությունը:

Ամենապատիվ Տ. Զարեհ Սրբազան բնավորությամբ հեղահամբույր, զարդացած, գիտակից բարձրաստիճան հոգևորական էր, կոշմամբ և իր ամբողջ կյանքով նվիրված եկեղեցուն:

Նրա մահով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին կորցնում է իր հավատավոր և ժողովրդանվեր առաջնորդներից և սպասավորներից մեկին:

Խո՛ւնկ և աղոթք նրա պայծառ հիշատակին:





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Փետրվարի 9-ին, շաբաթ, «Տօն Սրբոյն Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին և յորեքտասան զինաւորացն»։ Երեւանի Ս. Սարգիս եկեղեցում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալլանը։ Քարոզի բնարանն էր «Աստ արաւաշիք զյիշատակ Սրբոյն Սարգսի զօրավարին, որ է տուն երկնից և ճանապարհ արքայութեան»։

* *

Փետրվարի 9-ին, շաբաթ, երեկոյան ժամը 7-ին, Հոգեւոր Ընձարանի դահլիճում բանախոսեց Ընձարանի դասախոս Գրիգոր Գլուկանը, նյութ ունենալով ժաննա դ'Արքի կյանքն ու գործունեությունը։

Դասախոսությունը լսվեց մեծ հետաքրքրութեամբ։

* *

Փետրվարի 10-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Նարեկ արեղա Շաքարյանը։ Քարոզի բնարանն էր «Աստ օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն զՏէր»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* *

Փետրվարի 10-ին, կիրակի, երեւանի Ս. Սարգիս եկեղեցում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսէս վարդապետ Պոպալանը։ Քարոզի բնարանն էր «Արիւն մարտիրոսաց՝ սերմն քրիստոնեից»։

* *

Փետրվարի 16-ին, շաբաթ երեկոյան, Հոգեւոր Ընձարանի հանդիսասրահում բանախոսեց Ընձարանի դասախոս Պարզն Շահրազյանը «Մխիթարյանները և հայ մշակույթը» թեմայի շուրջ։

Դասախոսությունը լսվեց հարաճուն ուշադրութեամբ։

* *

Փետրվարի 17-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը «Լուսով քով Քրիստոս ամենեքեան լուսաւորեցաք» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* *

Փետրվարի 22-ին, ուրբաթ, Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ, ղումարվեց Գերագույն Հոգեւոր հորհրդի նիստը։

* *

Փետրվարի 25-ին, երկուշաբթի, Մոսկվայից ԱՄՆ մեկնեց Սովետական Միութեան քրիստոնեական եկեղեցիների պատգամավորությունը, ԱՄՆ-ի եկեղեցիների ազգային խորհրդի հրավերով։

Պատգամավորության կազմում էր նաև Մոսկվայի հայոց հոգեւոր հովիվ գերաշնորհ Տ. Պարզն եպիսկոպոս Գևորգյանը, որպես ներկայացուցիչ Հայոց եկեղեցու։


Ամսի 22-ին Մայր Աթոռից Մոսկվա մեկնեց հոգեշնորհ Տ. Նարեկ արեղա Շաքարյանը, ժամանակավորապես փոխարինելու Տ. Պարզն եպիսկոպոսին։

* *

Փետրվարի 24-ին, կիրակի, Թուն քարեկենդանու Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննէս քահանա Մարությանը։ Քարոզեց ղերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Արաբաբաբյանը, բնաբան ունենալով «Ապա ուրեմն, իւրաքանչիւր ոք ի մէջը, ընդ անձին համարս տացէ Աստուծոյ»։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։





ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 21-ին, հինգշաբթի օր, տոնն էր «Սրբոց Վարդանանց զօրավարացն յերոց հազար երեսուն և վեցիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին»:

Ազգային-եկեղեցական մեծ տոնի առթիվ, Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, եպիսկոպոսական հանդիսավոր պատարագ է մատուցում Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հակազդուն արքեպիսկոպոս Արարհամյանը:

Սուրբ պատարագին ներկա է հավատացյալների հոծ թաղմունք:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մայր Տաճար:

Հանդիսավոր սուրբ պատարագի վերջում, իջման Ս. Սեդանի առաջ, կատարվում է հայրապետական մաղթանք:

Սրբոց Վարդանանց տոնը տոնն է նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անվանակոչության:

Պատարագի սրբազանը մաղթանքից առաջ քարոզում է համազգային տոնի ազգային-եկեղեցական մեծ նշանակության մասին, հանգամանորեն վեր հանելով Ղևոնդյանց և Վարդանանց նահատակության պատմական իմաստը: Քարոզի վերջում սրբազանը սրտագին բարեմաղթություններ է անում Վեհա-

փառ Հայրապետի թանկագին կյանքի արեւշատության, Մայր Աթոռի պայծառության և հայրենիքի բարօրության համար:

Հայրապետական մաղթանքից հետո, Մայր Տաճարում ներկա եղող հավատացյալները ականածալի աջահամբույրով շնորհավորում են Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է նոր Վեհարանի իր աշխատասենյակը, ուր գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը շնորհավորում է Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը:

Վեհափառ Հայրապետը, խորապես զգացված իր անվան տոնի առթիվ արտահայտված սրտագին շնորհավորություններից և բարեմաղթություններից, օրհնում է Հայոց ազգն ու եկեղեցին, հայրենի աշխարհն ու խաղաղություն, շինություն բարեմաղթում ողջ աշխարհին:

Ժամը 2-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, տեղի է ունենում գրական-գեղարվեստական երեկույթ՝ նվիրված Սրբոց Ղևոնդյանց և Սրբոց Վարդանանց խնկելի հիշատակին:

Պետական հիմնի նվազից հետո, Հոգևոր Ճեմարանի վերակացու հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը կատարում է հանգստի րացումը ներածական ճառով:

Ուսանողության կողմից կատարվում են օրվա տոնի խորհուրդը ոգեկոչող շարականներ, խմբերգեր, մեներգեր, արտասանություններ:

Գ. Լսարանի ուսանող Վոամշապուհ Ջիհանյանը ուսանողության անունից կարդում է Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի առթիվ, որդիական երախտագիտությամբ դրված հետևյալ ուղերձը.

Վեհափառ Տե՛ր.

Այսօր հավաքված ենք այս սուրբ հարկի տակ, տոնելու հիշատակը Վարդանանց և Ղևոնդյանց սուրբ նահատակների, որոնք 1512 տարի առաջ, մի ձեռքում սուր և մյուսում խաչ, դիմեցին դեպի ստույգ, գիտակցված մահը, դեպի անմահություն:

Համազգային այս տոնը մեզ համար կրկնակի մեծ է, որովհետև այսօր Ձերդ Ս. Օծույթյան անվանակոչության տոնն է միաժամանակ:

Այս առթիվ, իմ վրա քաղցր պարտականություն է դրված ուսանող եղբայրներին սրտի թարգմանը հանդիսանալ:

Երախտապարտ ենք Ձեզ, Վեհափառ Տե՛ր, որ Ձեր այնքան բազմազրադ վիճակում ժամանակ եք գտնում զբաղվելու Ձեր սրտին անչափ մոտ եղող այս կրթական հաստատությունը և աշխատում եք մեր սրտերում վառ պահել սերը դեպի Մայր Հայրենիքը և Հայրենի Եկեղեցին, որոնց համար 451 թվականին դեպի մարտիրոսություն դիմեցին Վարդանանք և Ղևոնդյանք:

Ձեր հայրական խնամքն ու զուրգուրանքը իր վրա զգում է մեզնից յուրաքանչյուրը և այդ խնամքը պարտավորեցնում է մեզ:

Այս վեհ պահին, երբ մեր վրա սավառնում է սուրբ նահատակների ոգին, մենք, Հոգևոր Ճեմարանի սաներս, խոստանում ենք մեր ուժերի ներած շափով ծառայել մեր ժողովրդին և մեր Եկեղեցուն:

Վեհափառ Տե՛ր, բնդունեցե՛ք իմ և ուսանող եղբայրներիս խորին շնորհակալությունները Ձեր հայրական սիրտ և խնամքի համար:

Ի դիմաց Հոգևոր Ճեմարանի սաների, թույլ տվե՛ք շնորհավորել Ձերդ Ս. Օծույթյան անվանակոչության տոնը, մաղթելով երկար, քաջառողջ կյանք և մատչիլ ի համրույր Ձեր սուրբ և օծյալ Աջույն:

Սրբոց Ղևոնդյանց քահանայից և Վարդանանց մարտիկների հիշատակի ոգեկոչման նվիրված դրական երեկոյին, օրվա տոնի խորհրդի և ազգային-եկեղեցական նշանակության նվիրված բովանդակալից ճառով հանդես է գալիս Հոգևոր Ճեմարանի գրաբար լեզվի դասախոս Սամվել Անթոնյանը:

Հանդեսը վերջանում է Վեհափառ Հայրապետի դեղեցիկ փակման խոսքով և պատգամով. նորին Ս. Օծույթյունը արդարորեն նախ շեշտում է Ղևոնդյանց և Վարդանանց պատմական դերը հայ ժողովրդի մեջ ազգային հավաքական գիտակցություն արթնացնելու մեջ և ապա վեր է հանում 451 թվականի հերոսամարտի եկեղեցական, մշակութային և քաղաքական հայրենասիրական նշանակությունը հայ ժողովրդի հետագա ողջ պատմության ընթացքում:

Հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիլ»-ով:





ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ

«ԱՐԻՒՆ ՄԱՐՏԻՐՈՍԱՑ՝ ՍԵՐՄՆ ԶՐԻՍՏՈՆԷԻՑ»

(Զարույ խոսված Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, Ս. Սարգիս պորավարի տոնին)

Մարտիրոսների արյունը Եկեղեցու հիմքն է։
Մարտիրոսների թափած արյունովն է, որ
Եկեղեցին աճում է, զորանում և դառնում
անխոցելի։

Այսօր, սիրելի՛ հավատացյալներ, Ս.
Սարգսի տոնի հաջորդ օրն է։ Երեկ մեր առաջ
պարզվեց Ս. Սարգսի քրիստոնեական կյանքի
և գաղափարական գործունեության պատմու-
թյունը, լեցուն զոհաբերության մը, նվիրման և
սիրո ոգով։

Ս. Սարգիս առաքինի և քաջ զորավար էր,
մեծ հաղթանակների փառքով պսակված, որը
համարձակության քարոզում էր Ավետարա-
նը և կործանում բազիլիկները։ Նա նախընտրեց
իր հավատի, իր համոզման և իր կրքերի հա-
մար արհամարհել աշխարհիկ ճոխություննե-
րը, պատիվներն ու հաճույքները, և Քրիստո-
սի սիրուն համար նահատակություն հանձն
առավ, որպեսզի հաղթանակեն ճշմարտու-
թյունը և արգարությունը։

Քրիստոնեական Եկեղեցու պատմությունը
լեցուն է հավատով վառված այսպիսի սրբերի
նահատակությունների սրտառուլ զոհաբե-
րով, որոնք իրենց ըմբռնումների և իրենց
տեսիլների համար արժանացել են մարտիրո-
սության պսակին։

Սկսած առաջին մարտիրոս Ս. Ստեփանոս
նախասարկավագից, այնուհետև երանելի ա-
ռաքյալները, Եկեղեցու մեծ հայրապետները,
վարդապետները, ժողովրդի ծոցից դուրս ե-

կած փառավոր փառանք մարտիրոսների,
«հեղին զարիս» իւրեանց ի նորոգումն Եկե-
ղեցւոյն։

Հայ Եկեղեցու պատմությունը ևս բացվում
է նահատակության արքայադուստր Սան-
դուխտի, որը եղավ առաջին նահատակը Հա-
յաստանի և առաջին վկայուհին քրիստոնեու-
թյան։ Մի՞թե մեր հավատի երկրորդ լուսա-
վորիչը, Ս. Գրիգոր Պարթև հայրապետը, բա-
զում շարչարանքներ հանձն լառա՞վ, չճաշա-
կե՞ց բազմապիսի շարչարանքներ, որպեսզի
կարողանա իր կենդանի նահատակության և
իր տեսիլքով Աստվածորդուն իջեցնել Վաղար-
շապատ, հիմնելու համար հայրապետանիստ
Աթոռը Ս. Էջմիածնի։

Նույնն էր ոգին Վարդանանց հերոսամարտի
բոլոր զինվորյալ մանկանց։ Նույն հափշտա-
կության և նպատակով Ղևոնդյանք զոհվե-
ցին ռվասն Ցիսուսի և վասն հայրենեաց...»

Հայ ժողովրդի և մեր Եկեղեցու պատմու-
թյունը անցյալում իր բոլոր էջերով եղել է
լույսի, հավատի, վսեմ գաղափարների հա-
մար կատարված նահատակության հերոսա-
պատում։

Հայ հավատացյալ ժողովուրդը առատորեն
թափել է իր արյունը, հաճախ ազգովին մար-
տիրոսանալով, ու խալը ուտին, բարձրացել
է անմահության Գողգոթա, արյունվա, վի-
րավոր, բայց ապրելու վճռականությանը լե-
ցուն։

Այսօրվա իմ քարոզի բնաբանը դեռևս ոչ մի ժողովրդի և եկեղեցու պատմության մեջ տառապանք չի ապացուցվել, որքան մեր Եկեղեցու պատմության մեջ. «Արիւն մարտիրոսաց՝ սերմն քրիստոնէից»:

Դարձնենք մեր հայացքը 50 տարի ետև, դեպի մեր ժողովրդի մեծագույն և հավաքական նահատակության օրերը, ապրիլյան եղեռնի օրերը:

Դեռ վերապրողներին սրտի մեջ որքան անուշ մեղեքներ կան, որոնք գերեզման չունեցան, նահատակվեցին, որպեսզի բարձր պահվի մեր բնական կան սուրբ օջախը, որպեսզի պայծառ մնա հայի հավատի տունը:

Նրանք իրենց պարտականությունը կատարեցին արյունով, նահատակությամբ և ընկան գաղափարի և հավատի դաշտի վրա, որպեսզի մենք մնանք և ապրենք, որպեսզի մնա Հայ Եկեղեցին, հնչի մնարոպարույր մեր լեզուն, որպեսզի հող ունենանք, որպեսզի նոր մշակույթ կերտենք:

Մեծ նպատակները մեծ զոհեր են պահանջում:

Այսօր, իբրև Եկեղեցի և ժողովուրդ, մեր կյանքի գոյությունը պարտական ենք մեր նահատակների արյան և զոհողության:

Այս պահուս, իմ բնաբանի հետքերով, իմ մտածումը գնում է Եղեկիսյան տեսիլքին: Դաշտն ամբողջ ծածկվել է մարդկային կմախքներով: Մորթվել է ստեղծագործ, աշխատունակ մի ժողովուրդ: Բայց ահա ոսկորներով լեցուն այդ դաշտին մեջ փչում է հարության շունը, ոսկորները իրար են միանում, կանգնում, հագնում են միս և ստանում արյուն և մեռելության դաշտը վերածվում է կենդանության, կյանքի կանաչ անտառի:

Այդ մենք ենք, մեր Եկեղեցին, մեր հայրենիքը, հայ ժողովուրդը, իր Մայրենի հողին վրա և Սփյուռքի բոլոր անկյունների մեջ վերածնած, վերընծալով 1915 թվականի նահատակությունից հետո:

Երանելին Օգոստինոս շատ իրավացի կերպով շնչում է. «Արիւն մարտիրոսաց՝ սերմն քրիստոնէից»:

Այսօր, դարեր վերջ մեծ նահատակություններից, մի անգամ ևս համոզվում ենք այս խոսքերի ճշմարտության: Ինչքան նահատակություններ ունեցավ Քրիստոնեական կրոնը, այնքան ուժեղացավ Հռոմի հրապարակներում այրվեցին, բզկտվեցին, հողատվեցին

բյուրավոր հավատացյալներ և դրա փոխարեն հավատը տարածվեց ժողովրդի մեջ, անկարողներ թափով:

Ինչքան ճիշտ է սուրբգրական խոսքը, Եկեղեցու հավիտենականության համար ասված. «Դրունք դժոխոց ղևա մի՛ յաղթահարեսցեն» (Մատթ. ԺԶ 18):

Ոսկերեքան հայրապետը արդարորեն գրում էր. «Հավանական է, որ արևը սպառվի, բայց մարտիրոսների արյան վրա հիմնված Եկեղեցին երբեք չի ծերանա»:

Ամեն սերունդ տարբեր կերպով է վճարում իր պարտքը Աստուծո և իր ժողովրդին: Այսօր մեզանից նահատակություն չի պահանջվում, բայց նույնքան դժվար է պահել, աճեցնել այն ավանդները և ոգեկան արժեքները, որոնց համար եղան անցյալում այդ նահատակությունները:

Մեր Եկեղեցու մարտիրոսները նահատակությամբ պահեցին Եկեղեցու ավանդները, հավատը, ուղղափառությունը, մենք այսօր սիրով և հավատարմությամբ պետք է պահենք դրանք, գուրգուրանք դրանց վրա, մեր աչքի լույսի պես պահենք և հավատարիմ մնանք այդ ավանդներին և ասենք, որ մեր համոզմունքներից, մեր Եկեղեցուց, մեր հայրենիքից և մեր ավանդություններից ոչ մի ուժ չի կարող մեզ բաժանել:

Մեր նախնիք ավանդեցին այն բոլոր սրբությունները, մենք ևս նույն պատասխանատվությամբ պետք է անաղարտ պահենք և հանձնենք ապագա սերունդներին:

Այս է ահա օրվա տոնի պատգամը:


Թո՛ղ Աստված մեզ բոլորիս պարզևի սուրբ Սուրբի հավատից կայծ, մեր նահատակ բոլոր սրբերի նվիրումից նվիրում, որպեսզի առանց թերանալու կարողանանք մեր սուրբ նախնիքներից և մարտիրոսներից ավանդ մնացած հավատը, Եկեղեցին և մշակույթը անթափանց և անկորուստ պահել:

Թո՛ղ Լուսավորչի կանթեղը լուսավորի և ջերմացնի մեզանից ամեն մեկի միտքն ու սիրտը, որպեսզի այդ լույսով առաջնորդվենք մեր աստեղական կյանքի փորձություններով լեցուն ճանապարհում:

Թո՛ղ Ս. Սարգիսը իր զորականների ահեղ գնդով օգնության հասնի շարք խափանելու, մեզ փարատելու մեր կյանքի փորձությունների պահին:

Ամեն:





ՔՈՐԳՈՄ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԱՅՏԱՐՅԱՆ

Մ Ե Մ Խ Ն Ջ Ո Ւ Յ Զ Ը

Քրիստոսի առականները իմաստասիրական ու բարոյախոսական գոհարներ են: Կարողութեանդ չափով կրնաս խորասուզվիլ անոնց մեջ և լեցվիլ իմաստի ու նպատակի լույսով, սիրտդ վսեմացնող խորհուրդներով: Պարզ են անոնք, եթե նայիս մականեռնային աշքով, կխորանան որքան լայն ըլլան փորձառութիւնդ, գիտութիւնդ և աշխարհաճանաչողութիւնդ:

Առականներու գեղեցկութիւնը հոն է, որ ամեն մարդ իր չափով կօգտվի: Առակը սովորական ընթերցող մարդուն նույն իմաստը չի պարզեր, ինչ որ կպարզե իր հոգին մշակած ու ինքզինք պայծառակերպած մարդուն: Որովհետեւ իմաստը ուժ է, զորութիւն է և կրնա վնասել անոնց, որոնք դեռ պատրաստ չեն: Կարելի չէ մութն անմիջապէս պայծառ լույսի մը մեջ ելլել, որովհետեւ տեսողութիւնդ կկորսնցնես. պետք է պատրաստվիս, և աստիճանաբար:

Եվ առականները այս բանն է որ կրնեն նախ կպատրաստեն ու կկեդրոնացնեն ուշադրութիւնդ առարկայական պատկերներով ու հետո կամուրջ մը կնետեն մտքիդ ու իրականութեան միջև, խորհուրդի աշխարհին և առարկայական աշխարհին միջև, և տեսանելին կկապեն անտեսանելիին, անցավորը անանցին, և այդպէս միտքդ կլեցվի իմաստի լույսերով:

Տեսնք որքան պարզ է սա առակը: Հարուստ մարդ մը մեծ խնջույք մը պատրաստեց ու շատեր հրավիրեց ընթրիքին: Որոշալ ժամուն իր ծառան ղրկեց հրավիրյալներուն, որպէսզի դանոնք կանչէ ընթրիքի: Սառան գնաց ու ըսավ հրավիրյալներուն, «Ամեն ինչ պատրաստ է, եկե՛ք, խնջույքը և ճաշը վայելեցե՛ք»:

Բայց զարմանալի բան մը պատահեցավ, անոնցմէ ամեն մեկը սկսավ հրաժարիլ, լքեցանքներ հնարելով: Անոնցմէ մեկը, օրինակի համար, ըսավ. «Ես չեմ կրնար գալ, որովհետեւ ագարակ գնեցի և պետք է որ երթամ ու տեսնեմ զայն»: Ուրիշ մը ըսավ. «Կաղաչեմ, դիւ հրաժարած համարեմ, որովհետեւ հինգ լուծ եզ գնեցի ու պետք է երթամ փորձեմ գանոնք»: Ուրիշ մը ըսավ. «Եղբայր, ես ալ չեմ կրնար գալ, որովհետեւ կիւն առի»:

Սպասավորը հուսահատ վերադարձավ և հիրող պատմեց ամեն ինչ: Այն ժամանակ տանուտերը, ներքնապէս բարկացած իր հրավերը մերժված ըլլալուն համար, քիչ մը խորհելէ ետք ըսավ իր ծառային. «Շուտով հրապարակը իջիւր և հրավիրե՛ կաղերը և կույրերը, թող անոնք վայելեն ընթրիքը, քանի որ հրավիրվածները անարժան գտնվեցան»:

Եվ սպասավորը գնաց ու հրամանը կատարեց:

Ավելտարանի մեջ մտքի և հոգիի բարձրագույն վիճակները, ապրումները ներկայացված են հարսնիքի ու խնջույքի բառերով:

Ու հրավերը կերթա քնականաբար այն մարդոց, որոնք քախտավորութիւնը չեն ունեցած այդ հոգեկան բարձրութեան հասնելու, զայն բժշակելու, վայելելու:

Առակի առաջին մարդը կներկայացնէ այն դասակարգը, որ զբաղած է առարկայական, նյութական կյանքով և կորսված է նյութին մեջ, և անկարելի է անոր համար բարձրանալ հոգեկան կյանքի բարձունքներուն: Ան կսողա և թեւը չունի թռչելի:

Առակի երկրորդ մարդը կներկայացնէ հաճույքի, զգացումներու և հուզումներու ձեռքը գերի դարձող մարդոց դասակարգը, որ կապված է զգայարանական ապրումներու, կերու-

խումի, սեռային հաճույքներու, փառասիրությանց, գովաբանությանց, կույր-ընազդներու: Մենկ խոսքով՝ ան կայաշտե եզր, որ կխորհրդանշե կիրքերու և կենդանական մղումներու աշխարհը: Այսպիսի մեկն ալ անշուշտ չի կրնար մասնակցիլ խնջույքին, թեև հրավիրված ըլլալ:

Առակի երրորդ մարզը կենդանայացնե ընկերային շղթաներով կապված մարդոց դասը, որ աղատ չէ և պայմանավորված է իր շրջանակով: Աստիճան մը ավելի խորացնելով իմաստը, կինը կխորհրդանշե միտքը, որ հղի է գաղափարներով, վարդապետութիւններով: Այսպիսի մեկը շատ դժվարաւ կրնա մտքին անցին կարելիութիւններ տեսնել և նոր լուստի մը մեջ ելլել:

Այս երրորդ դասակարգը հասած է մտքի մակարդակին ու կեցած է հոն, չէ առած Աստուծո հոգին: Կին է առած, շնչավոր, բանավոր առարկա մը, բայց զուրկ է դեռ այն հոգիին, որ իրեն պիտի տա արժեքի և իմաստի ճանաչողութիւն: Եվ ասիկա կուգա Աստուծո հոգիին, կամ, ինչպէս կըսե Պողոս առաքյալ, մեր մեջ գտնվող Քրիստոսի մտքին. «Մենք Քրիստոսի միտքը ունինք»:

Առակը հոս չի վերջանար: Առակի կոչնատերը, որ հարուստ էր իր հոգեկան աշխարհով, իր սպասավորը կըրկէ հրապարակը, ուր հոգերն զերծ մարդիկ հաճախ կանցնեն իրենց մամանակը, ու կըսե անոր. «Գնա, հոս խնջույքի բեր աղքատները. — այսինքն անոնք, որոնք նյութական ստացվածքներու շղթաներով կապված չեն, — գնա, բեր խեղճերն ու կաղերը, — այսինքն անոնք, որոնք սիրտը չի թրթորար աշխարհային հրապույրներով, — գնա, բեր կույրները»:

Եվ գարմանալին հոն է, որ երեք դասակարգը մարդիկ կհակադրվին նախկին երեք դասակարգներուն: Այսպէս, ագարակ առնողին տեղ կհրավիրվին աղքատները, և շատ դուրավ կպարզվի այս հրավերին իմաստը, երբ

հիշենք Հիսուսի խոսքը՝ «Երանի՜ աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից»:

Եզներն գնողին տեղ կհրավիրվին բոլոր կաղերն ու հաշմանդամները, այսինքն անոնք, որոնք իրենց նկարագրին մեջն սպաննած են կամ ամուսնային և մատնած գիրքնք հաճույքներու աշխարհին կապող ողակները:

Եվ կին առնողին տեղ կհրավիրվին կույրները, այսինքն անոնք, որոնք կույր են աշխարհիկ կյանքին դեմ, բայց տեսանողներ են, երբ կնային իրերու խորը, ոգեկան արժեքներու աշխարհը: Անոնք կույր են աշխարհի հրապույրներուն հանդեպ, բայց հստակորեն կտեսնեն հոգիի ու սրտի աշխարհը:

Հիսուս տեսանողներուն ու լսողներուն համար ըսավ, մեքերելով Ծաւի մարգարեին խոսքը. «Լսելով պիտի լսեք ու պիտի չիմանաք և տեսնելով պիտի տեսնեք ու պիտի չտեսնեք: Բայց երանի ձեր աչքերուն, որ կտեսնեն ու ձեր ականջներուն, որ կլսեն»:

Տեսնել չի նշանակեր իր ուղեղին մեջ ցուցումներ ընդունիլ, ալ կնշանակե իմանալ, հասկնալ, արժեւորել:

Եվ երբ սպասավորը կբերե այս բոլոր պատրաստ մարդիկը, կտեսնե, որ դեռ բավական աթոռներ պարապ են: Եվ Տերը, որ Քրիստոսն է, կըսե. «Ե՛ւ ի ճանապարհս», գնա՛, բեր՝ անոնք, որոնք ճանապարհին վրա են, այսինքն անոնք, որոնք իմ կյանքով կապրին, քանի որ Ես եմ ճանապարհը: Ու գնա՛, նաև ցանցերը, այն վայրերը, ուր իմ ծառաները Տիրոջ գործով զբաղած են ու կհոգնին, կտանջվին ու կտառապին «վասն անուան իմոյ», այս բոլորը բե՛ր ու մեր սեղանը թող լցնվի»:


Եվ ի՞նչ հիանալի է Հայ Եկեղեցւոյ շարականը.

«Ո՛ր կազմեցեր սեղան խորհրդոյ

Եւ արբուցե՛ր յանմանական բաժակեղ...»:

Երանի՜ անոնք, որոնք կրնան այդ ընթրիքին ներկա ըլլալ:





Գ. ՀԱՍՈՐԳԱՆ

ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԵԸ՝ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ

Մեր ազգային ավանդությունը և պատմական որոշ գրավոր տվյալներ ինքնուրույն հայերեն շարականների և հոգևոր երգերի հին եղանակների գյուտը և կարգավորումը արդարորեն վերագրում են Ս. Սահակին և Ս. Մեսրոպին։ Գրերի գյուտից հետո, երբ հիմք դրվեց մեր գրավոր մատենագրության, անհրաժեշտ էր ազգայնացնել նաև Հայ Եկեղեցու ժամերգությունը։ Այդ գործի համար հարկավոր էր նախ և առաջ ունենալ ազգային հոգևոր երգեր։ Քրիստոնեության սկզբի դարերում, ինչպես մյուս քրիստոնյա ժողովուրդների, այնպես էլ Հայոց Եկեղեցում, առանձին, ազգային հոգևոր երգեր չեն եղել, այլ դրանց նախորդել են ութ կանոն սաղմոսները, ըստ որում ժամերգության հիմնական մասը սաղմոսերգությունն էր։

Երբ հիմք է դրվում մեր ազգային գրականության, ժամերգության մեջ ընդունված և օտար լեզվով երգվող վերոհիշյալ սաղմոսները աստիճանաբար փոխարինվում են նոր, փոքրիկ, բայց ազգային հոգևոր երգերով։ Ինչպես Հայ Եկեղեցու մյուս արարողություններն ու ծեսերը, այնպես էլ հոգևոր երգը, Եզարի առաջին տասնամյակներից սկսում են ազգայնանալ, նոր հորինված երգերը կատարվում էին Ս. Գրքի օրհնություններից և

կոչվում էին կցուրդ։ «Այդ նոր երգերը, — ասում է պրոֆ. Մանուկ Արեղյանը, — իրենց նյութն առնում են Աստվածաշնչից և սաղմոսների ու մարգարեական օրհնությունների քնարական տարրը որոշում է նրանց ոգին»։ Դրանք հորինվում են նույնիսկ Ս. Գրքի բառերով։ Այդպես է եղել հոգևոր երգի ծագումն ու վիճակը Ընդհանուր Եկեղեցու մեջ այն ժամանակ, երբ լինում է հայոց գրերի գյուտը և հիմք է դրվում մեր գրականությանը¹։ Ահա այդ կցուրդ կոչված երգերի հիմքի վրա են կառուցվում ու զարգանում մեր ազգային հոգևոր երգերը՝ շարականները։

Որոշ ժամանակ անցնելուց հետո, երբ այդ կցուրդները դառնում են ինքնուրույն, ընդունվում են ժամակարգության մեջ, արդեն ութ կանոն սաղմոսների փոխարինում են ութ տեսակ շարականներ՝ ութ ձայնով և երկու ստեղծումով։ Այդ ութ կանոն շարականները հետևյալն են. «Օրհնություն», «Հարց», «Մեծացուցի», «Ողորմեա», «Մանկունք», «Տէր յիրկնից», «Ճաշու» և «Համբարձի»։

Շարականներից հետո, աստիճանաբար առաջ եկան և զարգացան հոգևոր երգերի ուրիշ

¹ Մ. Արեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», Ա, էջ 475.

տեսականներ ևս՝ տուգներ, գանձեր և ավետիսներ՝ իրենց առանձնահատուկ բովանդակությամբ ու կառուցվածքով, առանձին եղանակներով, որոնք երգվում էին հանդիսավոր ժամերգությունների ժամանակ։ Ահա այսպես ծագեց, զարգացավ ու ազգայնացավ մեր հոգևոր երգերի հարուստ տեսակը՝ իր բաղմազան, քաղցրահնչյուն եղանակներով։ Եթե հայոց բոլոր հոգևոր երգերի եղանակները միմյանց հետ գումարենք,— դրում է երաժշտագետ Կոմիտաս վարդապետը,— ուրեմն և շարականներինը կլինի 200-ը²։ Մեր առաջին շարականագիրներն են Ս. Սահակը և Մեսրոպ Մաշտոցը։ Երբ ձեռնարկվեց հայացնելու եկեղեցական ժամերգությունը, Մաշտոցը առաջինը դրեց Մեծ պահքի վեց շաբաթների ապաշխարության շարականները, իսկ Ավագ շաբաթի կարգը վերագրվում է Ս. Սահակին։ Բացի ավանդությունից, մի քանի ուրիշ գրավոր փաստեր էլ կան, որ վերոշիշյալ շարականները գրել է Ս. Մեսրոպը։

Մեր Շարակնոցը դարեւրի բնթացքում հավաքվել է բազմաթիվ ձեռագրերից և խմբագրվել մի քանի անգամ (Հովհաննես Մանգակունիս՝ Ե դարում, Հունընտիրը՝ է դարում, Ստեփանոս Սյունեցին՝ Ը դարում, ներսես Շնորհալին՝ ԺԲ դարում, Գրիգոր Տաթևացին՝ ԺԴ դարում և այլն)։ Ձեռագիր թե տպագիր Շարակնոցը ունեցել է մի փոքրիկ առաջաբան, ուր ցույց է տրվում, թե ե՞րբ, ո՞ր հեղինակը, ի՞նչ շարականներ է գրել։ Այդ առաջաբանի մեջ հենց սկզբից կարդում ենք. «Են Մեսրոպ գկարդն ապաշխարութեան»³։

ԺԲ դարի գրել Կարապետ եպիսկոպոս Սասնեցին իր «Յաղագս վարուց և մահուան Սուրբ և երջանիկ վարդապետին Մեսրոպայ թարգմանչի և ուսուցչի» երկի մեջ, Մեսրոպ Մաշտոցի գրած շարականների մասին ասում է. «Եւ շարարան եղանակ Ապաշխարութեան՝ ըստ թուոյ աւուրց պահոցն, զորս րնկայեալ երգէ զեկեղեցի սուրբ...»⁴։ Խաչատուր անունով գրիչը 1312 թվականին գրած մի հիշատակարանում հաղորդում է հետևյալը. «Կսւնովն Ապաշխարութեան յուս Մեսրոպ վարդապետի է ասացեալ»⁵։ Հիմնվելով ձեռագրերի և «Յալսմատուրք»-ի հաղորդածների վրա, հմուտ շարականագետ Հ. Գ. Ավետիսյանը իր «Բացատրութիւն շարականաց» բազմաթիվ տակ գրքում Մեսրոպ Մաշտոցին վերագրվող շարականների մասին խոսելիս գրում է.

«Մեծն Մեսրոպ ասաց զկարգն Ապաշխարութեան»⁶։

Վերջապես հենվելով մոտ 70 ձեռագրերի հաղորդումների վրա՝ շարականների մասնագետ Սահակ վարդապետ Ամատունին Մաշտոցի գրած շարականների խնդիրը բնեւիս գալիս է հետևյալ եզրակացության. «Շարականների հեղինակների գրական գործերին քաջածանոթ գրիչները Ապաշխարութեան շարականները միաձայն րնծայում են Մեսրոպ թարգմանչին»⁷։

Ինչպես տեսնում ենք, թե՛ ավանդությունը և թե՛ գրավոր տվյալները հաղորդում են, որ Ապաշխարության ամբողջ կանոնը գրել է Մեսրոպ Մաշտոցը՝ ըստ որում այդ շարականների տեքստերի հետ հորինել է և դրանց եղանակները ու կարգավորել։ Այդ մասին շարականի առաջաբանը հաղորդում է հետևյալը. «Նախ Սուրբ Իսահակ և Սուրբ Մեսրոպ ասացին զուրբ եղանակաւոր ձայնս և զերկու ձայն ստեղծած»⁸։ Բայց արդյո՞ք Ապաշխարության կանոնի մեջ մտնող բոլոր շարականները միայն Մեսրոպ Մաշտոցն է գրել։ 9-ը՝ որ այդ կանոնի մեջ մտնող բազմաթիվ շարականներ ձեռով ու բովանդակությամբ շատ են տարբերվում։ Երկրորդ, որ կանոնը Հայոց եկեղեցու ժամակարգության մեջ մտել է Ը դարում, Ստեփանոս Սյունեցու ձեռքով, հետևաբար, Ապաշխարության ամբողջ կանոնը Մեսրոպ Մաշտոցը չէր կարող գրել Ե դարում։

Եթե մեր ավանդությունը և գրավոր որոշ փաստեր Ապաշխարության շարականների ամբողջ կանոնը վերագրում են Մեսրոպ Մաշտոցին, ապա պետք է ենթադրել, որ այդ կանոնի մեջ մեր նախնիները նկատի են ունեցել գլխավորապես «Շարք»-երը, «Ողորմեա»-ները և «Տէր յերկնից»-ները, որոնք իրոք ապաշխարողական են և պատկանում են Մեսրոպ Մաշտոցի գրչին և մեր բանաստեղծության մեջ առաջմ այդպես էլ ընդունված է⁹։

Ինչպե՞ս բացատրել այս անհամապատասխանությունը։ Եթե Մաշտոցը գրել է միայն «Ողորմեա»-ները, «Շարք»-երը և «Տէր յերկնից»-ները, ապա ավանդությունը և վերևում հիշված գրավոր աղբյուրները ինչո՞ւ ամբողջ կանոն են հատկացնում Մեսրոպին։ Հարց է առաջանում՝ թե՛ ապա ո՞վ է գրել Կանոնի մնացած տեսականները՝ «Օրհնութիւն»-

² Հ. Գ. Ավետիսյան, «Բացատրութիւն շարականաց», Կենտրոն, 1990, էջ 2։

³ Սահակ վարդապետ Ամատունի, հիշված աշխատությունը, էջ 81։

⁴ «Յալսեալ շարական», էջ 3։


⁵ «Արարատ», 1912 թ. և Մ. Արեղյան, հիշված աշխատությունը, Ա. էջ 175։

⁶ Ս. սուրկովազ Սոգոմունյան, «Արարատ», 1894 թ., էջ 280։

⁷ «Յալսեալ շարական», էջմիածին, 1883 թ., էջ 3։

⁸ Սահակ վարդապետ Ամատունի, «Հին և նոր պատկանոն շարականներ», էջմիածին, 1909, էջ 81։

⁹ Նույն տեղում։



ները, «Մանկունք»-ները, «Մեծացուցէ»-ները և «Համարածի»-ները¹⁰։

Սկսենք օրհնութիւններից։ Ապաշխարութեան ութ ձայնի օրհնութիւնները շատ են տարբերվում տեղական և սրբերի տեմերին հատկացված օրհնութիւններից։ Վերջիններս որոշակի իմաստ ունեցող, մեծ մասամբ ինքնուրույն շարականներ են։ Քայց Ապաշխարութեան օրհնութիւնները ինքնուրույն գործեր չեն, այլ տարբեր շարականների պատկերներն են՝ հատկապէս (5—8 հատված և ամեն հատվածը՝ 3—4 տնից բաղկացած) միացութիւն են։ Ի՛նչպիսի հատկանիշներից, ե՞րբ և՛ գրած շրականներից են կազմված դրանք։ Ապաշխարութեան օրհնութիւնները Մեսրոպ Մաշտոցի գրածներն են, կազմված Ապաշխարութեան կանոնի մեջ դրված «Ողորմեա»-ներից, որոնց բոլորի հեղինակն էլ Մեսրոպ Մաշտոցն է։ Ահա փաստերը։ Մեծ պահոց առաջին ձայն (ած) օրհնութիւնը կազմված է առաջին շարաթի Ապաշխարութեան 6 «Ողորմեա»-ներից, որոնք են՝ «Հայր բազում ողորմա», «Աստուած բազում ողորմա», «Ի նեղութեան իմում», «Ջրման իմոյ զարտասուած», «Վտանգիմ ի բազմութենէ մեղաց» և «Ողորմեա ինձ Աստուած»։ Սրանք միացել և կազմել են Ապաշխարութեան կանոնում եղած օրհնութիւնը։

Այսպես են և մնացած բոլոր 7 օրհնութիւնները, որոնցից երկրորդը կազմված է երկրորդ շարաթի 7 «Ողորմեա»-ներից. երրորդը՝ երրորդ շարաթի 5 «Ողորմեա»-ներից. չորրորդը՝ այս շարաթի 8 «Ողորմեա»-ներից. հինգերորդը՝ 7, վեցերորդը՝ 7, յոթերորդը՝ 6 և ութերորդը՝ 6 «Ողորմեա»-ներից։

Այսպիսով, կանոնի մեջ մտնող Ապաշխարութեան այս 8 օրհնութիւնները ուրիշ բան չեն, եթե ոչ Մեսրոպ Մաշտոցի «Ողորմեա»-ները։ Ուրեմն, օրհնութիւններն էլ պատկանում են Մեսրոպի գրչին, հետևաբար նա գրել է Ապաշխարութեան կանոնի ոչ թե երեք, այլ յոթ տեսակի շարականներ՝ եթե օրհնութիւնը այստեղ նկատի առնենք որպէս առանձին տեսակ։ Իսկ մնացած տեսակների՝ «Մեծացուցէ»-ների, «Մանկունք»-ների և «Համարածի»-ների մասին կիսովի իր տեղում։

Ցավոք պետք է ասել, որ Մեսրոպի գրական, մանկավարժական և առհասարակ հայ մշակութային մատուցած ծառայութեան մասին խոսելիս, մեր բանասերներն ու գրականագետները աչքաթուղ են արել նրա գրած շարականները, որոնք մի քանի տասնյակների են

հասնում։ Մաշտոցի գրած հոգևոր երգերի վերաբերյալ առաջին անգամ պրոֆ. Մանուկ Աբեղյանն է գրել 1912 թվականին «Արարատ» ամսագրում, այն էլ ոչ թե բոլորի, այլ միայն «Ողորմեա»-ներից մի երկուսի մասին։ Նթն ընդունենք, որ Ապաշխարութեան կանոնում եղած շարականներից Մեսրոպ Մաշտոցի գրչին են պատկանում միայն վերոհիշյալ 3 տեսակները («Հարց», «Ողորմեա» և «Տէր յերկնից»), այս դեպքում էլ նրա գրած շարականների թիվը հարյուրից ավելի կլինի։ Ապաշխարութեան կանոնի մեջ կա 44 «Հարց», 44 «Ողորմեա» և 44 էլ «Տէր յերկնից»։ Երեքը միասին 132 շարական։ Սրանցից ամեն մեկը բաղկացած է 3 տնից, իսկ ամեն մի տունը՝ երկուսից մինչև հինգ տողից։

Արդ, նախ ծանոթանանք Մեսրոպ Մաշտոցի գրած վերոհիշյալ շարականների ձևին, բովանդակութեան և արվեստին, ապա խոսենք Ապաշխարութեան կանոնի մասին ընդհանրապես։

«Հարց»-եր. — Ամեն մի «Հարց»-ը կազմված է երեք փոքրիկ տնից և գործատնից։ Վերջինս «Հարց»-ի մի մասն է կազմում և նույնպես բաղկացած է երեք տնից։ Ոչ միայն Աղաշխարութեան, այլև մեր Շարականոցի բոլոր կանոններում եղած «Հարց»-երն ունեն իրենց հարասութիւնն ու դարձը։ Հարասութիւնն սկսվում է սկզբից այսպես, «Օրհնեալ ես Տէր Աստուած հարց մերոց բնաբանով և ապա երգվում «Հարց»-ի երեք տները։ Դարձերը կրկնվում են ամեն մի տան վերջում՝ «Աստուած հարցն մերոց» բառերով։ Ահա մոտավորապես այսպես են կառուցված «Հարց»-երը։

Ապաշխարութեան կանոնի բուն «Հարց»-ի երեք տները սովորաբար, մեծ մասամբ պարունակում են Քաթիկոնի երկու մանկանց պատմութիւնը։ «Հարց»-երն ունեն գլխավորապես օրհնաբանական և ապաշխարողական բնույթ, իսկ «գործատուն»-ը՝ ներբողական և փառաբանական։ Շատ հաճախ բուն «Հարց»-ը և «գործատուն»-ը ներքին իմաստով, կամ շատ քիչ, և կամ երբեմն էլ բոլորովին իրար հետ չեն կապվում, սակայն որպէս բնորոշված կարգ, «գործատուն»-ը միշտ երգվում է «Հարց»-ի հետ, հաճախ տարբեր եղանակով ու տեմպով։ Ահա Մեսրոպ Մաշտոցին ընծայված Ապաշխարութեան «Հարց»-երից մեկը, իր «գործատունով».

Բուն «Հարց»-ը.

Որ ապրեցուցեր զերիս մանկունսն ի հեռոցին,
Եւ զիս ապրեցոյ յահագին հրոյն.
Աստուած, հարցըն մերոց։

Որք երգով օրհնութեամբ
Ըզհուրն ի ցօղ փոխեցին.

¹⁰ Պետք է ասել, որ մյուս կանոնների մեջ մտնող «Մաշտոց» կոչված շարականները Ապաշխարութեան կանոնի մեջ չեն մտնում, որոնք այս կանոնն ունի ոչ թե 8, այլ 7 տեսակ շարական։

Եւ զթաղաւորն յամօթ արարին.

Ընդ եռսին սրհնեմք ըզքեզ.

Տէր Աստուած հարցն մերոց:

Աստուած, հարցն մերոց, զովեմք ըզքեզ.

Եւ տուանք ըստ իմացոյցանմբ.

Որ զՄիաժինդ առաքեցեր՝ փրկել ըզմեզ.

Տէր Աստուած հարցն մերոց:

«Գործատուն»-ը.

Միարանութեամբ տուք ըզփառս.

Եւ բարձր արարէք ըզնա յախտեան:

Որ ի բարձունքս բնակեալ է.

Ըզխոնարհքս տեսնուիին.

Միարանութեամբ տուք ըզփառս՝

Եւ բարձր արարէք ըզնա յախտեան:

Փաճանայք և պաշտօնեայք.

Երկտասարդք և կուտանք.

Անդադար զԱստուածն Աստուծոց, զովեցէք.

Եւ բարձր արարէք ըզնա յախտեան¹¹.

Թեև առաջին հայացքից թվում է, թե «Հարց»-ի և «գործատուն» մեջ մտքի կապը քաջակայում է, բայց առաջինի բովանդակության վարդապետական-օրհնարանական ցաղափարները միահյուսվելով երկրորդի փառարանական կողմի հետ՝ «Հարց»-ին տվել են ապաշխարողական, խնդրողական բնույթ: Սակայն Մեսրոպ Մաշտոցի «Հարց»-ները այդ բնույթն ունենալով հանդերձ, միաժամանակ ունեն նաև գեղեցիկ, ազդու պատկերներ: Մաշտոցը թեպետ մեր առաջին շարականագիրն է, որը նոր էր հիմք դնում մեր հոգևոր բանաստեղծության, այնուամենայնիվ, նա համադրելով ապաշխարողական գաղափարը գեղեցիկ, պատկերավոր ձևերի հետ, վարպետորեն կարողացել է արտահայտել իր մտքերն ու զգացմունքները՝ մերթ ուղղակի և մերթ էլ այլարանական պատկերներով: Ըստ վերևի «Հարց»-ի՝ Թաքելունի երեք մանկունքը¹² ոչ միայն խունկ լին մատուցել նարուզողոնոսոր արքայի շինած կուռքի ոսկե պատկերին, այլև, ասում է շարականը, «Ջհուրըն բորբոքեալ մանկունքըն հաւատով շիջուցին»: Որ սուրբնուցերս բառերով սկսվող այս «Հարց»-ի մեջ, ինչպես վերևում տեսանք, այդ նույն մանկունքը ահեղ, բորբոքված բոցերում չղած պահին իրենց

Երզով օրհնութեամբ ըզհուրն ի ցող փոխեցին.

Եւ ըզթաղաւորն յամօթ արարին:

Մյուս տան մեջ բանաստեղծը, դիմելով բոցերից երեք մանկանց հրաշքով ազատող Հիսուսին, ասում է.

Որ ահաւոր ցոյով զօրութեամբ

Յօղս ցողաւորս փոխեցիր զբոց հեռցին:

Շարականի մեջ երկու դեպքում էլ բնությունից վերցված կենարար ցողի պատկերը հակադրվել է կործանարար կրակին, որն սպառնում էր երեք մանկանց կյանքին: Այս տիպի գեղեցիկ պատկերների հանդիպում ենք նաև Սեդրեատներին մեջ: Մեծ պահոց երկրորդ շարաթվա ակ (առաջին կողմ)՝ «Օրհնեալ և փառաւորեալ» «Հարց»-ի «գործատուն» մեջ շարականագիրն ասում է, որ երբ Որդին երկնից իջել է բոցերի մեջ գտնվող երեք մանկանց օգնելու, այն ժամանակ քոց հնոցին ցողանայրս՝ «Հարց»-երի և «գործատներին» մեջ Մեսրոպ Մաշտոցի ամենասիրած պատկերն է եղել հուրը ցողի փոխվելու երևույթը: Օրինակ՝

Որ արարեր ողորմութիւն ի մէջ հեռցին

Եւ կենարար ցողով քս փրկեցեր զերիս

մանկունսն («Հարց»):

Յօղէր ըզքեզ ողորմութեան,

Երից մանկանցն ի հեռցին («Գործատուն»):

Որպեսզի ցույց տրվի, թե Թաքելունի երեք մանկունքը իրենց հավատով ինչպես են հաղթել նարուզողոնոսոր գոռոզ արքային՝ «Փառաւորեալ յաւիտեան» ազդեցիկ «Հարց»-ի երրորդ տան մեջ Մաշտոցը գրում է.

Ջհուրըն բորբոքեալ,

Մանկունքըն հաւատով շիջուցին.

Եւ պատկերի ոսկույ

Ոչ մատուցին խունկըս:

կամ՝

Որ ահաւոր քոյով զօրութեամբ

Յօղս ցողաւորս փոխեցիր զբոց հեռցին:

¹¹ Բույր մեջբերումները կատարել ենք 1833 թվականին էջմիածնում տպված «Ձայնքազ շարական»-ից:

¹² Եկեղեցական գրականության մեջ «մանկունք» բառը գործածվում է ոչ թե այժմյան առումով, այլ հավատաքայի, քրիստոնյայի իմաստով. ինչպես՝ «մանկունք եկեղեցոյ», «մանկունք հաւատոյ», «մանկունք Սիոնի» և այլն:

երրորդ շարաքի «Որ աշադր գորութեամբ»
«աղմբի» «Հարց»-ի վերջին տան մեջ շարա-
կանագիրը երկնքից փրկութիւն է խնդրում
նաև աշխարհիկ, մարմնավոր կյանքի համար.

Ընդ երանելի մանկանց երգեսցու՛ք՝
ի նեղաց մերոց փրկեալ ըզմեզ:

Հետագա դարերում, երբ մեր շարական-
ներն ընդանրապես անցնում են ձեռի և բո-
վանդակութեան դարգացման որոշ շրջան,
Մեսրոպ Մաշտոցի հոգեւոր երգերի հիման
վրա, «Հարց»-երը աղատվում են ոչ միայն
կցորդ լինելուց ու դրանց մեծ մասի միջից
գուրս է ընկնում Բաբելոնի երկից մանկանց
թեման, այլև դրանք հարմարվում են Ազգա-
լին Յկեղծի տերունական և մյուս տոնե-
րին և դառնում ինքնուրույն շարականներ
ու թեպետ այդ կարգի «Հարց»-երը մինչև
հիմա էլ պահել են սկզբի «Օրհնեալ ես Տէր»
և վերջի «Աստուած հարցն մերոց» բառերը,
սակայն դրանք բոլորովին էլ չեն կապվում
հավուր պատշաճի «Հարց»-երի բուն էութեան
հետ, այլ միայն ձևական բնույթ են կրում:

«Տէր յերկնից» շարականները.— Այժմ ծա-
նոթանանք Մեսրոպ Մաշտոցի այս բանաս-
տեղծութիւնների ձևին, բովանդակութեան
և արվեստին: Այս խմբին պատկանող գրե-
թե բոլոր շարականներն էլ կապվում են
«Հարց»-ի հետ, փառաբանական են, մեծ
մասամբ «Օրհնեցէք զՏէր» և «Բարձր արարէք
զնա յաւիտեան» դարձերով: Կառուցվածքի
տեսակետից «Տէր յերկնից»-ները բնորոշ են
նրանով, որ դրանցից մի քանիսը բաղկացած
են ոչ թե երեք, այլ յոթ տնից: Այսպիսի
հորինվածք ունեն «Տուր գիտութեան Աստուծոյ»,
«Որ ի վերդ ես քան զամենայն ըզմիտս» և
«Մի աստուածութիւն» երրորդութիւն անբա-
ժանելի շարականները: Սրանց մեջ կան և
այնպիսիները, որոնք սակայն իրենց բովան-
դակութեամբ չեն կապվում «Հարց»-ի արտա-
հայտած գաղափարի հետ: Որպես այդպիսին
վերջնենք երրորդ շարաքովա ավագ կողմ
(ԲԿ) ստեղծի «Հարց»-ի «Տէր յերկնից»-ը:
«Հարց»-ի գլխավոր գաղափարը երկից ման-
կանց պատմութիւնն է, որը, իհարկե, չկա
«Տէր յերկնից»-ի մեջ, այլ այստեղ առաջին
տան մեջ ցույց է տրվում, թե ինչպես է օրհ-
նաբանվում Աստված Հրեշտակների կողմից,
իսկ մնացածը խնդրվածքներ են: Այսպես.

Որ օրհնիս ի հրեշտակաց անդադար,
Հայր երկնաւոր, ընկալ զաղայանս մեր:

Երկրորդ տան մեջ արդեն խոսքը ոչ թե
Հորը, այլ Փրկչին է ուղղված, որից թողու-
թիւն է խնդրվում րազմաթիւ մեղքերի հա-
մար.

Առաջի քո անկանիմք փրկի՛ն:
Խնդրեմք զթողութիւն բազում յանցանաց մերոց:

Իսկ երրորդ տան մեջ մարդկանց հոգիների
գաղտնիքների խորքը ներթափանցող ու բա-
րացաշալտող Ս. Հոգու մասին է երգը: Չնա-
յած «Տէր յերկնից» շարականները բարեբա-
նական և փառաբանական ոճով են գրված,
տնիքի մի մասը բացակայություններ ու
հորդորներ են, սրանք էլ ըստ էութեան ունեն
ապաշխարողական ոգի.

Տէր, ըզլուր միառնգամ քո զալստեանդ,
կուայ և նրկեայ, զի ուսայ ի սրբոց պատուիրանաց,
եթէ զաս զու՛ ի դատել զերկիր:

Այնուհետև բանաստեղծը հետևյալ տան
մեջ բացատրում է, թե ինչու է դարհուրում
Փրկչի երկրորդ զալուստից և վերջին գատա-
տանից.

Տէր, յիշեցի զշար ըզգործս իմ և զարհուրեցայ,
Զի ձանեալ ճշմարտութեամբ զհաւուր և զանշառ
ըզքո պատաստան:

Բայց, թեև ինքը Տիրոջ պատվիրանները
խախտել է, կատարել է շար գործեր և դրա
համար էլ սարսափում է անսլառ դատա-
տանից, այնուամենայնիվ էլ ի հուսահատ-
վում.

Տէր, յիշեցի և ըզգործ արարչական սիրոյ քոյ,
Առ քո արարածս և ի քո զըթութիւնդ ապաւինեալ՝
Աղաչեմ, ողորմեա ինձ յաւուր այնմիկ,
Քրիստոս, արդար դատաւոր:

Պարզ երևում է, որ այս «Տէր յերկնից» կոչ-
վող շարականը կորցրել է իր տեսակին հա-
տուկ փառաբանական ոգին, էութեամբ գրե-
թե նույնացել է ապաշխարողական բնույթի
«Հարց»-երի հետ: Մենք ունենք շատ «Օրհ-
նութիւն»-ներ, «Հարց»-եր և «Տէր յերկ-
նից»-ներ, որոնք թեպետ անուշով և տեսա-
կով տարբեր են համարվում, սակայն էութե-
ամբ, ներքին բովանդակությամբ ու ոգով
գրեթե նույնն են: Ինչպես «Ուղորմեա»-ների,
այնպես էլ որոշ «Տէր յերկնից»-ների մեջ
ապաշխարողական կողմը ուժեղանալով,
դուրս է մղել փառաբանական ոգին և դարձել
խնդրվածքների, զղջման և աղայանքների
բանաստեղծություն, որտեղ արդեն պարզ
երևում է շարականի հեղինակը՝ իր ներքին
խռովահույզ ապրումներով, լացով ու հույ-
սով:

Ինչպես «Հարց»-երի, «Տէր յերկնից»-ների
մեջ էլ տեղ են գտել Երրորդութեան հետ կապ-
ված զավանաբանական գաղափարներ: Առա-
ջին օրվա «Տէր յերկնից» շարականում հեղի-
նակը գրում է.

Քեզ պայել Աստուած օրհնութիւն.
Ձհայր և զմորդի և Բզմորը Հոգիդ
Գոհութեամբ բարեբանեացուք:

Երրորդութիւն և Նրա միասնութիւնն նվիր-
ված ՎՏէր յերկնից»-ները բաժանաբար շատ են
Ապաշխարութիւնն կանոնում: Սրանք
մշուս շարականների և մնացած ՎՏէր յերկ-
նից»-ների հետ համեմատած՝ արվեստով
թույլ են և միապաղա՛ւ: Բայց սրանց մեջ
կան և այնպիսիները, որոնք գեղեցիկ են և
շատ նման են արձակ, լիրիկական բա-
նաստեղծութիւնն. օրինակ՝

Ընդ առաւօտս կանխեցիք յանդիման լինել քեզ,
Քաղաւոր իմ և Աստուած իմ:

Ընդ առաւօտս յուրեքն ծայրի իմում, Տէր,
Քաղաւոր իմ և Աստուած իմ:

Այսպիսի գեղեցիկ, քնարական մի երգ է
հինգերորդ շարքովի շորորդը ծայրի (ղծ)
«Հարց»-երից մեկը. այստեղ առաջին տան
մեջ բանաստեղծը օրհնարանում է երկնա-
բնակ Արարչին, որին ինքը ապավինում է.

Որ ի բարձունքս ընկեալ ես,
Եւ ի քեզ եմք ապաւինեալ:
Արարածք ամենայն օրհնեն զքեզ:

Երկրորդ տան մեջ էլ երգվում է, որ Արա-
րչը միաժամանակ ներդաշնակ և անհիշա-
լար է.

Որ մոլորելոց հովիւդ ես,
Դարձո ի մէջ զցասութեան քո...

Եվ վերջապես՝ Տէրը ծարավների համար
ջուր է և մեղավորների մեղքերի քափել՝ ի-
հարկն միայն ապաշխարութիւնն միջոցով.

Որ ծարաւելոց աղբիւրդ ես,
Եւ քափել ես մեղաւորաց:

Ինչպես «Հարց»-երը, այնպես էլ «Տէր յերկ-
նից»-ները դարերի ընթացքում մշակվել,
դարձել են բովանդակալից և ինքնուրույն,
անկախ երգեր:

«Ողորմեա»-ները. — Մեսրոպ Մաշտոցի
գրած հոգեւոր երգերի երրորդ խումբը Ողոր-
մեա»-ներն են, որոնք Դավթի սաղմոսների
ապաշխարողական ոգով են գրված: Սրանց
մեջ ավելի խոր և ուժեղ են հնչում զղջական
և աղաչական մոտիվները: Ողորմեա»-ները
սրտաբուխ, անկեղծ, հոգեհույզ երգեր են:
Եթե «Հարց»-երն ու «Տէր յերկնից»-ները մեծ
մասամբ կաշկանդված են Մ. Գրքի հարասու-
թյուններով ու դարձերով, ապա Ողոր-
մեա»-ները, նույնիսկ սկզբնական շրջանում,
անհամեմատ ազատ և ինքնուրույն են եղել՝
իրենց հորինվածքով, ոգով և ձևով: Այստեղ
ապաշխարողական մոտիվների մեջ միշտ

էլ երկացել է շարականագրի ներքնաշխարհը:
Պրոֆ. Մանուկ Աբեղյանը Մեսրոպ Մաշտոցի
գրած Ողորմեա»-ներին հետևյալ գնահա-
տական է տվել. «Այս կարգի շարականները
սրտահույզ ողբեր են և ամենից գեղեցիկ-
ներն են»¹³:

Շարականների այս տեսակի մեջ իշխողը
քնարական տարրն է: Այստեղ ամենից առաջ
տիրապետողը մեղքի և զղջման զգացմունք-
ներն են, որոնք երգերի մեջ հորդում են ամեն
մի տողի միջից.

Մեղք իմ բազում են յոյժ՝
Սանր են քան զաւաղ ծովու...

Բաց, Տէր ըզդուռն ողորմութեան,
Որ ողբալով՝ կարգամ առ քեզ...

Հեղ յիս ըզգըթութիւնդ քո
Բազումողորմ և մաքաւալի:

Մեղքը որպես աներևութ, շար թշնամի,
վերք է բացել երգողի հոգու մեջ: Նա ոչ միայն
մարմնով է տանջվում, այլ հոգով էլ է հի-
ւանդ: Եւ ահա հոգեկան և մարմնական այս
ծանր դրութիւնից ելք գտնելու համար, նա
դիմում է երկնավոր Հորը.

Վերաւորեցալ ես յաներևութ թշնամույն,
Բթիշլ հիւանդաց, բըժշկեալս զիմ զհիւանդութիւնս:

Այնուհետեւ, մի ուրիշ Ողորմեա»-ի մեջ
բանաստեղծը իր աղբոսանքները ուղղում է
Փրկչին: Աղաչանքների ու զղջման հետ միա-
ժամանակ, նա բացատրում է, որ ինքը մո-
լորեալ ոչխարներից մեկն է, պետք է գտնել,
փրկել իրեն և բժշկել հոգով.

Անկանիմ առաջի քո Փրիստոս, որ հովիւդ ես
բանաւոր հօտի,
Խնդրեա և զիս բղմոլորեալս, որ միայնդ ես բազմադութ:

Ըզմեզս իմ ցուցից քեզ Փրիստոս, որ բժիշկդ ես
հոգւոց և տէր կենաց,
Բժշկեա և զիմ զհիւանդութիւնս, որ միայնդ ես
մարդասէր:

«Ողորմեա» երգի մեջ, թեւեւ Փրկչը համար-
վում է բարեգութ, մարդասեր, բայց նա
հոգի է և ահեղ, և առանց ապաշխարութիւնն
ու արցունքների չի ների:

Հեղինակը հորդ արցունքներով դիմում է
Տիրոջը.

Ջղջման իմոյ զարտասուս արկանեմ առաջի քո
Փրիստոս...

Աղաչեմ ըզքեզ Տէր, պարզեալ ինձ՝
Ապաշխարութեամբ լուսեալ ըզմեզս իմ և ողորմեա:

Խորն է բանաստեղծի ապրած մեղքի զգա-
ցումը: Կյանքի ծովում նա մոլորվել է. նրան

¹³ Մ. Աբեղյան, հիշված աշխատութիւնը, Ա, էջ 491.

սպառնում է կործանում և դրա համար էլ նրա ողբերգությունը ավելի է խորանում: Իր հոգեհույզ վիճակը դրսևորելու համար, նա ծովից վերցնում է համապատասխան պատկերներ և այլարանություններ:

Մով կենցաղային հանապազ դիտարկումներ,
Մբբրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ:
Նաւապետ րարի, լեր անձին իմոյ ապաւնէ:

Կամ՝

Ի խորս մեղաց ծովու տարարեալ ծրփիմ,
Մով մեղաց իմոց զիս ալկոծէ:
Որ ես նաւապետ րարի, շնորհա ինձ

Նաւահանգիստ:

Եթե այստեղ զգացող հոգին ընկել է մեղաց անհատակ ծովի հորձանքներում, սարսափում է մրրկյալ ալիքներին կեր գնալուց, աղաչում է րարի նախապետին, որ իրեն անվտանգ հասցնի նավահանգիստ, ապացամաքի վրա էլ նա հանգիստ լի:

Այստեղ էլ աներևույթ, լար որսողը նրան քաշում է անելանելի որոցայթի մեջ, անտես թշնամին նետահարում է նրա հոգին, նա աղերսադիմ խնդրում է Տիրոջը:

Յաներևույթ թռչնամուտն և ի գաղտնի նետից:

պահեաւ:

Փըրկեա զիս... և Նորոգեա զիս հազով գիտութեան:

Իսկ ինչու՞ է զգացողը այսքան սարսափում, ո՞րն է այդ ողբերգության հիմքը, և որտեղից՝ են գալիս այդքան ծանր հոգեկան տանջանքները: Այդ ամենի պատճառը ահեղ դատաստանն է, որը և հանդիսանում է նրա բոլոր հոգեկան տանջանքների աղբյուրը: Այդ ահեղ օրվա երկյուղը ավելի ուժեղ և ավելի խորն է արտահայտվել «Ողորմեա»-ներից մի քանիսի մեջ:

Ի լըսի ըզմայն փողոյն ահագին աւուրն,
Յորժամ հարկանէ հրեշտակապետն և կոչէ ի
դատաստան,
Ողորմեա ինձ Աստուած:

Այդ սարսափելի, բայց և միաժամանակ արդարադատ ատյանում նստած է անաչառ դատավորը: Մարդիկ մեկ-մեկ մոտենում են նրան և հաշիվ տալիս իրենց աշխարհային գործերի մասին: Կատարվում է մանրամասն և սաստիկ քննություն:

Ի նստի քո յատենի, դատաւոր ահեղ,
Յորժամ ատենս հրափորձութեամբ զքննութիւն
որդոց մարդկան,
Ողորմեա ինձ Աստուած:

Զկասկածելով, որ երկնային դատավորը որքան խիստ ու անաչառ է, այնքան էլ բարեգութ՞ և ներողամիտ է, այնուամենայնիվ

նրան տանջում է այն միտքը, որ ինքը բոլոր մեղքերը կամավոր, գիտակցաբար է գործել, որը հայտնի է բոլոր գաղտնիքները տեսնող դատավորին ու դրա համար էլ, գուցե Տիրոջ կողմից լներվի ինքը և բաժին դառնա դժոխային հավիտենական հրին: Ահա այս կասկածներն ու տանջանքները նրան երբեք հանգիստ չեն տալիս:

Ջարտուրեալ դոգացաւ ամենամեղ անձն իմ,
Ահեղ քոց դատաստանաց յաներևույթ տանջանքն,
Քանզի կամաւ մեղեցեալ ի մեղս մեծամեծս,
Անդ կայ և մեայ ինձ անեղբելի պատուհասն:

Բայց րանաստեղծը, վարանալով հանդերձ, չի հուսալքվում: Վերջին դատաստանի տանջող մտքերը հետզհետե տեղի են տալիս դարձյալ աղաչանքներին: Նա համոզված է, որ իր պաշտատանքներին կանսա Անոխակալը, Այստեղ արդեն երգը ուղղվում է Հիսուսին, ոչ թե որպես դատավորի, այլ որպես Փրկչի, որը նմանեցված է մի փրկարար նավապետի՝ ալկոծված ծովում:

Նաւապետ րարի, լեր անձին իմոյ ապաւնէ...
Մերձ եմ յընկըղմիլ, օգնեա ինձ Նաւապետ րարի:
Քանզի ծանրացան ի վերայ իմ րեոինք մեղաց...
Փըրկեա ի վըտանգէ ըզնաւարեկս ի յալեաց ծովէ:

Մեսրոպ Մաշտոցը իր ալկոծ հոգեկան դրությունը ներկայացնելու համար ընտրել է շատ հարմար միջոց՝ ծովից վերցված պատկերներն և այլաբանությունները: Անհասարակ, Ապաշխարություն, շարականներում ծովի, կրակի, ընկղմվելու, հրկիզվելու պատկերներն ու գաղափարները տիրապետող են: Մի ուրիշ «Ողորմեա»-յի մեջ ապաշխարողը նույն բարի նավավարից խնդրում է, որ ոչ միայն փրկի իրեն ընկղմվելուց, այլև անվտանգ դարձնի ճանապարհը և բարվոք հասցնի նավահանգիստ: Մովից հետո, որպես պատկեր և խոսքի գեղարվեստական միջոց, շարականագիրը ոգտազործել է դարձյալ քննությունից վերցված մի ուրիշ առարկա կամ երևույթ՝ հողմը: Վերջինս նույնպես ահեղ է, ինչպես ալեհույզ ծովը: Բանաստեղծը երևակայում է, որ ինքը ընկած է հողմի երախում և նույնպես ենթակա է կործանման:

Վըտանգիմ ի րազմութենէ մեղաց իմոց...
Ալկոծիմ հողմով անօրէնութեան իմոյ:
Քաղաւոր խաղաղութեան, օգնեա ինձ:

Վերջապես «Ողորմեա»-յի հեղինակը սրտի խորքից ցավում է, որ մոլորվել է աշխարհի ապականված կենցաղի խոտոր ու խաղար ուղիներում: Վատնել է անտեղի իր հոգու անապակ գանձերը, քանզի էլ իր հոգու պտղատու այգու ցանկը և նման է անպտղաբեր

որթի, ոստաքանդ արմավենու և պտղակո-
րույա ձիթենու:

Ջանապական ըզհողոր ըզգանձն՝
Ցապականացու կենցաղը ծախեցի...
Ջջանկ հողոյ իմոյ քակտեցի,
Եւ եզկ անբարութեակ որթ...
Ոստաքանդ եղև ևս որպէս զարմաւենի,
Պտղակորոյս որպէս ձիթենի...

Որքան շատ ու ծանր են մեղքերը, որքան
ահնել և զարհուրելի է դատաստանի ատյանը,
այնքան էլ խորն ու հողեմաշ են բանաստեղծի
ապրումները: Սակայն, կա մի անխելի կապ
երկնքի ու մեղավոր մարդու միջև, որը թույլ
չի տալիս, որ ազամորդին համիտենապես
խորտակվի. դա բանաստեղծի լավատեսու-
թյան հիմքը հանդիսացող հույսն է՝ հավատի
անբաժան և փրկարար մասը:

Ճոյս իմ ևս դու Տէր, քախլ յանցանաց իմոց,
Մի անտես առնէր զդիմումն արտասուաց իմոց...

Դու ևս յոյս և ապաւել իմ.
Ձերծո զիս յորոգայթէ մեղաց և Ողորմեա:

Ապաշխարության կանոնի մեջ մտնող շա-
րականների մնացած տեսակները՝ Վան-
կունք-ները և «Համբարձի»-ներն են, որոնց
հեղինակները հայտնի չեն: Այս շարականնե-
րից շատերը, իրենց վսեմ ոգով ու պարզու-
թյամբ, շատ մոտ են Մաշտոցի գրած շարա-
կաններին, իսկ ոճով ու լեզվով հիշեցնում են
մեր և դարի գեղեցիկ գրաբարը՝ Վան-
կունք-ները վերագրվում են Պետրոս Գետա-
դարձի, Հովհաննես Սարկավազ վարդապե-
տին և Եսոբհալուն: Ինչ վերաբերում է «Համ-
բարձի»-ներին, ապա դրանց վերաբերյալ շատ
քիչ բան է հայտնի: Ետարկնոցի առաջարա-
նում Հովհան Մանդակունուն է վերագրվում
«Անսկիզբն բանն Աստուած» «Համբարձի»-ն,
սպոր ոմանք Օձնեցուն տանա: Այնուամենայ-
նիս, Վանկունք-ներն ու «Համբարձի»-նե-
րը, որպես հոգևոր երգի տեսակ, գոյություն
են ունեցել և որոնցից շատերը, իրենց ձևով
ու բովանդակությամբ, պարզությամբ ու լեզ-
վով շատ նման են Մաշտոցի գրած շարական-
ներին և դրանք Ապաշխարության կանոնի
մեջ ամենագեղեցիկներն են: Նմանութուն
ասելով պիտի նկատի ունենալ այստեղ գրանց
ողին, հուզականությունը, պատկերները և
մանավանդ մեր ոսկեղենիկ, պարզ ու դեղե-
ցիկ լեզուն:

Վերցնենք մի քանի օրինակ Մաշտոցի
գրած «Ողորմեա»-ներից ու «Տէր յերկնից»-
ներից և համեմատենք «Մեծացուցէ»-ների,
«Վանկունք»-ների ու «Համբարձի»-ներին
հետ:

«Տէր յերկնից».

Առաւօտ խաղաղութեան ծաղեա ի մեզ մարդասէր
և կենց:

Եւ յամենայն վրտանդէ ամրացո զմեզ
ընդ հովանեաւ այսովդ քս սրբոյ և կենց:

Նույն կանոնի մեջ, նույն ոգով ու պարզու-
թյամբ այդպիսի մի խնդիր է արվում Տիրոջը,
հեղինակն անհայտ, հետևյալ «Համբարձի»
շարականի մեջ.

Ջորհերդութիւնս՝ բանաւոր պատարագ,
Քեզ ի մըտանել արեղականրս վերառանձնք...

Ճամենայն փորձութենէ թըշնամոյն
Աշտվղ քո պահպանեա ըզմեզ...

«Ողորմեա»-ներից մեկում երգում է.

Ձերծո զիս յորոգայթէ որսողին,
Եւ յամենայն վրտանդից ապրեցս և ողորմեա:

Ճաներնոյթ թշնամոյն և ի գաղտնի նետից
բանաբերին:

Պահեա և ողորմեա:

Ապաշխարության ավագ կողմ (ԲԿ)
«Հարց»-ի «Տէր յերկնից»-ներից մեկում
Մաշտոցը երգում է.

Ընդ առաւօտըս կանխեցից յանդիման
Լինել քեզ յազատոր իմ և Աստուած իմ:

Ընդ առաւօտըս լուիցես ձայնի իմում,
Տէր, թաղաւոր իմ և Աստուած իմ:

Ապաշխարության առաջին ձայն (աձ)
«Հարց»-ի «Վանկունք»-ի մեջ ասում է.

Ձառաւօտու զօրհներդութիւնրս մարդասիրութեամբը քո
Ընկալ, թաղաւոր փառաց:
Ձմանկունս եկեղեցւոյ քո պահեա ի խաղաղութեան:

Ինչպես տեսնում ենք, դիմումների ու
խնդրանքների ձևը, ջերմեռանդ օրհներգու-
թյունների ոգին, պարզ ու անպաճույճ խոսքը,
բոլորը այնքան մոտիկ ու նման են Մաշտոցի
շարականների էությանն ու ոգուն, պարզու-
թյունն ու անկեղծությանը:

Մերոպ Մաշտոցի շարականներում, որ-
քան դառն են ու խոր մեղքի զգացման ծանր
ապրումները, որքան հորդառատ են զգացող
սրտից ըխող արցունքները, նույնքան էլ այդ
ծանր ասորումների միջից պայծառ այլույթ
է հույսը, որը հանդիսանում է նրա վե-
րածնվելու, մեղքերից ազատվելու ելքը: Նրա
«Հայր բաղումողորմ», «Անբերութից քննող»,
«Թաղում են քո գրթութիւնքդ», «Ճոյս իմ ևս
դու», «Եկեացէ ի վերայ մեր ողորմութիւն քո»,
«Մաքսաւորն հառաշանօք ի տաճարին»,
«Ողորմեա», «Յորժամ գայցես» («Տէր
յերկնից») շարականներում հետևողականո-
րեն և հաստատ հավատով լեցուն, ամեն մի

տողի միջից երևում է հույսը, լավատեսությունը: Ահա այս շարականների հետևություններն ու ոգով էլ գրված են Ապաշխարությունյան կանոնում գտնվող բազմաթիվ «Մանկունք»-ներն և «Համարարձի»-ները: Վերցնենք դրանցից միայն երկու օրինակ, կանոնի վառ ձայն «Համարարձի»-ն երգում է.

Պահա զմեզ Տէր յամենայն փորձութենէ,
Ցանկերոյք թըշնամույն և ի զաղտնի նեւից նորա,
Դու յոյս մեր և ապաւն յամենայն ժամանակի:

Ավելի բուռն ու ջերմ է հույսի ու հայցվածքների արտահայտությունը հետևյալ «Մանկունք»-ի մեջ.

Յոյս իմ ի մանկութենէ իմմէ,
Մի՛ թողոք գիս, Տէր Աստուած իմ:

Յոյս իմ ի ժամանակի ձերութեան իմոյ,
Մի՛ թողոք գիս, Տէր Աստուած իմ:

Յոյս իմ ի միասնգամ զալստեանդ ցո,
Մի՛ անտես առնիր գիս, Տէր Աստուած իմ:

Մեսրոպ Մաշտոցի գրած առաջին շարականները մեծ դեր են խաղացել հայկական հոգևոր երգերի զարգացման ընթացիկում: Պահպանելով Ապաշխարությունյան շարականների ոգին, Մաշտոցի շարականների ազդեցությունը հետագայում առաջ եկան «Ննջեցեւոց» և «Հանգստեան» շարականների կանոնները: Այսպիսով, հետագա դարերի «Հանգստյան» կանոնի բոլոր շարականները ընթացել են Մաշտոցի բացած հետքերով:

Սրտաբուխ, ապաշխարողական մոտիվներով գրված այդ շարականներում, վսեմ ու հուզավարար բովանդակության հետ միաժամանակ, հանդես են եկել և հայկական սկզբնական տաղաչափական տարրերը: Թեև մեր բանասիրությունը հայկական առաջին ոտանավորը վերագրում է Մովսես Խորենացուն և Հովհան Մանդակունուն, սակայն Մաշտոցի շարականները, առանձնապես «Ողորմեա»-ների արվեստի ընթերցած փաստերը հաստատում են, որ մեր ազգային անդրանիկ ոտանավորի հիմնադիրն էլ այդ հանձարեղ Տարոնացին է եղել: Մեր հին հոգևոր երգերի մեջ բազմաթիվ են ձևով այնպիսիները, որոնք ազատ ոտանավորներ են՝ յամբական պարզ ոտանավորով, առաջին անգամ Մեսրոպ Մաշտոցն է գործածել իր «Ողորմեա»-ներում: Ահա մի նմուշ այդ ձևի ոտանավորից.

Մեղք իմ բազում են յոյս,
Մանր են քան զառաջ ծովու:
Քանզի քեզ միայնոյ մեղալ,
Ողորմեա ինձ, Աստուած:

Մեսրոպ Մաշտոցի «Ողորմեա»-ների մեջ կան և ազատ ողջական, յամբական ոտանավորներ, որոնք բավականաչափ շատ են մեր հոգևոր երգերում, ինչպես հետևյալ «Ողորմեա»-ն.

Ի նեղութեան իմում օգնեա ինձ, Տէր,
Որպէս երբեմն Ծովնանու,
Եւ ողորմեա:

Մաշտոցի շարականներում, տաղաչափության տեսակետից ամենից ուշագրավը իշխող հնգավանկ անդամներով, խառն ոտանավորի ձևով գրված «Ողորմեա»-ներն են, որոնց հետագայում հետևել են Ստեփանոս Սյունեցին, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին և ուրիշները: Այս ձևի ոտանավորի ընդհանուր հատկությունն այն է, որ նրա հիմնական անդամները հնգավանկ են: Բայց սրանց տողերի մեջ երբեմն հնգավանկ անդամների հետ լինում են նաև երկավանկ, եռավանկ և նույնիսկ յոթավանկ անդամներ: Այսպիսի ոտանավորի ձևով է գրված Մաշտոցի «Յոյս իմ ես դու» «Ողորմեա» շարականը.

Յոյս իմ ես դու, Տէր,
Քաւիշ / յանցանաց իմոց.
Մի՛ անտես առնիր
Ձրեղիւմն / արտասուաց իմոց.
Ողորմեա ինձ Աստուած:

Սակայն Մեսրոպ Մաշտոցին պատկանող բոլոր շարականների մեջ, իր արվեստով և տաղաչափությամբ ամենալավը «Ալիք յանցանաց դիս ալեկոծեն» «Ողորմեա»-ն է: Ժիշտ է, սա էլ ապաշխարողական մյուս շարականների պես զղջական բովանդակությամբ ունի, բայց իր կազմով յամբ ու արվեստով միանգամայն ինքնուրույն է: Կառուցվածքի տեսակետից էլ սա առանձնահատուկ է նրանով, որ ամեն մի տունը կազմված է ոչ թե սովորական երեք-չորս տողերից և դարձից, այլ երկու տողից, այսպես.

Ալիք յանցանաց / գիս ալեկոծեն,
Եւ մեղք իմ բազում / գիս յանդիմանեն:

Մեղ դի՛նշ արարից / մեղուցեալ անձամբս,
Որ չեմ ապրելոց / ահադին հրոյն:

Մեղայ քեզ, Քրիստոս, / Որդի Աստուծոյ,
Շնորհեա զթողութիւն / յանցանաց իմոց:

Մեսրոպ Մաշտոցի շարականները ցույց են տալիս, որ հստակ թեև սակավաթիվ, բայց գործածության տեսակետով եղել են նույնիսկ և դարի առաջին տասնամյակներում, այսինքն Նարեկացու հաղորդած ժամանակից շուրջ

վեց դար առաջ¹⁴, Անհավանական չէ, որ դրանք կարող են մեր ժողովրդական անցիր բանահյուսությունից անցած լինել նույնիսկ մեր առաջին հոգևոր երգերի մեջ, որոնք հետագայում ավելի տարածվեցին ու զարգացան: Մեր ասածները հիմնավորելու համար, բերենք մի քանի նմուշ Մեսրոպ Մաշտոցի այն շարականներից, որտեղ նկատվում են հանգի պորժածությունից հեղեղները:

Ալեկոծիմ հողմով անօրենությունե,
Ողենա ինձ թագաւոր խաղաղութեան:

Ըզմեզս իմ ցուցից քեզ թրխտոս,
Որ բըթիշկըզ ես հազուց:

Ալիք յանցանաց դիւ այեկոծեն,
Եւ մեղք իմ րազում դիւ յանգիմանեն:

Վիրաւորեալ յանցանօք անձն իմ,
Առ քեզ Տէր, համբարձի զալս իմ:

Ցանկերոյթ թըշնամույն պարտեցալ,
Եւ ի դադտի նեախց բանասրկութիւն վիրաւորեցալ:

Վտանգիմ ի րազմութենէ մեղաք իմեց,
Աստուած խաղաղութեան, օղենա ինձ:


Ալեկոծիմ հողմով ալեկոծութեան իմոյ,
Թագաւոր խաղաղութեան օղենա ինձ:

Ինչպես տեսնում ենք, հայ գրականության մեջ տաղաչափական և հանգի տարրերը շատ հին են և ազգային: Դրանք սկզբնավորվել են մեր գրի ու գրականության հետ միաժամանակ և հանդիսանում են հայ մշակույթի և ազգային բանավոր ու գրավոր գրականության անբաժանելի մի մասը: Հետևաբար տաղաչափական և հանգային տարրերը մենք ընդունել ենք ոչ թե ուրիշ ազգերի բանաստեղծությունների ու տաղաչափության ազդեցությամբ, այլ դրանք մեր ազգային մշակույթի ներքին տարրերն են, որոնք երևան են եկել սովակալին և զարի սկզբներում:

Վերևում բերված փաստերը ցույց են տալիս, որ Մեսրոպ Մաշտոցը, այդ հանճարեղ Մուրբը, եղել է ոչ միայն մեր գրի ու գրականության, այլև ազգային հոգևոր բանաստեղծության ու նրա տաղաչափական արվեստի հիմնադիրը: Նա առաջինը գրեց մեր հոգևոր երգը, ինքը եղանակավորեց և ինքն էլ առաջինը երգեց հայերեն լեզվով:

¹⁴ Մ. Արեղյան, «Տաղաչափություն», էջ 414:





2. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ*

4. ՀԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ ԲՅՈՒՋԱՆԳԻՈՆԻ ՄԵՋ

Եվ ահա կհասնինք քրիստոնյա եկեղեցիներու պատմության բացառիկ մեկ պահուն: Այդ պահը նախօրյակն է Փլորենտին պատմական ժողովին, զոր գումարեց Եվգենիոս Գ պապը, Կաթոլիկ եկեղեցւոյ համար նույնքան բացառիկ պահու մը: Կաթոլիկ եկեղեցւոյ պատմության ծանոթ եղողները դիտեն, թե Պապական Աթոռին շուրջ տեղի ունեցած վեճերն և գայթակղութիւններն հետո է, որ Եվգենիոս պապը նախաձեռնած էր Փլորենտին ժողովը, որուն շնորհիվ կհուսար իր դիրքը ապահովել նախ և պատմության մեջ ևս հռչակվիլ Օրթոդոքս եկեղեցին հաջողելով բերել պապերու գերիշխանության տակ:

Պոլիսը հրատապ օրեր կանցնէր ինքն ալ, Թրքական խուժումի վտանգին առջև, որ Բյուզանդիոնի դռան հասած էր արդեն՝ կայսրն ու պատրիարքը փրկութեան միակ լաստը կնկատէին պապը, որուն շնորհիվ կհուսային Արևմտաքի օգնութիւնը ևս ապահովել: Անոնց ընդառաջումը պապին հրավերին միաբանական ժողովի մը երթալ մասնակցելու՝ առավելապես այս մտահոգութենէն կրխեր, թեև հույն կղերին ստվար մեկ մասը և ժողովրդական լայն զանգվածները դեմ ըլլային այս հանձնառության: Տագնապը, որ Պոլսո մեջ ստեղծված էր, ժողովրդական խավերու այս զսպոհութենէն կրխեր և կուսճանար օրավուր, մինչ մահիկը կմոտենար Պոլսո դռներուն:

Այն ճիշտ այդ պահուն Պոլսո մեջ կհիշատակվին երկու հայ եպիսկոպոսներ՝ Ծաւայի և Հովհաննես, որոնց անունը ևս կխառնվէր նոյն օրերու տագնապալի անցուղարձերուն: Այնպես որ անոնք ոչ միայն երկու նոր անուն կաժելցնեն Պոլսո գրավումէն առաջ բյուզանդական մայրաքաղաքը նստող հայ եպիսկոպոսներու շարքին մեջ, այլ պատմության կանցնին Փլորենտին ժողովին հայոց մասնակցութեան հետ կապված դեպքերուն մեջ իրենց ունեցած դերով: Արդարեւ, անոնց միջոցով էր, որ պապը փորձեց Փլորենտիա հրավիրել հայոց կաթողիկոսը, որ Կոստանդին Զ Վահկացին էր այդ պահուն:

Արձանագրելով Հայ եկեղեցւոյ ուղղված այդ հրավերը, հայ կաթոլիկ պատմիչը կըսէ. «նոյնիսկ Բասիլեայի սյունհոգոսին հարքը՝ 1433-ին՝ ոչ միայն հունաց կայսրն և Կոստանդնուպոլսի պատրիարքն ի ժողով հրավիրած էին, այլ հայոց կաթողիկոսն ալ, որպեսզի արեւելյան եկեղեցին ամբողջ իրենց կողմն ունենան. հրավիրանաց թուղթն ուղղակի Հովհաննես և Ծաւայի արքեպիսկոպոսներուն ղրկեցին ի Կոստանդնուպոլիս, ուր առաջ թեև Հայոց եկեղեցւոյն երեսփոխաններն և ազգաւնոց առաջնորդք կրնակէին, որպեսզի միջնորդ ըլլան կաթողիկոսն ալ հորդորեն, և կա՛մ անձամբ ժողովի երթալ, կա՛մ իր երեսփոխանները խրկել: Հրավիրանաց թղթին օրինակը կորսված է, բայց Հովհաննես և Ծաւայի արքեպիսկոպոսներուն պատասխանը պահված է»⁶⁰:

* Շարունակված «Եջմիածին» ամսագրի 1962 թվականի Պ թ. ից, ԺԲ-ից և 1963 թվականի Պ Ա-ից:

⁶⁰ 2. Աղեմաճոյ Գալստեան, «Պատմության կաթողիկէ վարդապետության ի հայտ», էջ 80:

Արդարև, Հովհաննես և Եսայի արքեպիսկոպոսները 1433 թվականին մեջ, զոր Պալմյան կհրատարակե Մանսին⁶¹ առնելով, կտեղևկացնեն, թե կաթողիկոսին հաղորդած են ստացված հոգևոր, ավելցնելով միևնույն ատեն, թե սկարի դժուարին է մեղ զալ ժողովիլ ի միասին, քանզի գրեա թէ ողջուն իսկ աղգ մեր ցյուեալ է ի սփիտս բարբարոսիկ տղաց, թաթարաց, տաճկաց և անհաւատից, և շարագոյն այն է, զի անկեալ կայ ընդ լծով ծառայութեան և հարկատուս և այլն⁶²։

1433 Նոյեմբեր 1-ին, միշտ Պոլսն գրված նամակի մը մեջ⁶³, զոր Եսայի միայն ինք կատարագրե, կհաղորդվի Եվգենիոս պապին, թե իր հրավերը, լատիններին հնազանդ հայերենի վերածվելով, հղված է հայոց կաթողիկոսին, ուրկն ստացվելիք պատասխանը պիտի իսկույն հաղորդվի իրեն։

Հաջորդ նամակի մը մեջ, զոր 1434 Նոյեմբեր 1-ին Պոլսն Եվգենիոս պապին ղրկած է Եսայի, այս վերջինը ինքզինք կանվանե Եսայի Երուսաղեմի։ Գալմբայարյան կրսն, թե Եսայի եպիսկոպոսը այդ պահուն թերուսաղեմի Պատրիարք՝ թյունն ալ կվարբր Մարտիրոս եպիսկոպոսի ձեռնը⁶⁴, մինչ ուրիշ աղբյուրն⁶⁵ գիտենք, թե Եսայի նույն միջոցին Երուսաղեմի Մարտիրոս պատրիարքին աթոռակիցն էր, ինչպես կընդունի Օրմանյան ալ⁶⁶։

Արդարև, Եսային ծանոթ է իրեն աթոռակիցը Երուսաղեմի հայոց պատրիարքին։ Երուսաղեմի պատրիարք Մարտիրոս իր կենդանության իսկ իրեն գործակից-օգնական նշանակած էր զայն, նույնիսկ պատրիարք տիտղոսը տալով անոր և 1432-ին կամ 1433-ին իբր առաջնորդ ղրկած էր Պոլիս, ուր ան պիտի մենա մինչև 1438, տարի մը հետո Մարտիրոսի մահվամբ իբր պատրիարք գալ նստելու համար Երուսաղեմ։

Եսայի Մարտիրոսի աջակցած էր Գողգոթայի վերստացման գործին մեջ, ու կարծողներ կան, որ ան Մարտիրոսի հետ միասին եկած է Պոլիս՝ Կաֆայի հարուստ հայ գաղութեն դրամական սկնկալությամբ և բնա-

կած և Բերա-Ղալաթիո ջանովական քաժնին մեջ, որ Կաֆայի ենթակա էր և սերտ կապեր ուներ անոր հետ⁶⁷։

Հայ կաթողիկ պատմիչը Պոլսո երկու հայ եպիսկոպոսներուն հանգամանքը ուզելով ճշտել, կրսն, թե անոնցմե մնացած նամակներուն մեջ «մատգրության արժանի է այն՝ որ Հովհաննես բոլոր բյուզանդական երկիրներու եպիսկոպոս է կաթողիկոսի կողմանե, իսկ Եսայի հատկապես Պոլսո եպիսկոպոս է, և այն՝ ոչ թե Ղալաթիո կողման, որ այն ատեն Բյուզանդիային անկախ ջննովական պետություն էր, այլ բուն Ստամպոլի, վասնզի այս եպիսկոպոսներ Բյուզանդիո հոռոմական կայսրն իրենց տեղը կնկատեն։ Գարծյալ ասոնք երկուքն ալ կաթողիկն չէին... թեև չեմ կուսակից միությունն»⁶⁸։

Գալմբայարյան կենթադրե, որ Եսայի հավանաբար դեր ունեցած է Ղալաթիո եկեղեցւո վերաշինության մեջ ևս 1436-ին, այս ենթադրությունը ընելու կմղվի այն փաստեն, որ Ս. Գրիգոր Լուսավորչի ավագ դուսն վրա՝ 1733-ին գրված արձանագրության մը մեջ կհիշվի պատրիարքն Երուսաղեմի Տէր Եսայիան։ «Ապա թե ոչ,— կրսն,— ի՞նչ հարկավոր էր Երուսաղեմի պատրիարքը հիշել»⁶⁹։

Եսայիի Երուսաղեմ մեկնելն հետո ալ Հովհաննես եպիսկոպոս դեռ Պոլիս է 1438-ին։ Հոն է որ Կաֆայի հայերը իրեն կղրկեն 1438 թվակիր իրենց նամակը Սիսի Կոստանդին կաթողիկոսին ուղղված։

Իսկ Կոստանդին կաթողիկոս 1438 հուլիս 25-ին Թեոդոսիո հայոց ուղղած իր գրության մեջ կգրե, թե սեկն առ մեղ Յովհաննէս եպիսկոպոս և մատուց զմիջութի Թեոդոսիայ»⁷⁰։

Հենրիկոս արքեպիսկոպոս Չեքքինի, Փլորենտյան ժողովի պատմագիրը, վատիկանյան գրադարներն քաղելով կգրե, թե 1438-ին Սյունհոդոսի նիստերուն մասնակցեցան երկու հայ արքեպիսկոպոսներ⁷¹, Պալմյան կենթադրե, թե անոնք Պոլիս գտնվող Եսայի և Հովհաննես արքեպիսկոպոսներն էին⁷², բայց այդ մասին լուր չունինք ուրիշ աղբյուրն։

Նույն այդ օրերուն Կաթողիկ եկեղեցւո մեջ բռնկած ներքին պայքարներու ամենեն հրատապ մեկ պահուն, Պոլսո մեջ, 1438-ին, նոր հայ եպիսկոպոս մը կհայտնվի բռնին վրա՝

⁶⁷ Ա. Ալպոյանյան, «Շողակաթ», 1952, էջ 275։

⁶⁸ Հ. Գրիգորիս Գալմբայարյան, «Հիշված աշխատությունը», էջ 456—458։

⁶⁹ «Շանդես ամսօրյա», 1911, էջ 469—470։

⁷⁰ Հ. Աղևստեղ Պալմյան, «Հիշված աշխատությունը», էջ 88։

⁷¹ Մանս Ա, «Հիշատ. ՃԳԴ»։

⁷² Հ. Աղևստեղ Պալմյան, «Հիշված աշխատությունը», էջ 92։

⁶¹ Mansi, «Sacrorum conciliorum nova et amplissima collectio» Venetia, 1785, XXX, p. 642.

⁶² Հ. Աղևստեղ Պալմյան, «Հիշված աշխատությունը», էջ 82։

⁶³ Անդ, էջ 84։

⁶⁴ Հ. Գրիգորիս Գալմբայարյան, «Կ. Պոլսո Պենդլուի հայոց գերեզմանատունը», «Շանդես ամսօրյա», 1911, էջ 469։

⁶⁵ Բստեղարա Վարդապետ Հովսեփյան, «Հաջորդություն պատրիարքաց Երուսաղեմի», Կ. Պոլիս, 1872, էջ 48։

⁶⁶ «Ազգայատում», Բ, էջ 2077։

Հովակիմը Անոր անունը կ'իշատակվի առաջին անգամ այն երկու նամակներուն մեջ, զորս հայոց Կոստանդին Զ կաթողիկոսը ուղղեց Կաֆայի զենովացի Նյուպատոս Պատրիարքին և Ս. Անտոն վանքի վանահայր Եարզնս վարդապետի, հաղորդելով անոնց, որ պատվիրակություն մը կազմած է, որպեսզի իր անունով ներկայանա Փլորենտինո մեջ հրավիրված միաբանական ժողովին, կաթողիկոսի կազմած այս պատվիրակության մեջ էր նաև Հովակիմ Եպիսկոպոս:

Սարգիս վարդապետի ուղղած իր նամակին մեջ, որ 1433 հուլիս 25 թվականը կկրճ, կաթողիկոսը կրթե. «... Ես իմով ի և կատարեալ ճոխութեամբ ետու իշխանութիւն Սարգիս վարդապետ, որ է և եղիցի փոխանակ անձին իմոյ, ընդ նմին և Մարկոսի և Թովմայի վարդապետաց և Յովակիմայ Եպիսկոպոսի Բերիայ, զի երթիցեն ի ժողովի և լուսատու եղիցի Նոցա Հոգին Սուրբ...»⁷³:

Նման պարբերությւն մը կա զենովացի Նյուպատոսին ուղղված նամակին մեջ ևս. «... լիով իշխանութեամբ մերով կարգեցաք փոխանակ անձին մերոյ զորդի իմ զՍարգիս վարդապետ, զՄարկոս վարդապետ և զՅովակիմ Եպիսկոպոս Բերիայ, զի երթիցեն ի սինհոդոսն յայն օրհնեալ...»⁷⁴:

Փլորենտինո ժողովին հետ կապված անցուցարձերով զբաղող մեր բոլոր հեղինակները՝ Զամչյան⁷⁵, Պալճյան⁷⁶, Գալեմբյարյան⁷⁷, Օրմանյան⁷⁸ և այլն, Հովակիմը կարծած են Բերիա, այսինքն Հայնպի Եպիսկոպոս: Լ. Ներսես Ակինյան առաջարկեց սակայն ուղղել Պերայի, հիմնվելով այն փաստին վրա, որ քննարկին մեջ Pera է, այսինքն Ռյուզանդիոնի հանդիպակաց զենովական թաղը⁷⁹, Ակինյանի ուղղումն հետո հայ բանասիրությունը Հովակիմը Բերայի, կամ Պոլսո Եպիսկոպոս կնկատեր, հայ գաղութը, այդ շրջանին, խմբված ըլլալով զենովական թաղին մեջ:

Ակինյանի առաջարկած ուղղումը այլապես ալ տրամաբանական էր, որովհետև Կոստանդին կաթողիկոս կարիք չունէր Հայնպի Եպիսկոպոսը ընկերացնել Փլորենտինո ժողովին համար իր նշանակած պատվիրակության, որուն մյուս երեք անդամները Կաֆային էին և որ Պոլսեն պիտի անցնէր դեպի Իտալիա:

Հովակիմի Պոլսո Եպիսկոպոս ըլլալու պարագան ավելի ևս ստույգված նկատվեցաւ մա-

նավանդ իշատակաբանի մը հիման վրա, զոր Բարդեն Եպիսկոպոս հայ բանասիրության ծանոթացուցած էր տարիներ առաջ: Կակնսրկենք այն Զեռնադրութեան Մատուցին, որ Եպիսկոպոսությունն էր Տրոյ (ԱԲՆ) քնակող հայու մը, մարաշցի նշան Կ. Կանսմյանի և որուն իշատակաբանը տեսած ու ընդօրինակած էր Բարդեն Եպիսկոպոս (հետագային աթոռակից կաթողիկոս Կիլիկիո):

Արդ, այդ իշատակաբանը կրեսեր. «Գրեցաք զիրքս ձեռնադրութեան Բվ. ՊԶ (1438) ի վայելումն արհեպիսկոպոսին Տէր Յովակիմին Կոստանդինուպոլսի: Զոր Տէր Աստուած վայելեալ տացէ յամերամս ժամանակաց. ամէն: Կատարեցաւ հրամայեալն ի քէն ով տէր պատուական: Զսակա գծիկս ընկալ յանպիտան Յակոբ արքեպէ Տրապիզոնցոյ, իբրև զխերնէլս այրոյն: Եւ անմեղադիր լեր խոշորութեան և անարհեստութեան և սխալանաց սորա, զի կար մեր աւաչափ էր, և մի մոռնար ի մտաց քոց սուրբ ի բարի մասի զանարժանս աղաչեմք»⁸⁰:

Բարդեն Եպիսկոպոս այս առթիվ, ցույց տալիս հետո, թե Պոլսո առումն շատ առաջ մալաքադարէն հայերը ունեին եկեղեցական վարչական կազմակերպություն մը, բռնեք առաջնորդություն մը, որուն գլուխը կգտնվէր 1438-ին Տեր Հովակիմ արքեպիսկոպոս, դիտել կուտար. «Ասիկա ցույց կուտար նաև, թե Կ. Պոլիս հայ քնակություն մը ուներ արդեն, և այս հայ քնակությունն ալ ուներ իր կազմակերպալ առաջնորդությունը, որուն սկիզբը և ծագումը թեև անծանոթ է մեզ, բայց անհավանական չէ դնել հաշիվ կաթողիկոսեն (973—992) առաջ, որ կազմակերպեց Արևմտեցի հայ գաղութները՝ հատկապես ձեռնադրալ Եպիսկոպոսներ զրկելով բյուզանդական կայսերական սահմաններուն մեջ հաստատված հայոց վրա: Թեև, Կ. Պոլիս չի հիշվիր հաշիվի կազմակերպությանց մեջ, և ասիկա թերևս ա՛յն պատճառով, որ Կ. Պոլիս արդեն ուներ իր կազմակերպալ առաջնորդությունը, հաշիվ կաթողիկոսի կարգադրութենն առաջ»⁸¹:

Հովակիմ Եպիսկոպոսի պարագան անգամ մը ևս իր լուսարանությունը գտաւ, երբ Հայնպի նախկին առաջնորդ Արտավազդ արքեպիսկոպոս Հայնպի հայոց պատմության մեջ 1438-ին հաշատուր անվամբ արքեպիսկոպոս մը կհիշեր իբրև Բերիո (Հայնպի) առաջնորդ⁸²:

⁷³ Անդ, էջ 88:

⁷⁴ Անդ, էջ 89:

⁷⁵ «Պատմութիւն Հայոց», Գ, էջ 473:

⁷⁶ «Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայաստան», էջ 87:

⁷⁷ «Հանդես ամսօրյա», 1911, էջ 463:

⁷⁸ «Ազգայնաբան», Բ, էջ 2080:

⁷⁹ «Հանդես ամսօրյա», 1935, էջ 38:

⁸⁰ Բարդեն Եպիսկոպոս, «Կ. Պոլսո Հայ Պատրիարքութեան ծագումը և առաջին պատրիարք Հովակիմ արքեպիսկոպոս», «Հանդես ամսօրյա», 1924, էջ 432—441:

⁸¹ Անդ:

⁸² Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյան, «Պատմութիւն Հայնպի հայոց», գլ. Գ, էջ 11:

Հարցը հայ բանասիրության համար վճռված չի նկատվիր, երբ Հ. Ներսես Ափինյան հրապարակեց եկամտի անբացատրելի հետազոտությունը մեր հայտարարելով, որ Հ. Ալեքսանդր Պալանյան իր «Պատմություն կաթողիկոսականության» գրքին մեջ Peta-ն շատ ճիշտ թարգմանած է Բերիա, այսինքն Հայնպ, որ, ըստ այնմ պետք է վերստին ուղղել 1935-ին իր ըրած ուղղումը, և որ հետևաբար լին սխալած Չամչյան, Պալանյան և Գայեմիսյան, Հովակիմը նկատելով իրեն «Բերիո առաջնորդ»⁸³, Ափինյան այս առթիվ կամիթ մըն ալ կուտար Սյուրմեյան արքեպիսկոպոսին, րսելով, որ անոր հաճելի չէր րնականաբար Հայնպի առաջնորդներու շարքին ունեցած ըլլալ եպիսկոպոս մը, որ պիտի մասնակցեի Փլորենտինո ժողովին: Ափինյանի կարծիքը ևս այն էր, թե ժողովակիմ ձեռնադրված Հայնպի թեմին վրա կգործեի պաշտոնով Կ. Պոլիսը:

Ալպոյաճյան փութաց մատնանիշ րնել Ափինյանի այս տարորինակ հետազոտումը, անհավանական գտնելով միննուլն առեն Արտավազդ արքեպիսկոպոսի վերադրված դիտումը, և անտեղի՝ Ափինյանի փորձը Հովակիմ եպիսկոպոսի անունը վերստին Հայնպի առաջնորդական Աթոռին կապելու, առանց նոր հայտնության մը⁸⁴:

Ալպոյաճյան նույն հարցին պիտի անդրադառնար նաև ավելի հետո⁸⁵, հերքելու համար քրազմահմուտ և վաստակավոր Միխիթարյանին տեսությունները:

Անգամ մը ևս պնդել և փոստել հետո, թե րնագրին Peta անունը պետք է Պերա տառադարձել և ոչ թե Բերիա, Ալպոյաճյան սխալ կզան Ափինյանի այն տեսությունը, թե Հովակիմ ձեռնադրված Հայնպի թեմին վրա, պաշտոնով կգործեի Կոստանդնուպոլիս, ու կրսն. «1438-ին Բերիո առաջնորդ Հովակիմ եպիսկոպոսը կարելի չէր անմիջապես Կոստանդնուպոլս արքեպիսկոպոսական տիտղոսով պննել, Հայ Սկեդեցվո օրենքներուն համաձայն, եպիսկոպոսները ներելի չէ թեմն թեմ փոխադրել, Հայնպի առաջնորդ եպիսկոպոսը, հայոց կաթողիկոսը հավանական չէ որ Կ. Պոլսո եպիսկոպոս նշանակած ըլլա ճիշտ այն պահուն, որ զայն կնշանակեի պատգամավոր և կուտեի զրկել Խաչիա: Հետեվարար Հովակիմ եպիսկոպոս րնալ հավանական չէ, որ Հայնպի առաջնորդությունը վարած ըլլա Peta-ն Բերս կարգավոր և սխալ թարգմանելով կազմված է այն կարծիքը, թե Հովակիմ Բերիո եպիսկոպոս էր, մինչ ադիկա

հաստատող ոչ մեկ փաստ կա: Հետևաբար Հ. Ափինյանի առաջին կարծիքը ավելի հիմնավոր է քան այս երկրորդ սրբազրյալը:

Ալպոյաճյան ընդարձակ մեքերում⁸⁶ մը կրնեի այս առթիվ Օրմանյանն, ցույց տալու համար, որ Փլորենտինո ժողովին հայոց մասնակցությունը ապահովելու ցանկությունը առավելսպես Ղրթի րնեովացի իշխաններուն խողովակով ևկավ Սիս, և կրսն, թե Օրմանյան շատ ճիշտ դատողությամբ մը կրցած է տեսնել, թե ջննովացի պաշտոնատարներուն պահանջումով, ջննովական հայտակ հայերու կողմն հայոց կաթողիկոսին եղած խնդրանքին հայոց հայրապետը զոհացում տված է րավականտնալով իրեն պատվիրակ շուրս անձեր նշանակել ևուելիսկ Լաֆայի մեքեն:

Արդ, անոնցմ երեքը իսկապես Կաֆայեն էին, իսկ շորրորդը՝ ժողովակիմ, — կրսն Ալպոյաճյան, — իրապես կպտնվեի, իր կարգին, ոչ թե Կաֆա, այլ անոր պես ջննովական տիրապետության սակ գտնվող Բերայի մեք, մանաւանդ որ ժիսլամական տիրապետության տակ գտնվող Հայնպի եպիսկոպոսը կրնանք րսել, թե անկարելի է որ նշանակվեի հայոց կաթողիկոսին պատվիրակ առանց վտանգելու կաթողիկոսը և իր անձը:

Հովակիմ եպիսկոպոսի ստեղծած կնճիոր հայ բանասիրության համար միմիայն իր տիտղոսն չի րխիր սակայն:

Ձեռագիրներու հիշատակարանները դանաղան թվականներու Հովակիմներ կհիշեն տարբեր վայրերու մեք, այնպիսի շփոթությանց առջև դնելով հայ բանասիրությունը, որ մինչև այսօր ալ անհրկած կմնա ճշտելու ժամանակ, թե այս րուր Հովակիմները ի՞նչ կապ ունին այն Հովակիմին հետ, որ 1461-ին Պոլսո հայոց առաջին պատրիարքը պիտի ըլլար Ճաթիհի կարդադրությամբ, թե միննուլն եպիսկոպոսն ևս րուրն ալ, թե տարբեր անձնավորություններ:

Բացի այն Հովակիմն, զոր 1438-ին կգտնենք Կոստանդնուպոլիս, Հովակիմներ կհիշվին արդարև նաև 1444-ին՝ Բրուսայի և 1445-ին՝ Կուտինայի մեք, րացի այն Հովակիմն, որ 1461-ին Կոստանդնուպոլսո պատրիարք պիտի դառնար և րացի անկն, որ 1469-ին հիշված է իր եպիսկոպոս Փիլիպի:

Ոմանք կնույնացնեն րուր Հովակիմներ և կնթադրեն, թե Պոլսո երեքմին Հովակիմ եպիսկոպոսն է, որ հետո անցած է Փոքր Ասիա՝ Ռուք պետության մեք գտնվող հայերը հովվելու, գտնված է Բրուսա և Կուտինա, ուր շվման մեք եղած է թուրք իշխանությանց հետ, հետո Պոլիս կանչված է Ճաթիհի կողմն, որ զայն րազմեցուցած է Պատրիարքական

⁸³ «Հանդես ամսորյա», 1951, էջ 461.

⁸⁴ «Հայաստանի կոչակ», 1951, էջ 916.

⁸⁵ «Առաջնորդի և շրջականներու հայոց հոգևոր վարության սկզբնավորությունը», «Շոգակաթ», Կ. Պոլիս, 1952, էջ 272—277.

⁸⁶ «Ազգապատում», Բ, էջ 2078 և հաջորդները:

Աթոռը, և վերջապես գտնված է նաև Փիլիպե, որ մաս կկազմեր արդեն Թուրք պետության։

Ինչ ալ ըլլա բոլոր այս Հոգևորականներուն կապը մեր Հոգևորականին հետ, սա միայն ստույգ է, որ 1438-ին հետո ան այլևս Պոլիս չէ, և որ ուրիշ եպիսկոպոսներ կուգան հիշատակվիլ անոր փոխարեն։

Կուտինայի (Քյոթաֆիայի) Ս. Աստվածածին եկեղեցւոյ ժողովուրդը-ն վաղրամ արք-եպիսկոպոս Մանկունի ժամանակին ընդօրինակած է հետևյալ տողերը. «Հաստատեցաւ իշխատակարանս այս թվին ՊՂԴ (1445) ամին, ի հայրապետութեան Տեառն Կարապետին և յեպիսկոպոսութեան Տեառն Ուլակիմայ և երեսփոխանութեան Յակոբին, ի քահանայութեան և ի սպասատուութեան սր. եկեղեցւոյս Կիրակոս երիցուն և Գրիգոր երիցուն և ի թագաւորութեան տաճկաց Սուլթան Մուրատի»։

Այցելու հայ եպիսկոպոսներ ևս հաճախ պետք է անցած ըլլան Վոսփորի ափերէն Պոլսոյ գրավումէն առաջ։ Սակայն քիչերու միայն հիշատակութիւնը ունինք։ 1439-ին Պոլսոյ մէջ կ'հիշվի, օրինակ, Դիարբեքիի առաջնորդ Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոսը։

Մկրտիչ Նաղաշ համբաւովոր այն տաղասացն ու նկարիչն է, որ Ժն գարու սկիզբները Բաղեշի մօտ Պոս գլուղը ծնած, կրփական ասպարեզը ընդգրկած և հետագային եպիսկոպոս ձեռնադրված Կոստանդին Զ Վահկացի կաթողիկոսն, միջնաշարայն հայ գրականութեան ամենեւն կարկառուն դեմքերէն մեկը հանդիսացաւ։ Միջագետքի հայոց առաջնորդն էր, բայց սքեմը չարգիլեց զինքը երգել հասարակական մոտիվներ, ինչպէս իրմէն առաջ ըրեր էր Զրիկը և զմայլելի տաղեր նվիրել մանավանդ հայ դարերներուն։

Նաղաշ նախախնամական դեր կատարած է իրեն հանձնված թեմին մէջ։ Շահած ըլլալով Աթոռայինութենէն քննիչ՝ Օսմանի համակրանքը, հաջողած է ամեն տեսակ արտոնութիւններ ապահովել քրիստոնեաներուն, եկեղեցիներու նորոգութեան թույլտվութիւնն ստանալ, տուրքն զերծ կացուցանել հոգևորականները, պաշտամունքի սզատութիւնը ապահովել, գերիներու փրկութիւնը ձեռք ձգել և այլն։ «Երկրորդ լուսաւորիչ ամենայն Միջագետաց և պարծունք պարծանաց ամենայն քրիստոնէից» կորակն զայն հիշատակարան մը։

Բայց ինչ որ զինք բացառապէս կկապէ Հայ եկեղեցւոյ պատմութեան, այն անհողդողդ կեցվածքն է, զոր ցույց տվաւ Եվգենիոս պապի միաբանական փորձերուն առթիւ։ Պատասխանելով Կոստանդին Զ Վահկացի կաթողիկոսին հարցումին Փոլսեանի ժողովին մասնակցելու համար պապն ստացած հրավերին առթիւ, թելադրած է մերժել որեւէ առաջարկ որ կ'զգտի Հայ եկեղեցիին պարտա-

գրել Քաղկեդոնը։ Պատմական իր գրութիւնը հասած է մեղի «Պատասխանի լատինացոց թղթոյն ի Մկրտիչ նկարագրէ. զոր գրեաց հրամանաւ կաթողիկոսին և մեծ րարունակման թումայի»⁸⁷։

Գալով իր Պոլիս այցելութեան, այդ մասին հետևյալը գրտենք։ 1449-ին գրված «Յայսմատուրք»-ի մը հիշատակարանը, զոր ձեռագրին հետագա ընդօրինակութիւններուն հիման վրա վերակազմած է Լ. Խալիկյան և որ կ'արտունակէ Մկրտիչ Նաղաշի կենսագրութիւնը, կ'պատմէ, թէ Նաղաշ, որ 1431-ին նստած էր այլևս հայրապետական ի Վաթիթ շահաստանի, ի ՊԶԸ (1439) թուին սկսանի վերանորոգել զամենագոյն և զամենահրաշն զամենեցուն զարմանալի՝ զհրաշափառ կաթողիկէն, որ Վաթիթ շահաստանի, որ յանուն Սրբոյն Թէոդորոսի յինաւորիչն, յղուիս զըմբէթին բարձր էր քան զմարայիցն, զգորտեանալ քրիստոսատեանց ազգն մահմետականն, և ի խոր խոցեցան, և ձայն ետուն միմեանց որդիքն Հազարայ, և հույակ հարեալ համբաւեցին և ամբաստան եղին առ սուլթանն Եգիպտոսի, և առ թագաւորն Պարսից, և առ սուլթանն Հոռոմոց տանն, և թէ այսպիսի գեղեցիկ յօրինուածով բարձրացաւ եկեղեցին քրիստոնէից։ Զոր լուեալ նոցա վառեցան չար նախանձու և իսկոյն իսկ դեսպան և հրովարտակա առաքեցին առ սուլթան Համզէն՝ քակել զամենագոյն սուրբ կաթողիկէն։ Եւ անտանելի սուգ հասաւ Հայոց աղդին, և ամենեքեան ի խոր խոցեցուն, և յամենայն աչաց աղիողորմ արտասուս հեղոյր։ Եւ ետուն կաշառս զանձս բազումս, և ոչ կարացին ազատել, զի զամենահրաշ և զամենագոյն հրաշալի զմբէթն քակեցին հաւասար տենեարացն, և ամենայն քրիստոնեայք ի սուգ մտին... Եւ առանկապէս արի այցելուն և քաջ հովուապետ Տէր Մկրտիչ՝ շինող սուրբ կաթողիկէն։ Եւ ի սաստիկ խոցոյն և ի դառն կսկծանացն տարաշխարհիկ եղև, և գնացեալ էանց ի ծովն Պոնտոսի և և հաս ի Կաֆայ և յԱտամպուր, և զցայգ և զցերեկ խոցեալ սրտի առ Աստուած աղաղակէր՝ այցելու լինել կաթողիկէն յառաջ քան զեկանեկն ի մարմնոյն, զի մի մտցէ խոցով ի գերեզմանն...»⁸⁸։

Հասած ենք արդեն Պոլսոյ գրավման Փոթորկած է բոլորական կայսրութեան հիւնավորք մայրաքաղաքը, Յշնամին դուռը կծեծե, մինչ մարդիկ կվիճին ներսը դավանական հարցերու մասին։ Ինչ կընեն հայ

⁸⁷ Մեսրոպ Մաշտոցի անվան երեսնի պետական մատենադարան, ձեռագիր թիվ 6857։

⁸⁸ Լ. Ս. Խալիկյան, «Ժն դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ», Ա. Երևան, 1955, էջ 627—629։

փորձիկ հոսք ճակատագրական այդ պահուն
և ո՞վ է եպիսկոպոսը, որ դայն կհոգիվն շո-
վակիմը վաղուց այստեղ չէ, իսկ նազաշը
պահ մը հանդիպած՝ մեկնած է, Ու տասնհինգ
տարին ի վեր որն է եպիսկոպոս լի հիշատակ-
վիր հոն, Փոխարեն՝ բյուզանդական կայսրու-
թյան մահու և կենա՝ այդ օրերուն Պոլիս
կգտնենք երկու հայ վարդապետներ, որոնք
Պոլսո աղետալի օրհար պիտի նկարագրեն
հետո պատմական զույգ ողբերու մեջ, Այդ
վարդապետներն էին Արահամ Անկյուրազի,
հեղինակը թղթի վերա, առման Կոստան-
դինուպոլսոյն հայտնի պատմական ոտանա-
վորին, և Առաքել Բաղիշեցի, որ հորինած է
Ռոդր մայրաքաղաքին Ստրմպուլու, երկու
ոտանավորներն ալ մեզ հասած քաղմաթիվ
ընդօրինակություններով և երկուքն ալ տրպ-
ված քանիցս⁸⁰, Ասոնցմե Արահամ Անկյու-
րազի կականատես է զարհուրելի անցքերուն,
որոնք Պոլիսը սպանդի թատր ըրին 1453 մա-
յիսին, իսկ Բաղիշեցին, թեև Պոլիս չէ գտնված
աղետի օրերուն, սակայն ծանոթ է իրեն բյու-
զանդական երբեմնի մայրաքաղաքը:

Թե ի՞նչ կապ ունենին սույն երկու հոգևորա-
կանները Պոլսո հայ թեմին հետ՝ ոչինչ մեզ
հայտնի չէ, բայց անոնց ներկայությունն իսկ
Պոլիս ակններն փաստ է հայ հոգևոր կազմա-
կերպության մը բյուզանդական մայրաքաղա-
քին մեջ:

Ֆաթիհի մուտքը Պոլիս նոր շրջան մը պի-
տի քանար հայության համար, մանավանդ
երբ 1461-ին Պատրիարքական Աթոռ մը հաս-
տատվեց մայրաքաղաքին մեջ, Բայց մինչև
Աթոռին հաստատումը հայ հոգևորականներ
շարունակած են հովվել իրենց փոքր հոտը
թուրք վարչության տակ:

1459—1461 թվականներուն, որեմն ար-
դեն Պոլսո գրավումեն քավական հետո և
պատրիարքության հաստատման նախօրյա-
կին, հիշատակված կգտնենք Մարտիրոս Ե-
պիսկոպոս Կոստանդինուպոլսի վիճակին⁸¹:

Երևանի Մատենադարանին 1871 թիվ ձե-
ռագիրը, ռուսումնաբան Ամիրզոյաթի
Ամասիացույն հետևյալ հիշատակարանը ու-
նի, Գրեցալ թագոտական բոշկարանն ի
թվականիս Հայոց ՋԸ (1459) մինչև և ի նո-
յեմբերի ամսուն ի Գ (3), օրն շաբաթ, և ի
քաղաքին Կոստանդինուպոլսի պալի, և ի յառ ոտն
վանիցն Սուրբ Ստիփանոսու, և ի կաթողիկո-
սութեանն Հայոց Տէր Գրիգորայ, և ի հայրա-
պետութեանն Տէր Մարտիրոսին Կոստանդի-
նոյ պալու վիճակին, և ի պարոնութեանն
Մուհամատ խանին...⁸²

⁸⁰ Զ. Ա. Անտոյան, «Հայկական աղբյուրները Բյու-
զանդիայի ակնման մասին», Երևան, 1957:

⁸¹ Գր. Ապոստոլ, «Շոդակաթ», Բ տարի, էջ 276:

⁸² Լ. Ս. Խաչիկյան, հիշված աշխատությունը, Բ,
էջ 175:

Հրաշյա Աճառյան սույն Մարտիրոսը կուղե
նույնացնել ավելի ուշ հիշված Մարտիրոս Ե-
պիսկոպոս Կաթալեցիի, և Գարամանեն
1479-ին Պոլիս քերված Մարտիրոս վարդա-
պետի հետ⁸³, թեև քավարար հիմքեր չկան
նման ենթադրության մը համար:

Այսպիսով հարծիքով «Մարտիրոս
1459-ին կվաթեր Պոլսո և Բերայի եպիսկոպո-
սությունը, մինչև որ Հովակիմի պատրիարք
ընտրության մը կընթեր այդ Աթոռը, կվերնար
երկվությունը և բոլոր օսմանյան երկիրներու
հայերը կմիանային Բայկանյան լեռներեն
մինչև Կեղրոնական Փոքր Ասիան»⁸⁴:

Բոլոր այս սովալները մեզ կերեն այն
եղրակացությունը, որ Պոլսո մեջ հայ թեմ եղած
է Ֆաթիհեն առաջ, և որ հետևարար Ֆաթիհեն
չի թվագրվիր հայ եկեղեցական կազմակեր-
պություն մը Վոսփորի ափերուն վրա: Ոչ մեկ
տարակույս չկա, որ հայ քիչը մը արդեն կար
այնտեղ ու հոգևոր կյանք անոր ծոցին մեջ,
երբ դեռ հայերը շփման մեջ մտած չէին թուր-
քին հետ, և երբ Ֆաթիհ դեռ բնմ մտած չէր:

Մինչև այսօր լուսարանված կշարունակե
մնալ այն հարցը, թե ո՞ր կնստեր հայ ե-
պիսկոպոսը Պոլսո մեջ, Անոր Աթոռը բուն
Բյուզանդիոնի մեջ էր, թե Ղալաթի ջենո-
վական թաղը, ուր հայերը եկեղեցի ալ ունենին
ԺԴ դարեն ի վեր: Այս մասին հայտնված կար-
ծիքները ենթադրություններն են անդին, չեն անցնիր,
որովհետև ժամանակակից որն է աղբյուր օգ-
նության չի հասնիր մեզի:

Իրենց Պոլիս գտնված միջոցին ո՞ր
կնստենին, օրինակ, Հովհաննես և Նսալի ե-
պիսկոպոսները, որոնք կհիշվին Պոլսո մեջ
ԺԵ դարու երեսնական թվականներուն:

Փաստ առնելով այն պարագան, որ Հով-
հաննես եպիսկոպոս հիշատակված է իրեն
սկարգեալ ի կաթողիկոսէ մերմէ Ամենայն
Հայոց ի կողմանս Կոստանդնուպոլսի, իսկ
Նսալի եպիսկոպոս՝ Եր նմին քաղաքի եղեալ
ի հոգաբարձութիւն եկեղեցւոյն հայոց», Այ-
սպիսկան կենթադրե, թե Երբուզանդակոն
կայսրության վերջին օրերուն, երբ Պոլիս եր-
կու իշխանությանց միջև բաժնված էր, Բերա՝
որ ջենովական էր՝ ուներ առանձին առաջնորդ
կամ տեսուչ և Կ. Պոլիս քաղաքը հունական
վարչության տակ ուրիշ հոգևոր պետ մը⁸⁵:

Ուրիշ կնճիռ մը եկեղեցին է, ուր քնակած
են Պոլիս գտնվող հայ եպիսկոպոսները:
Դժվարությունը ինքնին կվերնա, եթե Ղալա-
թիան սեպենք անոնց կայան. այդ պարա-
գային նախ Ս. Մարգիսը պետք է հյուրընկա-
լած ըլլա զանոնք, և ապա Ս. Լուսավորիչը:

⁸³ Զ. Անտոյան, «Հայերեն անձնանունների բառա-
րան», Գ, էջ 282 և 284:

⁸⁴ «Շոդակաթ», 1952, էջ 276:

⁸⁵ Անգ, էջ 275:

Իսկ Բյուզանդիոնի՝ մեջ, Ո՛րն էր անոնց օթևանը հոն: Եթե մեզ այն ներվեր ենթադրությանց հետքերուն վրային քայլել, անոնց խուցը պիտի փորձվինք նամաթիա փնտռել, Եվ ահա թե ինչո՞ւ Եթե Ֆաթիհ Սուլթանը հայոց առաջին պատերազմը կզենտեղեր Սուլու Սա-նաստորրի շունահյան Ս. Գևորգ Եկեղեցին, պետք է հայերը զոնեն ավանդության մը կապված ըլլալին այդ մենաստանին հետ:

Թե երբե՞ն ի վեր Սուլու Մանաստորը կգտնվի հայերուն ձեռքը՝ աղբյուրները շատ ալ համեմատելի չեն: Պահ մը կարծվեցա՞վ ետևիսկ, որ ան հայերուն պատկանած է Պոլսո գրավումեն իսկ առաջ: Այդ կարծիքը հետևանքն էր գերման ծանոթ թրքագետ Ֆրանց Բարինգերի հայտնաբերած մեկ ֆերմանին: Անով Ֆաթիհ Սուլթան Մեհմեդ 1473 օգոստոս 8-ին կհաստատեր 1458 մարտ 17-ին տված իր մեկ նախկին ֆերմանը, որով ի պատասխան Սուլու Մանաստորի հայոց առաջնորդ (մարհասա) Գրիգորի դիմումին, անգամ մը ևս կարգվեր Աքքերմանեն եկող գաղթականներուն ոտնձգությունները Սուլու Մանաստորի վանքին մոտակա խարխուլ տաղավարներուն (օտալար) և հողերուն (երլեր) վրա, որոնք հինն ի վեր (կադիմդեն) պատկանած էին նույն վանքին, եթե սակայն առաջին ֆերմանեն հետո դանոնք վաճառելու որոշում մը տրված չէր ըստ շերիի:

Ստորև տանք նախ ֆերմանը, թարգմանելով Բարինգերի հրատարակած բնագրեն⁹⁵.

Եկեմենն արդարադատը մուսուլմաններու դատավորներուն, լավագույնն անոնց, որ կճանչնան հավատքի միությունը, առաքինության և ճշմարտության աղբյուր, ժառանգորդ գիտությունը մարգարեներու և առաքյալներու, լավանդակ արարչագործության ստուգության պայցուլց, ամենն նշանավորն անոնց, որոնք թագավորին կօգնեն լիապես, ո՞վ մեր մոլլան, դատավորը պաշտպանյալ քաղաքին Կոստանդնուպոլսո, — հավերժական թող ըլլան իր առաքինությունները, — երբ քեզ կժամանեն արքայական այս հրովարտակը, հայտնի ըլլա քեզ:

Գրիգոր, հայոց առաջնորդը (մերխասա), որ Ստամպուլ, Սուլու Մանաստորը կբնակի, ասկե առաջ իմ բարձր ատլանս գալով հայտնի էր, թե հիշյալ վանքին մոտակա խարխուլ սենյակներուն (օդա) և տեղերուն (եր) մեջ, որոնք հինն ի վեր (քադիմդեն) նույն վանքին ենթակա էին և անոր կպատկանեին, հիմա Աքքերմանեն եկող ինչ-ինչ խումբեր

(թալիֆն) ոտք կդնեն. [աղոր վրա] 862 տարվա չեմադլուլ էվվել ամսվան մեջ (1458 մարտ) արքայական հրաման մը տրված էր իրեն. [իսկ] հիմա ան կպահանջեն, որ արքայական այդ հրամանը նորոգվի:

Արդ, կհրամայեմ, որ արքայական այս հրամանը ստանալուդ, համապատասխան ձևով քննես և տեսնես, և եթե ադկե հետո հակառակ իմաստով հրաման մը տրված չէ, արքերմանցի այդ խումբերը ապօրին կերպով միջամտի կըլլան հիշյալ վանքին մօտ գտնվող և հինն ի վեր վանքին ենթակա խարխուլ սենյակներուն և տեղերուն մեջ, մինչ ըստ օրինի անոնց վաճառման անհրաժեշտություն չկա, այդ բանն արգիլես և թույլ չտաս ապօրին կերպով միջամտիս ըլլալ: Գիտցիր ուրեմն ըստ այնմ և հավատք ընծայն նվիրական նշանիս:

Գրվեցավ 878 տարվո բերուլ էվվել ամսվան 13-ին (1473 օգոստոս 8), Կոստանդնուպոլիս քաղաքին մեջ:

Երկար շտենց Բարինգերի հայտնաբերած ֆերմանին պատճառած անակնկալը հայ բանասիրության: Երևան ելավ շուտով, թե շփոթության մը զոհ գացած էր Բարինգեր: Միայն կարդալու էր ֆերմանին թուղրան և թվականը: Թուղրմացության անդրադարձավ Բարինգեր ինքն իսկ, ու իր հոգվածին հրատարակությունն շուրջ երկու տարի ետք, 2 մայիս 1958 թվակերի նամակով մը կհայտնեի, թե ֆերմանին վերեր գրոշմված թուղրան կպատկաներ Սուլթան Սեյիթ Բ-ի (1566—1574) և ոչ թե Ֆաթիհ Մեհմեդի (1451—1481): Այս պարագան բացատրելու համար երեք ենթադրություն կըներ, որոնցմե կնախընտրեի այն վարկածը, թե Ֆաթիհ Մեհմեդ Բ-ի կողմն տրված ֆերման մը, հինցած կամ կորսված ըլլալով, անոր վերանորոգումը խնդրված և ստացված էր Սեյիթ Բ-ի օրով: Միշտ համոզված ըլլալով սակայն, թե ֆերմանը տրված է Ֆաթիհի կողմն, կհետևեցներ, թե Ստամբուլի մեջ հայերը կրոնական բարձրագույն իշխանություն մը ունեին 1461-են առաջ, թվական, որ ըստ Չամչյանի (սիմատմութիւն Հայոց, Գ, էջ 500) հայոց Պատրիարքության հիմնադրության կհամապատասխանե, Հետևաբար, կեղծակցներ Բարինգեր, Հովակիմ Եպիսկոպոսն առաջ, հայերը ունեցած են Գրիգոր անուն եպիսկոպոս մը Կոստանդնուպոլսո Պատրիարքական Աթոռին վրա⁹⁶:

Բարինգերի վարկածը ընդունելություն չգտավ սակայն ի վերջո և դիտել տրվեցավ, թե ֆերմանին ուղադիր ընթերցումը կասկած կհարուցաներ անոր թվականներուն և անոնց

⁹⁵ Franz Babinger, „Ein Besitzstrell um Sull Manasir unter Mehmed II (1473). Beitrag zur Frühgeschichte des Armenischen Patriarchats von Konstantinopel“. „Charisteria Orientalia...“, Praha, 1956, s. 29—37.

⁹⁶ Հայկ Պերպիլյուք, «Յոսմանյան քանի մը վավերագիր Իսթանբուլի հայոց եկեղեցիներն ու մանց մասին», «Հանդես ամսուրյա», 1961, էջ 724—725:

վրա հիմնված հզրակացություններում մասին», որովհետև եթե իրապես «1458-ին Սուլու Մանաստերի վանքը հինգ ի վեր, այսինքն առնվազն հարյուր տարիների վեր հայտնված հարյուր տարի առաջ, հայոց հանձնած էին իրենց Peribleptas վանքը, որ հետո Սուլու Մանաստեր կոչվացավ», ինչ որ պիտի ըլլար «անհանգիստ ենթադրություն մը», և կամ, «եթե 1458-ին Սուլու Մանաստեր հայոց կալատկաններ՝ պետք էր ենթադրել, թէ Ֆաթիհ, Ստամբուլը գրավելն առ առաւել շորս տարի ետք, հայոց հանձնած էր հունական այդ վանքը և հոն հալ եպիսկոպոս մը բնակած էր, և, հետևաբար, գրավման հաջորդ շորս տարվան ընթացքին Ստամբուլի մեջ քանի մը հարյուր հայ կղտնվեց», — ենթադրություն, որուն ճիշդագուստ ոչ մեկ պատմական աղբյուր և ոչ իսկ ավանդություն գոյություն ունի»⁹⁷։

Մեր բարեկամին առարկության առաջին մասը տեղին էր անշուշտ, եթե նույնիսկ վերապահ ըլլալու անոր շարունակությունը։

«Անհրաժեշտ էր ուրեմն, — կրնա Պերպերյան, — ստուգել ֆերմանին մեջ գործածված երկու թվականները, այս ստուգումը կատարեցին երկու ձեռնհաս թրքագետներ, մասնագետ թուրքերեն դիվանական գրությունը, և անոնց ստուգման արդյունքն այն եղավ, թե «ֆերմանին առաջին թվականն է 932 ջեմադուլ էվվել, որ կսկսի 1526 փետրվարին, իսկ երկրորդ թվականն է 976 ընթիս ուլ-էվվել 13, որ համապատասխան է 14 օգոստոս 1570-ին»⁹⁸։

Եթե, հակառակ Բարինգերի պնդումին, ընդունելի սեպենք այս ստուգումը, պետք չլլա հզրակացնել, որ Սուլու Մանաստերի Գրիգոր եպիսկոպոսը 1526-ին Սուլվյան Բանունի սուլթանին (1520—1566) օրով է, որ ստացած է առաջին ֆերմանը, զոր պետք եղած է նորոգել շուրջ 44 տարի հետո, այն է 1570-ին, Սելիմ Բ-ի օրով (1566—1575)։

«Եթե ևս կրնանք, որով ֆերմանը անձը ենթադրել կուտա երկու դիմումներն ալ ընողը՝ Այն ժամանակ պետք չլլա նաև ընդունել, որ ֆերմանին մեջ հիշատակված Գրիգորը այն Գրիգոր եպիսկոպոսն է⁹⁹, որ 1526-ն 1537-ի միջև Պոլսո Պատրիարքական Աթոռին վրա հիշված է և որ եղբորորդին էր Զաքարիա Վաղարշապատցի կաթողիկոսին, և որ, Հովակիմեն, Նիկողոսեն, Կարապետեն և

Մարտիրոսեն հետո, Կհանդիսանար հինգերորդ հալ պատրիարքը Պոլսո մեջ, և արեւմտեան պետք է ըլլա, որ դիմումը բրած է Սուլթան Սուլվյանին՝ աքքերմանցիներու ունեւորություններն ազատելու համար պատրիարքանիստ եկեղեցւո սեփական տաղավարներն ու հողերը։ Այս պարագան է թերևս, որ կարծելոված է Երեմիա Չելեպիի, թե Սուլթան Սուլվյան հույներեն առնելով հայոց տված Սուլու Մանաստերը։

«Սուլու Մանաստեր կոչեալ՝ Աուր Գեդգ փառատրական,

Ջուր Յունաց առեալ մեզ տալ՝ հունեաւն՝ ու լուրբան Սիւլվյան»¹⁰⁰,

Ու դարձեալ պետք չլլա ընդունել, որ Աքքերմանեն եկող հայ գաղթականները իրապես անհանգիստ կրնան Պատրիարքարանը այն օրերուն, փորձելով գալ գետնի վրէպն ու հողերուն վրա, հավանաբար ֆերմանի մը ուժով, զոր 1507-ին ստացեր էին Ֆաթիհի հաջորդ Սուլթան Բայազիդ Բ-ն, աքքերմանցի Պողոս անուն քահանայի մը ջանքերով¹⁰¹։

Թե ի՞նչ պատճառներ դրդեցին, որ 44 տարի հետո հայոց պատրիարքը անգամ մը ևս սուլթանին դիմե իր կալվածներուն պաշտպանությունը խնդրելու համար՝ չենք գիտեր ստուգապես։ Այդ միջոցին Պոլսո պատրիարք էր Հակոբ եպիսկոպոս, որ 1563-ին հաջորդեր էր Տիրատուր Սեփիին և որուն օրով էր, որ հայ տպագրությունը պիտի մտնէր Պոլսո՝ «Ըստ երևութի սեփականության վեճի մը առթիվ, Սուլվյան Ա-ի ֆերմանին նորոգությունը խնդրված է, և կամ թե 1526-ին տրված ֆերմանը հինգած ըլլալով անոր հարազատ պատճենը հանել տրված է»¹⁰²։

Որքան ալ Ֆաթիհի վերագրված ֆերմանը առարկությանը ռախեցավ, այսպես, ստույգ կշարունակե մնալ սակայն բան մը՝ թե հայերը տեղ էին Սուլու Մանաստերին Ֆաթիհի իսկ օրեն։ Այդ մասին, ինչպես հիշած ենք իր տեղին, համաձայն են հայ թե օտար աղբյուրները։ Անոր հիշատակությունը կրնան, իբրև հայկական սրբավայր, 1493-ին և 1495-ին գրված հայերեն ձեռագիրներու հիշատակարանները, ժամանակակից հույն պատմիչը Սֆրանցես, ինչպես և հետագա ուղեգիրներ և պատմիչներ՝ Գերլախ, Համմեր, Ժուանենեն-Գավեր, Ա. դը Շոնքիեռ, Յորգա և այլն։

(Շարունակելի)

⁹⁷ Անդ, էջ 725։

⁹⁸ Անդ, էջ 726։

⁹⁹ Զավյան, Գ, էջ 113. — Հրաճա Ասատուր, «Ընդարձակ օրացույց Ազգային հիմնադրույթ», 1901, էջ 83. — Օրմանյան, «Ազգայնագրական», Բ, էջ 2225։

¹⁰⁰ Դոկւ. վ. Հ. Թարգման, «Երեմիա Չելեպիի Ստամբուլի պատմություն», Ա, էջ 7։

¹⁰¹ Գրիգոր Աղաճյան, «Երեմիա», 1959, էջ 258։

¹⁰² Հայկ Պերպերյան, «Հիշված աշխատություններ», էջ 720։

ԼՈՒՄՆԻ ՀԱՍԱԿԸ ԵՎ ՇԱԲԱԹՎԱ ՕՐԵՐԸ ՈՐՈՇԵԼԸ

Պատմական զանազան դեպքերի ժամանակը ճշգրտելիս հաճախ անհրաժեշտ է լինում շաբաթվա օրվա որոշումը հարյուրավոր տարիներ մեզանից առաջ եղած ժամանակի համար: Գիշերային ճանապարհորդությունների, գյուղատնտեսական աշխատանքների, աստղագիտական դիտումների, ռազմական արշավանքների և բազմաթիվ այլ նպատակների համար անհրաժեշտ է լինում Լուսնի հասակը նախորդ իմանալու Շաբաթվա օրվա և Լուսնի հասակը իմանալը մեծ կարևորություն է ներկայացնում նաև եկեղեցական տոների օրերի որոշման հաշվումները կատարելիս: Եվ իրող, եկեղեցական հիմնական տոներից մեկը՝ Ջատիկը, որից էլ որոշվում են մնացած տոների ժամանակները, որոշված է կատարել զարնանային գիշերահավասարի օրից (մարտի 21-ից) հետո եկող լիալուսնի հաջորդ կիրակի օրը:

Ժամանակակից օրացույցի կառուցվածքը բավականին բարդություններ է ստեղծում Լուսնի հասակի և շաբաթվա օրերի որոշման ժամանակ: Սովորաբար այդպիսի հաշվումները կատարվում են առանձին մարդկանց կողմից և մի քանի հարյուրամյակների համար կազմվում են աղյուսակներ և օրացույցներ և դրանք հրամցվում լայն օգտագործման համար: Ներկա հոդվածի նպատակն է տալ հնարավորին շափ պարզեցված կանոններ, որոնց օգնությամբ ընթերցողը կարողանա տոմարական այդ հաշվումները կատարել ինքնուրույն կերպով:

1. Լուսնի ճասակը որոշելը:— Ժամանակակից օրացույցում ամիսները ոչ միայն լուսնային շն, այլ նույնիսկ հավասար թվով օրեր շն պարունակում: Այս հանգամանքը բավականին դժվարացնում է Լուսնի փուլի հասակի որոշումը տարվա ցանկացած օրվա համար:

Նորալուսնից նորալուսին ժամանակամիջոցը, կամ այլ կերպ ասած լուսնային ամիսը մոտավորապես հավասար է 29,5 օրվա: 12 լուսնային ամիսը այդպիսով կազմում է մոտ 354 օր, այսինքն 11 օրով պակաս, քան տարվա մեջ պարունակված լրիվ օրերի թիվը (365): Այդ նշանակում է, որ յոթնալուսին, ապա հաջորդ տարվա հունվարի 1-ին Լուսինը կլինի 11 օրական, 2 տարի անց կլինի 22 օրական, 3 տարի անց՝ 33, կամ 30 օր հանած՝ 3 օրական և այլն: 19 տարի անցնելուց հետո, հունվարի 1-ին նորից կլինի նորալուսին, քանի որ 19 տարվա մեջ գրեթե ամբողջ թվով լուսնային ամիսներ են պարունակվում: Եթե բերությունը կազմում է օրվա տասներորդ մասից էլ պակաս: Այսպիսով, 19 տարի պարբերությամբ Լուսնի փուլերը տարվա նույն օրերին կունենան նույն հասակը: Ըստ վերելում բերված բացատրության, այդ 19-ամյա պարբերության նոր տարվա օրերի համար Լուսնի փուլերը կունենան հետևյալ հասակը (աղյուսակի վերին տողում դրված են տարիները, իսկ երկրորդ տողում՝ դրանց համապատասխան Լուսնի հասակը տարեկապին):

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
0	11	22	3	14	25	6	17	28	9	20	1	12	23	4	15	26	7	18

Ինչպես երևում է աղյուսակից, պարբերության 19-րդ և 1-ին տարիների համար փու-

լերի տարբերությունը ոչ թե 11 է, այլ 12: Այդ որոշ չափով ճշտում է մեր հաշվումներում

Օրինակ: Որոշենք, թե ի՞նչ օր է եղել 1940 թվականի մայիսի 5-ին: Մեզ մոտ այդ ժամանակ գործում էր նոր տոմարը: Նշանակում է 19-ը պետք է վերցնել ձախ աղյուսակի այն մասից, որը գրված է նոր տոմարի տակ: Գրա տողի և վերնից վերցրած 40-ի հատման կետում գրված է Ա տառը: Այն աղյուսակի 5-րդ ամսի դիմաց գտնելով Ա-ն և ուղիղ ներքև իջնելով այնքան, որ համապատասխանի ամսվա 5-ին, սլունակում գտնում ենք շաբ.: Նշանակում է 1940 թվականի մայիսի 5-ին եղել է շաբաթ օր:

3. Զատիկի օրը որոշելը:— Ինչպես նշեցինք, Զատիկի տոնը կատարվում է մարտի 21-ից հետո եկող լիալուսնի հաջորդ կիրակի օրը: Օգտվելով լուսնի փուլի հասակի և շաբաթվա օրվա որոշման կանոններից, դժվար չի լինի նաև որոշել Զատիկի տոնի օրը ամեն մի տարվա համար: Սակայն այստեղ բերենք Զատիկի տոնի օրվա որոշման մի այլ կանոն, որի օգնությամբ անկախ կերպով կարելի է այն որոշել:

Մ₁-ով նշանակենք տարեթիվը (շաբաթվա պարբերության)՝ 7-ի վրա բաժանելուց ստացված մնացորդը:

Մ₂-ով նշանակենք տարեթիվը (նահանջ տարիների պարբերության)՝ 4-ի վրա բաժանելուց ստացված մնացորդը:

Մ₃-ով նշանակենք տարեթիվը (լուսնի փուլերի կրկնման տարիների պարբերության)՝ 19-ի վրա բաժանելուց ստացված մնացորդը:

Կատարենք նաև հետևյալ նշանակումները:

Մ₄-ով այն մնացորդը, որը կստացվի $(19 \times \text{Մ}_3 + 15)$ -ը 30-ի վրա բաժանելուց:

Մ₅-ով այն մնացորդը, որը կստացվի $(2 \times \text{Մ}_2 - 4 \times \text{Մ}_1 + 6 \times \text{Մ}_4 - 6)$ -ը 7-ի վրա բաժանելուց:

Այս նշանակումներով, Զատիկի տոնը մարտի 21-ից Հին կամ Հուլյան տոմարով կլինի $1 + \text{Մ}_4 + \text{Մ}_5$ օր հետո: Գրիգորյան կամ նոր տոմարով՝ դրան գումարած նաև նոր և Հին տոմարների տարբերությունը: Այդ տարբերությունը նոր տոմարի ընդունման թվականից (1582 թ.) մինչև 2100 թվականը կազմում է հետևյալ մեծությունները:

1582 թ. մինչև 1700 թ. փետրվարի 29-ը՝ 10 օր:

1700 թ. փետրվարի 29-ից մինչև 1800 թ. փետրվարի 29-ը՝ 11 օր:

1800 թ. փետրվարի 29-ից մինչև 1900 թ. փետրվարի 29-ը՝ 12 օր:

1900 թ. փետրվարի 29-ից մինչև 2100 թ. փետրվարի 29-ը՝ 13 օր և այլն:

Լուծենք մի օրինակ: Որոշենք Զատիկի օրը 1983 թվականի համար:

1983-ը բաժանելով 7-ի, մնացորդում կստանանք՝ $\text{Մ}_1=2$: Բաժանենք 4-ի, մնացորդում կստանանք՝ $\text{Մ}_2=3$: Բաժանենք 19-ի, մնացորդում կստանանք՝ $\text{Մ}_3=7$:

Այնուհետև՝ $19 \times \text{Մ}_3 + 15 = 148$, Այն բաժանելով 30-ի վրա, մնացորդում կստանանք $\text{Մ}_4=28$:

$2 \times \text{Մ}_2 + 4 \times \text{Մ}_1 + 6 \times \text{Մ}_4 + 6 = 188$, Բաժանելով 7-ի, մնացորդում կստանանք՝ $\text{Մ}_5=6$: Զատիկի տոնը կլինի մարտի 21-ից $1 + \text{Մ}_4 + \text{Մ}_5 = 35$ օր հետո: Քանի որ մարտը 31 օր է, այդ օրը կընկնի ապրիլի 25-ին: 13 օր գումարելով, կստանանք նոր տոմարով ապրիլի 38-ին, կամ (30 հանելով)՝ մայիսի 8-ին:





Նկար 5.—Այասի նավահանգստի ընդհանուր տեսքը արևմուտքից

2. ԽԱՎՓԱԽՅՑԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՎԱՀԱՆԳԻՍՏՆԵՐՆ ՈՒ ՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐՆ

Հնագույն ժամանակներից Հայաստանը բարձր ինժեներական տեխնիկա ունեցող երկրի հռչակ է վայելում։ Երկրի նավահանգիստներն ու նավակայանները, որոնք աչքի են ընկնում թե՛ տեխնիկական կատարելության մեջ և թե՛ ճարտարապետական մի շարք առանձնահատկություններով, արժանի են բազմակողմանի ուսումնասիրության։

Հայկական լեռնաշխարհի բարձրագույն լեռնաշղթաների միջև կան զանազան մեծ ու փոքր լճեր։ Բազմաթիվ գետեր բավական երկար տարածությամբ սրընթաց պլանում են խոր ձորերի միջով։ Հետոց մեծ լճերի՝ Վանա, Սևանա և ջրառատ գետերի՝ Զորոխի, Եփրատի, Տիգրիսի, Կուրի և Արաքսի վրա, այնտեղ, ուր նրանց անցում են հարթավայրերի միջով, նավարկություն է եղել։ Սկզբում այն եղել է շատ նախնական և տեղական նշանակություն է ունեցել։ Միջնադարում, պատմական Հայաստանի և Կիլիկյան հայկական թագավորության սահմաններում, նավազնացությունը լայն զարգացում է ստացել։ Կառուցվել են ձկնորսական, առևտրական և ռազմական նավեր, իսկ նրանց սպասարկելու համար կառուցվել են նավահանգիստներ ու նավակայաններ։

Հին հայկական նավահանգիստների մասին եղած տեղեկությունները շատ աղքատ են ու կցկտուր։ Միջնադարյան զանազան շինությունների պատերին փորագրված բազմաթիվ արձանագրությունների մեջ, նավահանգիստ-

ների ու նավակայանների մասին ոչ մի հիշատակություն չկա։ Միայն Մաղարթա վանքի 966 թվականի մի արձանագրության մեջ հիշվում է, որ ջրաղացների ու վարելահողերի հետ միասին վանքին նվիրվել է նաև մի նավակ (հնարավոր է՝ փոքր նավ) Երասխ (Արաքս) գետում¹, որը հիմք է տալիս ենթադրել նավակայանի գոյությունը այդ գետի վրա։

Այլ են գրավոր աղբյուրների տեղեկությունները։ Հին հայկական գրավոր աղբյուրներում նավահանգստային աշխատանքներ, մասին տեղեկություններ է հաղորդում Ժ դարի սկզբի պատմագիր Թովմա Արծրունին, որը մանրամասն նկարագրելով Վասպուրականի թագավոր Գագիկ Ա-ի (908—943 թ.թ.) շինարարական գործունեությունը, հիշատակում է Վանա լճի² Աղթամար կղզու վրա կառուցած նավահանգստի մասին։

Հենվելով Թովմա Արծրունու տեղեկությունների վրա, անցյալ դարի վերջի պատմաբանները՝ Վարդ. Ե. Լալայան և այլն, և արդի գիտնականները՝ Թ. Թորամանյան, Վ. Հարությունյան, Ս. Սաֆարյան, Գ. Միքայելյան և Թ. Հակոբյան, նույնպես խոսում են Աղթամար կղզում եղած նավահանգստի և

1 Կ. Կոստանյանց, «Վիմական տարեգիրք», Ս. Գեորգուրդ, 1913, էջ 8։

2 Թովմայի վաղագլխի Արծրունայ «Պատմություն Տան Արծրունեաց», Ս. Գեորգուրդ, 1887, էջ 293—294։

նափակայանի մասին³։ Սակայն նրանցից միայն Ք. Թորամանյանն է, որ մանրամասն կանգ առնելով թուվմա Արծրունու հաղորդած տեղեկությունների վրա՝ բարձր գնահատական է տալիս Աղթամարի նափահանգստային կառուցումներին։

Շատ ավելի մանրամասն տեղեկություններ են պահպանվել Կիլիկյան հայկական պետության նափահանգիստների մասին։ ԺԲ—ԺԴ դարերի խաչակրաց արշավանքների շրջանին վերաբերող բազմաթիվ փաստաթղթերի մեջ, որ վկայում են արևմտաեվրոպական պետությունների հետ կիլիկյան հայերի ունեցած մշակութային կապերի մասին, տեղեկություններ կան Կիլիկիայում եղած շատ նափահանգիստների վերաբերյալ⁴։

Կիլիկյան նափահանգիստները հայտնի են նաև ԺԱ—ԺԴ դարերի արևմտաեվրոպական ճանապարհորդների՝ Բենիամին Տուղելսկու, Վիլբերտ դե Գաի, Մարկո Պոլոյի, Մարինո Սալուտոյի (ավագ) և ուրիշների երկերից⁵, որոնցից միայն Մ. Սալուտոն է համառոտակի խոսում նրանց բարեկարգության մասին։ Այդ կառուցումների շինարարական-տեխնիկական առանձնահատկությունների մասին կրցկառու տեղեկություններ կան ԺԲ դարի գիտնականների՝ Հ. Ղեոնդ Ալիշանի և Ֆրանսիացի Վ. Լանգուայի աշխատություններում, որոնք հսկայական նյութեր են հավաքել Կիլիկիայի հայկական պետության պատմության և մշակույթի վերաբերյալ⁶։ Որոշակի

³ Վաղդ. «Աղթամար», «Արագած», Ս. Գեորգիուզ, 1898, գիրք I, էջ 73—74։—Ե. Լալայան, «Վասպուրականի նշանավոր վանքերը», «Ազգագրական հանդես», ԹԻՖլիս, 1910, գիրք XX, № 2։—Ք. Թորամանյան, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Աշխատությունների ժողովածու», Երևան, 1942, էջ 76, 96—97։—Վ. Հռոտյունյան, Ս. Ստֆանյան, «Հայ ճարտարապետական հուշարձանները», Մոսկվա, 1957, էջ 49 (նույնիսկ)։—Վ. Միխայլով, «Կիլիկիայի հայկական պետության պատմություն», Երևան, 1952, էջ 21—23։—Ք. Հովսեփյան, «Անարկներ Հայաստանի պատմական աշխարհագրության», Երևան, 1960, էջ 179—180։

⁴ «Recueil des historiens des croisades. Documents arméniens», t. I—II.—«Archives de l'Orient latin», Paris, 1884, t. II.

⁵ ԺԱ—ԺԲ դ. գ. զ. զ. Տերեզ հրեա ճանապարհորդներ, Բարգամունթյուն Մարգրիտի, էջ 34 (նույնիսկ)։—Հ. Ղ. Ալիշան, «Միսոսան», Վենետիկ, 1885, էջ 334—359.—Marinus Samuilus dictus Torsellus, «Liber secretorum fidelium crucis Terrae Sanctae recuperaline et conservatone que et Terrae Sanctae Historia ab origine... continetur... Gesta del per Frances», Hanoviae, 1611, t. II, p. p. 88—90.

⁶ V. Langlois, «Voyage dans la Cilicie et dans les montagnes du Taurus», Paris, 1861։—Հ. Ղ. Ալիշան, «Միսոսան»։

Հետաքրքրություն է ներկայացնում նաև է. Հերցֆիլդի և Ս. Գուերի ուսումնասիրությունը, որը նվիրված է նափահանգստային քաղաք Կոռիկոսի ավերակներին⁷։

Պատմական Հայաստանի զետեղի և լճերի վրա նափահանգությունը կատարվում էր լաստերով, նափակներով և փոքր նավերով։ Լաստերի և ոչ մեծ նստվածք ունեցող նափակների սպասարկման համար նավամատուցային ոչ մի կառուցում չէր կատարվում։ Մեծ առգաստանավերի համար կառուցվում էին նավամատուցներ ցցերի վրա։ Այդպիսի նավամատուցի մնացորդներ երկշարք ցցերի ձևով Սեանա լճում 1849 թվականին հայտնաբերել էր Յ. Բայնոնը Նորադուզում, Նոր-Բայազետ քաղաքի մոտ (ներկայումս Կամո), սխալմամբ կարծելով, թե դրանք կամրջակներ են, որ տանում են զեպի Հայկական լեռնաշխարհի հնադարյան բնակիչների ցցերի վրա կառուցված շինությունները⁸։

Սեանա լիճը, որ աշխարհում լեռնային ամենաբարձր և ամենամեծ լճերից մեկն է, զարնանը և մանավանդ աշնանը շատ փոթորկահույզ է լինում։ Ձմռանը ափերի մոտ լիճը սովորաբար սառնում է (ամբողջ մակերեսը հազվադեպ), ուստի և լճի վրա նավարկությունը հիմնականում ամռանն է կատարվում։ Զարգացած է ձկնորսությունը։ Հնում Սեանում մի քանի նափահանգիստ է եղել՝ վանքի նափահանգիստներից մեկը Սեանի կղզում, մյուսը՝ Այրիվանքում, Նորադուզ գյուղի մոտ, ինչպես նաև լճի հարավային ափին։ Ավելի ուշ՝ ԺԲ և Ի դարերում նափակայանների կառուցվեցին Նոր-Բայազետում (Կամո), Ելենովկայում, Ներքին Ղարանլուխում (Մարտունի), Բասարգեշարում և այլ վայրերում։ Նավերը մեծ չէին, ուստի և նափահանգստային կառուցումները սահմանափակվում էին նավամատուցներով, որոնք հիմնականում ցցերի վրա տախտակամած կամրջակների ձև ունեին, որ խորանում էին լճի մեջ։ Նրանց միջոցով էլ հենց ապահովվում էր նավարկությունը նույնիսկ ափերը սառչելուց հետո էլ։ Նրանք նախատեսված էին թիավարվող և առգաստային բեռնատար ու մարդատար ոչ մեծ նավերի համար և նրանց լայնությունը մեծ չէր լինում։

Նափահանգությունն ավելի զարգացած էր Վանա լճում, որի առափնյա քաղաքներն ու բնակավայրերը, ինչպես նաև կղզիները, ի-

⁷ E. Herzfeld und S. Gayer, «Meramlık und Korykos», «Monumenta Asiae Minoris antiqua», Manchester, 1930, vol. II.

⁸ Յ. Բայնոն, «Հին կառուցումների մասին Կովկասում», «Տեղեկություններ Կովկասի մասին», ժողովածու, ԹԻՖլիս, 1871, հ. I, էջ 324 (նույնիսկ)։

բար հետ կապված էին մշտական հաղորդակցություններ: Ոստան, Վան, Խլաթ, Արճնշ և Բերկրի քաղաքներում կային բարեկարգ նավահանգիստներ, որոնք պաշտպանված նավամատուցներ և խարսխակայաններ ունեին: Նավակայաններ կային Դադլանում, Կոտոմում, Արուկում, Արեստում, Արտամետում, Ավանցում (Նկար 1), Աշավանքում, ինչպես նաև Լիմ, Կտուց, Առտեր և Աղթամար կղզիներում:

Վանա լիճը, որի ափերը ձմռանը նույնպես սառչում են, գրեթե վեց անգամ մեծ է Ժընևի լճից: Լճի մակարդակն անընդհատ բարձրանում է: Խ. Յ. Լինչի տվյալների համաձայն, 1838—1841 թվականների ընթացքում, լճի մակարդակը բարձրացել է 3-ից մինչև 3,5 մետր⁹, այդ պատճառով էլ լճի հյուսիսային ափին գտնվող միջնադարյան Արճնշ քաղաքը և ուրիշ շատ միջնադարյան նավահանգիստներ այժմ թաղված են ջրի տակ:

Ամենից ավելի հռչակված էր Աղթամար կղզու նավահանգիստը: Կղզին գտնվում է լճափից երեք կիլոմետր հեռավորության վրա, լճի հարավ արևելյան մասում, ունի տանձածն հատակագիծ և իր դագաթով ուղղված է դեպի մերձակա ափը (Նկար 2): Լճի մակարդակի բարձրանալու հետևանքով կղզու տարածությունը զնալով փոքրանում է և այժմ 16—17 հեկտարից ավելի չէ: Կղզու ափերը ժայռոտ են և բավական վեր են բարձրանում լճի մակերևույթից, այնինչ մակերեսը մեծ մասամբ համեմատաբար հարթ է: Կղզում կա խմելու աղբյուրի ջուր (լիճը աղի է) և այս հանգամանքներն էական նշանակություն են ունեցել կղզին բնակեցնելու համար:

Ռազմական տեսակետից կղզին համարվել է անառիկ: Հին ժամանակներից այն նախաբարները և իշխաններն օգտագործել են որպես հուսալի ապաստան: Թովմա Արծրունու



Նկար 2.—Աղթամար կղզու ընդհանուր տեսարանը

տեղեկությունների համաձայն, Աղթամարում ապաստան էին գտել Դավիթ Սահառունին, Ռաշամ Ռշտունին և Բարդապարանը, իսկ ըստ Սեբեոսի (է գար), Աղթամար կղզին Թեոդորոս Ռշտունու համար հանգիսացել է Վասպուրականի նահանգի ռազմական գլխավոր հենակետերից մեկը¹⁰, Վտանգի դեպքում Ռշտունյաց իշխաններն իրենց իշխանանիստ Ոստան քաղաքից տեղափոխվում էին Աղթամարի ռազմական ճամբարը:

Աղթամար կղզում պաշտպանական նշանակություն ունեցող կառուցումներ են կատարվել¹¹, Ավելի խոշոր շինարարական աշխատանքներ են կատարվել Գագիկ Ա Արծրունու ժամանակ, որն Աղթամարը դարձրեց ամրացված քաղաք-կղզի՝ իր գլխավոր նստավայրը: Ինչպես պատմում է Թովմա Արծրունին, կղզու մակերեսը բավական ընդլայնվել է Խվերի մոտ լճի մեջ քարեր լցնելու միջոցով¹², Այդ լիցքի վրա բարձր և հաստ պարիսպներ և բազմաթիվ աշտարակներ կառուցվեցին, որոնք կղզին անառիկ ամրոց դարձրին: Գագիկ Ա Արծրունին հրամայեց նաև պարսպապատել լճի մի մասը, որը հնարավորություն տվեց փոթորիկներից և ալեկոծություններից պաշտպանված նավահանգիստ ունենալ (Նկար 3):

Այդ կառուցումները կատարվում էին բազմաթիվ արվեստավորների կողմից, որոնց գլխավորությամբ աշխատող անհամար բանվորները պոկում էին ահագին, ծանր քարակտորները և զլորելով նետում էին ահագին խորություն ունեցող լիճը: Երբ բավականաչափ քարակտորներ լցվեցին լիճը և նրանք ջրի մակարդակից 5 կանգուն վեր բարձրացան և հասարակ ալքով տեսանելի էր լարի նման ձգված պատը, նրա վրա, ինչպես ցամաքի

¹⁰ Թովմա Արծրունի. էջ 293.— Սեբոս, «Պատմություն», Երևան, 1939, էջ 118, 121, 124 (ոտաբեն):

¹¹ Թ. Հակոբյան, նշված աշխատությունը, էջ 179:

¹² Թովմա Արծրունի, էջ 293—294:

⁹ Խ. Յ. Լինչ, «Հայաստան», Քիֆուս, 1910, II, էջ 38 (ոտաբեն):



Նկար 1.—Ավանց գյուղի նավահանգիստը Վանա լճում



Նկար 3.—Աղթամար կղզու նավահանգիստը (առաջին պլանում՝ պատենշի մնացորդը)

վրա, կառուցվեց ժժիարշաւանօք Հինգս երկարությամբ աղեղնաձև պատենշ-պարիսպը։ Պատմագրի վկայությամբ այդ ճշրաշակերտ, ահեղակերպ պարիսպը մի հզոր ամրութիւն էր հանդիսանում։ Բաւականաչափ քարձրաբերձ և լայնանիստ բրգամբք, այսինքն բարձր աշտարակներով, պարիսպը վերևում անցուղի ուներ, իսկ աշտարակների միջև նստարաններ էին դրված, որոնց վրա թագավորն իր զավակների և մերձավորների հետ կարող էր նստել հանգստանալու։ Պատենշի պարիսպները, որի հատակագիծը բաց աքցանի նման մեջտեղից կտրված աղեղի ձև ուներ, երկու կողմերով միանում էին կղզու առափնյա անառիկ ժայռերի հետ և լճից շրջափակել էին մի խաղաղ և ապահով նավահանգիստ բազմաթիւ նավերի համար։ Թշնամու նավերի ներխուժումը նավահանգիստ արգելելու համար, նրա մուտքը փակվում էր հաստ և լճի մեջ խորը սուզված մեծ զամբրով պատրաստված դարբասներով։ Բարձր աշտարակները հավանաբար ոչ միայն պաշտպանական նշանակութիւն են ունեցել, այլև հանդիսացել են դիտակետեր, ծառայել են ազդանշանների հաղորդելու համար, իսկ պատենշի ծայրերին տեղավորված աշտարակները միաժամանակ հանդիսացել են նաև փարոսներ, որոնք գիշերները և վատ եղանակին ցույց էին տալիս նավահանգստի մուտքը։

Նկատի ունենալով Աղթամարի նավահանգստի ինժեներա-տեխնիկական առանձնահատկութիւնները, պատմագիրը նրա մասին խոսում է որպէս շինարարական հրաշքի

մասին, իր ժամանակի աչքի ընկնող կառուցման մասին։

Պատենշի պարիսպների և նավահանգստային այլ կառուցումների հետ միաժամանակ, Աղթամարում թագավորի պալատից և իր քանդակներով հռչակավոր Ս. Խաչ Մայր Տաճարից բացի, կառուցվեցին նաև ուրիշ բազմաթիւ շէնքեր, որոնց թվում նավահանգիստն սպասարկող վարչական, տնտեսական և արտադրական շինութիւններ։ Շինարարութիւնը, որին մասնակցում էին բնակչության բոլոր խավերը, ներառյալ նաև իշխանները, ազատները և հոգևորականները, կատարվում էր արագ թափով։ Ինքը՝ արքան, բազում ար-



Նկար 4.—Կոսիկոսի նավահանգիստը և ձովային ամրոցի ընդհանուր տեսքը

վեցստավորների հետ, ձեռքն առավ շինարարի լարը և ձգեց այն և բոլորը միասին նշանակեցին ու «գծագրեցին» ապագա շինությունների տեղերը, և աշխատանքներն սկսելուց հինգ տարի հետո քաղաքը քարծրացավ իր ամբողջ պայծառությամբ, գնալով ավելի ու ավելի առավել ընդարձակվելով¹³։

Շինարարության արագ թափն ապահովելու նպատակով, ձեռք էին առնվել կազմակերպչական անհրաժեշտ միջոցներ, Այդ աշխատանքներին բազմաթիվ արվեստավորներից և օժանդակ բանվորներից՝ ռազմիկներից բացի մասնակցում էր նաև զորքը, կղզում չկար բավականաչափ շինանյութ, մանավանդ որոշակի մեխանիկական և դեկորատիվ տվյալներ ունեցող շինաքար, ուստի այն ջրային ու ցամաքային ճանապարհներով բերվում էր Բաղնշ քաղաքի (այժմյան Բիթլիսի) մոտ գտնվող Կոտուս գյուղի քարհանքերից, որոնք լճից ռավական հեռու են ընկած, կղզուց մոտ 120 կմ. հեռավորության վրա։ Վարդի հաշվումներով 6150 մարդ, օրավարձով աշխատող բանվորներ, վարպետներ և զինվորներ աշխատում էին օր ու գիշեր, Յոթը նավ անընդհատ շինանյութ՝ քար, կիր, շինափայտ և երկաթ էր կրում¹⁴։

Քովմա Արծրունու նկարագրությունների հիման վրա, մեր մոտավոր հաշվումներով, միայն կղզու ափերի մոտ լճի հատակը և պատնեջի հիմքը լցնելու համար անհրաժեշտ էր մի քանի հարյուր հազար խորանարդ մետր չար բերել, շենք միայն այս վկայում է, թե այդ շինարարական աշխատանքները այն ժամանակվա մասշտաբներով ինչ վիթխարի լափեր են ունեցել։

Աղթամար կղզու նավահանգիստը անտարակույս պատկանել է ժ դարի Հայաստանի ինժեներական աշխի ընկնող կառուցումների թվին։ Եվ նա եզակի երևույթ էր հայ ժողովրդի ավատական շրջանի շինարարական արվեստի պատմության մեջ։

Պական նշանակալից չէին իրենց որակով այդ ժամանակ Սևանա և Վանա լճերում կառուցված ուրիշ նավահանգիստները, մանավանդ Վանա լճի ափին գտնվող թագավորանիստ ոստանում։ Մենք բոլոր հիմքերն ունենք ենթադրելու, որ Վասպուրականի Արծրունյաց թագավորության նավահանգիստները որոշակի դեր են խաղացել Կիլիկյան հայկական պետության նավահանգիստների կառուցման գործում, որ այնտեղ հատկապես մեծ շափեր ունեին։

Կիլիկիայի դիրքը Միջերկրական ծովի ափին՝ Արևելքի և Արևմուտքի քարավանային և ծովային առևտրական ճանապարհների

հանգուցակետերում, ինչպես նաև քնական հարստությունների առկայությունը նպաստեցին Կիլիկյան հայկական պետության տնտեսական ծաղկմանը և նա ակտիվ մասնակցություն էր ունենում միջազգային առևտրի մեջ։ Մեծ օգուտներ բերող առևտուրը խթանում էր քաղաքների և նավահանգիստների կառուցմանը։ Արհեստավորական արտադրանքի և արտաքին առևտրի կենտրոններ էին Տարսուս (Տարսուս), Ադանա, Մոսիս (Մամեստիա, Ումանի), Այաս, Կոռիկոս և Մերսինա (Մերսին) քաղաքները, որոնք կապված էին Արևմտյան Եվրոպայի, Դրիմի, հարավ-առևտրական շրջանների և Մեծաշոր ու Հեռավոր արևելքի երկրների հետ։ Նրանք բոլորը ունեին հարմարավետ և բարեկարգ նավահանգիստներ։

Մարինո Սանուտոյի տվյալների համաձայն, Կիլիկյան հայկական պետությունը իր ամենաբարձր ծաղկման շրջանում առնվազն 25 նավահանգիստ է ունեցել¹⁵։ Միջնադարյան քարտեզների վրա կարելի է գտնել նրա թվարկած նավահանգիստները, որոնց մի մասն այժմ կամ չկան, կամ ավերակներ են։

Ռազմական նշանակություն ունեցող նավահանգիստների թվին էր պատկանում մեծ մակերես ունեցող Պայաս նավահանգիստը, որը գտնվում էր Հայոց ծոցի արևելյան ափին, Ալեքսանդրետ քաղաքից ոչ շատ հեռու, դեպի հյուսիս։ Պայաս նավահանգիստից օգտվելիս են եղել խաչակրների նավերը, որոնք, ինչպես հայտնի է, կոիվներ էին մղում եգիպտական սուլթանության դեմ¹⁶, ԺԳ դարում կազմաված խաչակրաց մի արշավանքի ծրագրում նա բնութագրված է որպես «... աշխարհի լավագույն նավահանգիստներից մեկը, որ մուտք են գործում աշխարհի զանազան երկրների բազմաթիվ նավեր»¹⁷։

Առևտրական կարևոր նավահանգիստ էին համարվում Սելեկիան (Սիլիֆկե), Տարսուսը, Ադանան և Մոսիսը, որոնք տեղավորված էին Կալիկադոնոս (Գյոկ-սու), Կիզնա (Տուրսուալա), Սարա (Սիհուն) և Պիրամ (Ջիհուն) գետերի վրա, որոնց ստորին հոսանքները, նշված քաղաքներից մինչև ծովը, ԺԹ—ԺԴ դարերին դեռևս նավարկելի էին։ Սելեկիա, Ադանա և Տարսուս նավահանգիստները համեմատաբար փոքր նավեր էին ընդունում, մինչդեռ Մոսիս կարող էին մուտք գործել ծովային խոշոր նավեր։ Պետք է ենթադրել, որ նշված նավահանգիստներում խոշոր նավերի բեռնումն ու բեռնաթափումը կատարվում էր

¹⁵ Մարինո Սանուտո, հիշված աշխատությունը, էջ 88—90։

¹⁶ Նույն տեղում, էջ 38։

¹⁷ Archives de l'Orient latin, Paris, 1984, t. II, p. 349։

¹³ Քովմա Արծրունի, էջ 264։

¹⁴ Վարդ, նշված աշխատությունը, էջ 74։

փոքր առաջատանավերի և թիանավերի օգնությամբ, որոնք միջանկյալ շղակ էին հանդիսանում խարսկայանի և ափի միջև:

Նշանավոր էին նաև Աղալիայի և Մերսինայի ոչ մեծ, բայց բարեկարգ նավահանգիստները: Աղալիա քաղաքը, որը ԺԴ դարի եվրոպական ճանապարհորդներին գերել է իր գեղեցկությամբ, լավ պաշտպանված է եղել թե՛ ծովի և թե՛ ցամաքի կողմից¹⁸, քաղաքը պաշտպանված էր կրկնակի պարսպով, որի բազմաթիվ աշտարակները իրարից 35 մետր հեռավորության վրա էին գտնվում: Քաղաքը մեծ և գեղեցկաձև դարձաւ ուներ: Աղալիան գտնվում էր բարձր ապառաժուտ ափի վրա, որը կիսաշրջանաձև գրկել էր նավահանգիստը և այդ քանական դիրքը ավելի էր գեղեցկացնում քաղաքը:

Նավահանգստի երկու կողմերում և բարձր ժայռերի վրա փարոսներ էին դրված, որոնց լույսը ծովից երևում էր 8 մղոն հեռվից:

Մերսինայի նավահանգիստը կարող էր աշխատել գիշեր-ցերեկ¹⁹, Նրկու հզոր փարոսները ոչ միայն լուսավորում էին ամբողջ նավահանգստի մակերեսը, այլև պարզ եղանակին երևում էին 14 մղոն հեռավորությունից: Կիլիկյան հայկական պետության ծաղկման շրջանում համաշխարհային նշանակություն ունեցող խաղաղության նավահանգիստներից էին Այասը՝ Հայոց ծոցի արևմտյան ափին և Կոռիկոսը՝ Միջերկրական ծովի ափին, Սեյկեկայից ոչ հեռու:

Ամենամեծ օգուտներ բերող պետական մաքսատունը գտնվում էր Այասում՝ մինչև նրա զբաղվելը եգիպտական մամլուկների և ողմից 1337 թվականին, իսկ այնուհետև՝ Կոռիկոսում: 1163 թվականին Կոռիկոսն այցելած ճանապարհորդ Բենիամին Տուգելսկին այդ քաղաքը նկարագրում է որպես Արամի երկրի, այսինքն Հայոց երկրի²⁰ լավ ամրացված քաղաք-նավահանգիստ: Կոռիկոսում, որ համարվում էր կարևորագույն նավահանգիստներից մեկը, 1190 թվականի ամռանը կանգ է առել զեպի Անտիոք գնացող Ֆրիդրիխ Բարբառուայի զորքերի մի մասը: Այասում ևղել են մի շարք եվրոպական հայտնի ճանապարհորդներ: 1255 թվականի մայիսին Գիյոմ դը Ռուբրուկը, 1296 թվականին Նիկոլո և Մաֆեո Պոլոները, 1271 թվականին նրանց հետ միասին Այասում եղել է նաև Մարկո Պոլոն, որ քաղաքի մասին թողել է իր հիշողությունները:

Ներքև՝ Մարկո Պոլոն Միջին Ասիա գնացողներին խորհուրդ էր տալիս մեկնել Այասից:

Եվրոպայից զեպի Հեղկաստան և Զինաստան տանող հայտնի ճանապարհը անցնում էր Կոռիկոս և Այաս նավահանգիստների վրայով, այդ պատճառով էլ նրանք հայտնի էին ամբողջ աշխարհում: Վիլլեբրանդտի մոտ (ԺԳ դ.) Կոռիկոսը հիշատակված է որպես ծովափնյա քաղաք (in mari sita), իսկ չենովացիները Այասն անվանում են հայոց պետության նավահանգիստ (Portus Aycil domini regis Ermenie)²¹, Այդ նավահանգիստները, հատկապես Այաս էին բերվում ամբողջ Արևելքի ապրանքները, որոնք զենու համար իսպանիայից, Իտալիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Ավստրիայից և այլ երկրներից այդտեղ էին գալիս ավելի քան 25 ազգությունների պատկանող առևտրականներ: Ավելի հաճախ այդ քաղաքն էին գալիս չենովացիներ ու վենետիկցիներ, Հատինական Արևելքի դիվանում (Archives de l'Orient latin) բերված է մոտ 180 փաստաթուղթ, որոնք վկայում են Այասի հետ չենովացիների ունեցած առևտրական կապերի մասին: Նրանցից 27 փաստաթուղթ վերաբերում են միայն 1274 և 1279 թվականներին²², Այասն իր ունեցած հռչակով հիշատակվել է համաշխարհային անուն ունեցող գրողների՝ Բոկաչչիոյի և Արիոստոյի²³ երկերում:

Հնում Կոռիկոսն ու Այասը աննշան բնակավայրեր էին, բնական անբարեկարգ ծովային նավահանգիստներով: Միայն հայերի ձեռքն անցնելուց հետո և խալկրաց արշավանքների շրջանում նրանք զարգացան և դարձան միջազգային նավահանգիստներ:

ԺԲ—ԺԴ դարերին Կոռիկոսն ու Այասն արդեն խիտ բնակչություն ունեցող քաղաքներ էին: Նրանք հարմար նավահանգիստներ ունեին և լավ պաշտպանված էին թե՛ ծովի, թե՛ ցամաքի կողմից: Այասն ուներ միջնաբերդ և պարիսպներով պաշտպանված քաղաքային բնակչություն, իսկ Կոռիկոսը այդ բոլորից բացի, քաղաքային պարիսպներից դուրս էլ բնակչություն ուներ: Ամբողջ քաղաքը բաժանված էր առանձին շրջանների: Օտարերկրացիներն ապրում էին հատուկ թաղամասերում, ուր իշխան-հյուրանոցներից բացի կա-

21 Գիյոմ դը Ռուբրուկ, «Ուղևորություն արևելյան երկրները», Թարգմանություն Ա. Ի. Մալևիի, Ս. Պետերբուրգ, 1911, էջ 175 (ուսերեն):— Մաեկո Պոլո, «Ուղևորություն», Թարգմանություն Միլանի, Լենինգրադ, 1940, էջ 17 (ուսերեն):

22 Զ. Ղ. Ալիշան, «Սինոսան», էջ 334, 355:

23 Նույն տեղում, էջ 355—360.—«Կիլիկիա», Ս. Պետերբուրգ, 1804, էջ 211—212:

24 «Կիլիկիա», էջ 219:

18 Զ. Ղ. Ալիշան, «Սինոսան», էջ 304:

19 Նույն տեղում, էջ 276:

20 ՄԱ—ԺԲ դ. դ., «Երեք հրեա ճանապարհորդներ», էջ 34:

յին նաև պանդոկներ, բաղնիքներ, զանազան արհեստանոցներ, եկեղեցիներ և զբոսայգիներ²⁶։

Ինչպես վկայում են հայկական շինարարական արձանագրությունները, ծովի մեջ խրված ապոստոլոս Հրվանդանի վրա գտնվող Կոռիկոսի միջնաբերդը նշանակալիորեն ամրացվել է Ռուբինյան հարստության ներկայացուցիչների կողմից։

Միջնաբերդը երկու դարբաս է ունեցել, որոնց վերևում պարսպի մեջ խաչքարեր և հայերեն արձանագրություններ են եղել։ Այդ արձանագրությունների մեջ եղել են կառուցողների անուններն ու տարեթվերը։ Հյուսիս-արևելքում գտնվող դարբասը տեղավորված էր քառակուսի ոչ մեծ աշտարակի մեջ, սլարսպի արևելյան անկյունի մոտ, ուներ խրամատի վրա զգվող շարժական կամուրջ և միջնաբերդը կապում էր քաղաքի բնակչության հետ։ Երկրորդը, ծովային դարբասը, գտնվում էր երկու մեծ քառակուսի աշտարակների միջև, միջնաբերդի դեպի ծովն ուղղված հարավային անկյունում։

Ծովային դարբասը դուրս էր բերում նրան հատող պատնեշի վրա, որը միջնաբերդից ձգվում էր հարավ-արևմտյան ուղղությամբ։ Պատնեշը պաշտպանում էր բնական նավահանգիստը ալեկոծությունից և ծանծաղանալուց և միաժամանակ ապահովում էր նավերի հարմար դադարը և բեռնման ու բեռնաթափման աշխատանքները, ինչպես նաև պաշտպանում էր ծովահենների հարձակումից։

Նավահանգստի ծովային մակերեսը 25 000 քառակուսի մետր էր, որն ավելի քան երկու անգամ մեծ էր միջնաբերդի մակերեսից։ Դատելով մնացորդներից, պատնեշը թեք կտրվածք է ունեցել և կազմված է եղել ծով նետված խոշոր քարերից։ Վերևում նրա լայնությունը եղել է 5 մետրից ոչ պակաս, որը միանգամայն բավական էր տրանսպորտի երկկողմանի երթևեկության համար։

ԺԲ—ԺԳ դարերին մեծ աշխատանքներ են կատարվել Կոռիկոսի նավահանգիստն ընդլայնելու և նրա պաշտպանունակությունն ավելի ուժեղացնելու ուղղությամբ։ Այդ ժամանակ քաղաքին տիրում էին Կիլիկիայում իշխող հայ թագավորական տների՝ Ռուբինյանների և Հեթումյանների բարեկամները, որոնք ծովային ամրոց կառուցեցին և ընդարձակեցին նավահանգստի տարածությունը։ Այդ են հաստատում գլխավոր աշտարակի վրա պահպանված 1181, 1219 և 1251 թվակիր հայերեն արձանագրությունները, որոնց մեջ հիշատակվում են Լևոն Բ-ի և Հեթումի անուն-

ները²⁶։ Ըստ արձանագրությունների, հիմնական աշխատանքները կատարել է Կոռիկոսի իշխան հայ պատմիչ Հեթումը²⁷։

Ծովային ամրոցը կառուցված է Կոռիկոսի միջնաբերդից դեպի հարավ ընկած, ափից ոչ հեռու գտնվող փոքրիկ, ժայռոտ մի կղզու վրա, որը ծովի մակերևույթից 2,0 մետր բարձր է։ Նրա հատակագիծը անկանոն բազմանկյուն ձև ունի։ Շրջագծով կառուցված են հաստ պարիսպներ, որոնց հյուսիս-արևմտյան կեսում կան կլոր աշտարակներ, հարավ-արևելյան կողմում՝ քառակուսի, իսկ հյուսիս-արևելյան կողմում՝ մեկ եռանկյունաձև աշտարակ։ Գլխավոր բնակելի աշտարակը քառակուսի հատակագիծ ունի, նա պաշտպանում էր ամրոցի բաց-ծովը խրված սուր անկյունը։ Շրջագծի երկարությամբ շինություններից ազատ մասերում պարսպի միջով ձգվում էր կամարակապ սրահ (արևմտյան մասում ավելի տեղ-տեղ պահպանվել է), որի տանիքից պարսպի մեջ քաղված հրակնատներից ամրոցի պաշտպանները ետ էին մղում թշնամու հարձակումը։ Ամրոցի պաշտպանունակությունն ուժեղացնելու նպատակով նրա շուրջը շուրջ էին զգված խոշոր քարեր, որոնք խանգարում էին թշնամու նավերին մոտենալ կղզուն և դորք ափ իջեցնել։

Վ. Լանգլուայի հաղորդած տեղեկությունների համաձայն, կղզին ծովի մեջ մտած մայրցամաքի սրածայր հրվանդանի հետ էր միանում մոտավորապես մեկ կիլոմետր երկարությամբ ունեցող պատնեշի միջոցով²⁸, իր դիրքով ծովային ամրոցը ապահովում էր նավերի անվտանգությունը հյուսիսից նրան կից ծոցի խարսխակայանում, որի տարածությունը մի քանի անգամ մեծ էր, քան միջնաբերդին մոտ գտնվող նավահանգիստը։

Ինչպես պատմում է ծովագնաց Բոֆորտը, որը 1812 թվականին եղել է Կոռիկոսում, միջնաբերդին հարող պատնեշը ձգվում էր ծովափի երկարությամբ մինչև ծովային ամրոցը²⁹, Պատնեշի վրա կառուցված էին 10 մետրից ավելի բարձրություն ունեցող քառակուսի աշտարակներ, որոնց անկյուններում պիլոններ կային, որ ոչ միայն գեղեցկացնում, այլև ամրություն էին տալիս կառուցվածքին։ Աշտա-

²⁶ V. Langlois, «Voyage dans la Cilicie...», p. 225:—Նույնի «Inscriptions grecques, romanes, byzantines et arméniennes de la Cilicie», Paris, 1864, p. 48.

²⁷ Հերոս պատմիչ, «Պատմություն թաթարաց, թարգմ. Հ. Մ. Ավգերյանի, Վենետիկ, 1842».

²⁸ V. Langlois, «Voyage dans la Cilicie...», p. 211.

²⁹ Հ. Ղ. Ալիշան, «Միսուան», էջ 228, ժանոթագրություն 1:

²⁶ Հ. Ղ. Ալիշան, «Միսուան», էջ 262.

ռականների վերնում լուսատուներ կային, որոնք փարոսներ են հղել:

է. Չերքեզիդի և Ս. Գուերի տվյալներով Կոռիկոսի պատենը հետագայում երեսպատվել է քարե խորանարդներով³⁰, Ափից մոտ հարյուր մետր հեռավորության վրա, պատենների վերջում, հղել է փարոս, որի ավերակները գոյություն ունեին մինչև անցյալ դարը:

Ավելի լավ գիրք ունեւ նավահանգստային քաղաք Այասո³¹, որ կառուցված էր պաշտպանության համար քնական հարմարություններ ունեցող մի բարձունքի վրա (նկար 5): Արեւելքում՝ ծովի մեջ խրված հրվանդանի վրա էր գտնվում միջնաբերդը կամ առափնյա ամրոցը, որի հատակագիծը հյուսիսարեւելյան կողմում բավական սուր անկյուն ունեցող սեղանի ձև ուներ: Ամրոցը կրկնակի պարիսպներ ուներ, որոնք կառուցված էին սրբատաշ քարի խորանարդներից, որոնց մի մասը վերցված էր ավելի հին կառույցներից: Ներքին պարիսպը բարձր էր, կլոր և քառակուսի աշտարակներով, արտաքինը՝ ցածր, առանց աշտարակների, շրջապատված ջրով լի խրամատով:

Միջնաբերդի հարավային ծայրի մոտ սկսվում էր պատենը, որը նախ դեպի արևելք էր գնում, ապա ուղիղ անկյան տակ թեքվում էր դեպի հյուսիս և հասնում մինչև ծովային ամրոցը: Պատենը ավազի և մեծ քարաբեկորների լիցք էր, թեք ձև ուներ: Լայնությունը տարբեր տեղերում տարբեր էր, որոշ տեղերում բավական լայն, որ ըստ երևույթին հասակի անհարթության հետևանք էր:

Մովսիսի ամրոցը գտնվում էր կղզու վրա, որը կարող էր և արհեստական լինել: Տարածությամբ նա մեծ չէր և բաղկացած էր բարձր գլանաձև աշտարակից և հարավից նրան կից քառակուսի պատուհաններ ունեցող երկար կամարակապ շինությունից, ինչպես երևում է այս շինություններից, Այասի ծովային ամրոցը փոքր էր քաղաքի միջնաբերդից և Կոռիկոսի ծովային ամրոցից, բայց և այնպես ջրով շրջապատված լինելով և իր գործողությունները առափնյա ամրությունների հետ համաձայնեցնելով, նա զգալիորեն ուժեղացնում էր նավահանգստի պաշտպանական դիրքը թշնամու հարձակման դեպքում:

Մովսիսի ամրոցից քիչ հյուսիս գտնվում էր մի ուրիշ՝ երկարավուն կղզի, որի շնորհիվ նավահանգստի երկարությունը մոտ մեկ մղո-

նի էր հասնում, որեմն և զգալիորեն մեծանում էր նավահանգստի ջրային մակերեսը:

Խոշոր նավեր ընդունելու համար բավականաչափ խոր լինելով, նավահանգիստը միաժամանակ կարող էր ընդունել մեկ-մեկ, կամ խմբովին ժամանած մի քանի տասնյակ տարբեր նավեր: Հատկապես վենետիկցիները կանոնավորապես Այաս էին ժամանում տարեկան երկու անգամ ?—8 նավից բաղկացած մեկ, երբեմն էլ երկու խմբով, Կղզիների միջև եղած նեղուցը հանդիսանում էր նավահանգստի մուտքը, իսկ աշտարակը, որ ըստ երևույթին նաև փարոս է հանդիսացել, լավ նշան էր կողմնորոշվելու համար:

Հարմար դիրքը, կլիմայի առանձնահատկությունները և բարեկարգ վիճակը նպաստեցին Այասի նավահանգստին ԺԳ—ԺԴ դարերում դառնալու Արեւելքի և Արեւմուտքի ցամաքային և ծովային առևտրական մայրուղիների հանգույցը և որպես այդպիսին նա իրավամբ համաշխարհային հռչակ ձեռք բերեց:

Հայկական լեռնաշխարհի ուլլիսի կտրուտը ված լինելու պատճառով, նավահանգիստներն ու նավակայանները թվով սահմանափակ են եղել: Եղած տեղեկությունների համաձայն, մեծ զարգացում նրանք ստացել են միայն ուշ միջնադարում:

Գետերի վրա, նրանց նավարկելի մասերում կառուցվում էին հասարակ նավամատույցներ, որոնք նախատեսված էին ոչ մեծ նավերի համար: Ավելի բարդ կառուցվածքներ էին շինվում մեծ լճերում և Միջերկրական ծովի Կիլիկյան ծովագերքին: Նշանավոր նավահանգիստների թվին են պատկանում վանա լճում Աղթամարի կղզու նավահանգիստը, որ պատեններով պաշտպանված մեծ մակերես ուներ, որի մուտքն ըստ կարիքի փակվում էր ջրի մեջ սուղված դարբաններով:

Մեծ զարգացման հասավ նավահանգիստների շինարարությունը Կիլիկյան Հայաստանում: Նրանցից խոշորագույնները համաշխարհային հռչակ ունեին և կարող էին միաժամանակ ընդունել մի քանի տասնյակ ծովային մեծ նավեր: Նավահանգիստների ջրային մակերեսը պաշտպանված էր պատեններով, իսկ խոշոր նավահանգիստներ ամրոցներ ունեին ծովի մեջ: Հզոր փարոսները նավերին հնարավորություն էին տալիս նավահանգիստ մտնել նաև գիշեր ժամանակ:

Մայր Հայաստանի և Կիլիկյան Հայաստանի միջնադարյան նավահանգիստները ժամանակի նշանավոր կառույցումների թվին են պատկանում և արժանի ավանդ են հայկական շինարարական արվեստի պատմության մեջ:

³⁰ E. Herzfeld und S. Guyer, „Meriamlik und Korykos“, vol. II, p. 161.

³¹ 2. Դ. Ալիշան, «Սիսուան», էջ 380.



ալ բլծ-ժամէ, *f* ո՛վ ան լուծ խոր - հարդ,
 ղեն բլծ - ժամէ, *f* ո՛վ ան լուծ խոր - հարդ,
 բլծ-ժամէ, *f* ո՛վ ան լուծ խոր - հարդ,
 բլծ - ժամէ, ով խոր - հարդ.

mp մեա-փին մեջ Մեա-ռ-սին, *pp* իր աջ ձեռ - խովն լու - առ-ղիծ՝
pp poco a poco cres-cen-do
mp մեա-փին մեջ Մեա-ռ-սին, *pp* իր աջ ձեռ - խովն լու - առ-ղիծ՝
pp poco a poco cres-cen-do
mp Ահա վա-սիկ մե - ռով-քե մը՝ մեա-փին մեջ Մեա-ռ-սին, աջ ձեռ - խովն լու - առ-ղիծ՝
pp poco a poco cres-cen-do
 Ա-հա-վա-սիկ մե - ռով-քե մը՝ մեա-փին մեջ Մեա-ռ-սին, աջ ձեռ - խովն լու - առ-ղիծ՝

Ա-կըն-քառք մը՝ մե-հառ-սու - նին որ-մին վրա, *f* Հայ - կաղ - ճյառն Այր - բե - հա -
 որ-մին վրա *f* Հայ - կաղ - ճյառն Այր - բե - հա
 զիծ՝ որ - մին վրա *f* Հայ - կաղ - ճյառն Այր - բե -
 որ-մին վրա *f* Հայ - կաղ-ճյառն Այր - բե - հա

ru - ցը su - qrēg...
diminuendo

ru - ցը su - uu - qrēg...
diminuendo

uu - qrēg...
ppp

ru - ցը su - uu - qrēg...
diminuendo

uu - qrēg...
ppp

ru ցը su uu - qrēg...

Հան-կարծ՝ Սուր - բը, մեծ Տե - սիլ - ին ցն - րա - ւարժ, Մեռ - յա - լի, մը պէս ըն-
f

Հան-կարծ՝ Սուր բը, մեծ Տե - սիլ - ին ցն - րա - ւարժ, Մեռ - յա - լի, մեռ-յա - լի
f

Հան-կարծ՝ Սուր - բը, մեծ Տե - սիլ - ին ցն - րա - ւարժ, Մեռ-յա - լի
f

Հան-կարծ՝ Սուր - բը, մեծ Տե - սիլ - ին ցն - րա - ւարժ, Մեռ-յա - լի

դոս ոս - ի, փե-տը գը-րիցն և տախ-տակն Ի մե-ռին, Հրաւ-րին տակ առ-
poco a poco diminuendo

պես ոս - ի, փե-տը գը-րիցն և տախ-տակն Ի մե-ռին, Հրաւ-րին տակ առ-
poco a poco diminuendo

պես ոս - ի, փե-տը գը-րիցն և տախ-տակն Ի մե-ռին, Հրաւ-րին տակ առ-
poco a poco diminuendo

պես ոս փ, փե-տը գը-րիցն

Meno

առ-վե-լով, որ-մին առ-ջև ան-հու-նո-րեմ ծըն - րա - դեց...
 առ-վե-լով, որ - մին առ-ջև ծըն - րա - դեց...
 առ - վե-լով, որ - մին առ-ջև ծըն - րա - դեց...
 և ձե-ռին, առաջովով, որ մին առ-ջև ծըն - րա - դեց...





Ս Փ Յ ՈՒ Ռ Գ ՈՒ Մ

ԿՅՈՒՐՆՂ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՔԻԿՅԱՆ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ե Ր ՈՒ Ս Ա Ղ Ե Մ

Վեճափառ Հայրապետի կարգադրությամբ, հանայնով փաղածաքառ հրատառակում ենք սույն ընդարձակ հեղվածից որոշ մասեր, հատկապես Սրբոց Հակոբյանց մայրավանքի և Ս. Հարության Տաճարի վերանորոգության վերաբերյալ:

Ինչպես հայտնի է, մեկ տարի է ինչ ոկսվել են վերանորոգական աշխատանքներ Ս. Հարության Տաճարում, մասնակցությամբ երեխ իրավապետ պատեիաբնությանց՝ Հայն, Հայ և Կարապետ:

Վեճափառ Հայրապետը 1982 թվականի ապրիլի 30 թվականի կոնգրեսով կոչ արեց հայ ժողովրդին իր որոշարարի և վերապայմաններով ժամանակել Ս. Հարության Տաճարի վերանորոգության հայոց ընդհանուր ընկած ծախսերին:

Վստան ենք, որ հայ ժողովուրդն իր լուսմաներով կայանառացնի հայ հոգու ևսուն և համաբխտանակաւ սրբավայր Ս. Հարության Տաճարը:

Այնուհետև նորից Ս. Օձորյանը, ընդառաջելով նրուսողմի հայոց սրբազան պատրիարք ամենապատիվ Տ. Սեդիշ արքեպիսկոպոսի հունվար 28 թվականի պաշտոնական դիմումագրին և ամեն կողմից արտահայտված ցանկություններին և խնդրանքներին, բարեհաճեց ստանձնել Ս. Հարության Տաճարի վերանորոգման ազգային կենտրոնական հանձնաժողովի հախազանությունը:

Վստան ենք, որ Ամենայն հայոց Վեճափառ Հայրապետի օրհնությամբ, հայ ժողովրդի արտաբայի և վերապայմանությամբ և հանգանակիչ հանձնաժողովի անձնվեր աշխատանքով, զրախ կրեւրվի համազգային նշանակություն ունեցող Ս. Հարության Տաճարի նորոգությունը հարցը, որը միաժամանակ Հայ Եկեղեցու և մեր հավատի կենսոյնակությամբ վառ տպացույցը կլինի:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երուսաղեմ, իրրն ժննդամայր և մայրաքաղաք քրիստոնեության, առաջին դարեն ի վեր եղած է հրապույրի լուսարենոր Քրիստոնյա աշխարհին և իրեն կանչած է քարավանները միլիոնավոր ուխտավորներուն: Քրիստոնյա ժողովուրդներուն իղեայներուն ամենին նվիրականներն մեկը եղած է ունենալ իրենց սեփական, ազգային եկեղեցիները, վանքերը և հաստատությունները քրիստոնապետ սրբավայրերուն մեջ:

Հայ ազգը, ըլլալով քրիստոնեական լուսին րացված անդրանիկ ժողովուրդը, առաջին դարերեն իսկ անմասն չէ մնացած համաքրիստոնեական այս մեծ ձգտումին: Լատին եկեղեցվո հայերեն Հերոնիմոս, Դ զարուն, Ինթրեհեմեն զրած իր նամականներն մեկուն մեջ կվկայի, թե ինք ականատես եղած է շատերու կարգին և Հայաստանն հասնող հայ ուխտավոր իշխաններու ուղևորության, որոնք զիրենց հպարտ ուսերեն վար առած լեռնա-



Ս. Հարություն Տաճարի մուտքը

կանի կապարճն ու նիզակը, կերկրպագեն Քրիստոսի՝ մեր Տիրոջ ծննդյան սրբավայրին առջև, ի Բեթղեհեմա։

Մեր մատենագիրներեն Անաստաս վարդապետ, է դարուն, Բվասն վանորէից որ յԵրուսաղէմ գործին մեջ կվկայե, որ Զ գարուն յոթնասուն հայ վանքեր կային Ս. Երկրին մեջ։

Այսօր այդ պանծալի վանքերեն մեզի հասած են պանծալի մնացորդներ, մոզայիկ հատակները Համբարձման լեռան ու նաև Ս. Պողիկտոսի հայկական վանքերուն, որոնց հալածիր արձանագրութիւնները կներկայացնեն Ս. Մեսրոպ Մաշտոցյան գրերու հնագույն տիպարները։

Հայկական Երուսաղեմի պատմութիւնը կվկայե, թե առաջին դարեն սկսած, այլ քրիստոնյա եկեղեցիներու կարգին, Հայաստանյայց եկեղեցին ևս ունեցած է քրիստոսակոխ վայրերուն մեջ իր ազգապարծան իրավունքներն ու սեփականութիւնները, զորս կպահեցայսօր այնքան գուրգուրանքով և քրիստոնեական երկյուղածութիւնով։

Երուսաղեմի Հայկական քաղաքը. — Երուսաղեմ պատմական հին քաղաքը, շրջապատված ամուր պարիսպներով, կրածնվի

չորս քաղաքամասերու՝ քրիստոնեական Թաղամաս Հյուսիս-արևմուտք, իսլամներու Թաղամաս Հյուսիս-արևելք, հրեաներու Թաղամաս հարավ-արևելք և հայոց Թաղամաս հարավ-արևմուտք։

Երուսաղեմի Հայկական Թաղամասը ոչ միայն անունով հայկական է, այլ մանավանդ իբրև սեփականութիւն կպատկանի Երուսաղեմի հայոց Պատրիարքարանին։ Քաղաքի այս մասին մեջ կրնակին Երուսաղեմի տեղացի հայ գաղթականներ։ Կկարծվի, թե Երուսաղեմի հայ գաղութը հին ժամանակ հատկապես Հայաստանեն Երուսաղեմ փոխադրված է, ի պաշտպանութիւն մեր սրբատեղյաց, Երուսաղեմի Հայկական Թաղամասին մեջ այսօր կրնակին մոտ 2 500 հայեր։ Քաղաքը իր բարձրահայաց դիրքով կիշխե ամբողջ հին քաղաքին վրա ու կգրավե պատմական Սիոն լեռան բարձունքին երեք շորորդ մասը։

Հայկական Երուսաղեմի կեդրոնը կգտնվի Սրբոց Հակոբյանց մայրավանքը, որ աթոռանիստ սրբավայրն է Երուսաղեմի հայոց Պատրիարքութեան ու վարչական, հոգևոր կեդրոնը ամբողջ հայկական Երուսաղեմին։

Մերոց Հակոբյանց մայրավանքը. — Ունի սքանչելի դիրք, բազմած Սիոն լեռան գագաթին, մեկուկես միլիոն քառակուսի ոտք տարածութեամբ։ Շրջապատված է ամուր և բերդանման պարիսպներով, հինգ գործածական զոններով։ Վանական այս հսկա շրջափակեն ներս կան եկեղեցիներ, կրթական և մշակութային հաստատութիւններ, ընդարձակ պարտեզներ, վանականներու բնակութեան Թաղեր, ուխտավորական Թաղեր և բազմաթիվ սենյակներ։ Վանքը կրնա մինչև 5 000 հոգի պատսպարել։ Տարեկան 4—5 000 հայ ուխտավորներ կայլեցնեն Ս. Երուսաղեմ և կվայելեն Սրբոց Հակոբյանց վանքին ավանդական Հյուրասիրութիւնը։

Մերոց Հակոբյանց Մայր Տաճարը. — Հնագույն քրիստոնեական սրբավայրն է, որպես Երուսաղեմի առաջին եպիսկոպոս, Քրիստոսի ազգական Ս. Հակոբ Տյառնեղոր բնակավայրը և առաջին քրիստոնյաներու հովաքավայրը։ Եկեղեցվո Ավագ Սեղանին տակ Թաղված է նահատակված առաջին եպիսկոպոսի մարմինը, իսկ եկեղեցվո Հյուսիսակողմը, փոքրիկ մատուռի մը մեջ, Թաղված է գլուխը Ս. Հակոբ Զեբեթյան առաքյալին, առաջին նահատակ առաքյալը, գլխատված հրեից Հերովդես Թագավորին։ Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարը, նվիրված ըլլալով այս զույգ Ս. Հակոբներու հիշատակին, կկոչվի Սրբոց Հակոբյանց Տաճար։ Դարձյալ եկեղեցիներ ներս կգտնվի Երուսաղեմի եպիսկոպոս Ս. Մակարի գերեզմանը։

Հոյակապ է Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարը իրեն կառույց և հարդարանք, որպես հայ արվեստի դեղնեցկության թանդարան մը, քառակուսի հատակագծով 17×35 մետր տարածքով, վերնատունը ներառյալ, Զորս հաստարեստ, կեդրոնական սյուներու վրա կրարձրանա հոյակերտ և սլացիկ կամարներով առաստաղը ու կեդրոնի ջլակամարակեցտ գմբեթը՝ Սանահինի և Հաղբատի ոճին խոր նմանությամբ։ Տաճարին Մայր հորանը ունի 50 ոտքին ավելի բարձրություն ու շատ տիրական հմայք մը ամբողջ Տաճարին վրա, իր լայնատարած և բարձրադիր կողակով ու քսնդակազարդ և ոսկեզօծ, զեղակերտ խաչկալով։ 500-և ավելի արծաթյա կանթեղներ, շորս քյուրեկյա հսկա ջահեր, հնարվեստ և ղեղեցիկ ձեռագործներ, սագաֆալներու արժեքավոր դոներ, ոսկեդրվագ և քանդակազարդ փայտեղեն կերտվածքներ կդարձարեն Տաճարը Պատերը, մինչև 2 մետր բարձրություն, ձածկված են Քյոթահիայի (Կուտինա) կապտազույն և կանաչավուն հախճապակներով, իսկ անոնցմե վեր, գրեթե մինչև առաստաղ՝ արժեքավոր յուղանկարներով, մեծ մասամբ գործ ժԸ դարու վանական Հովհաննես սարկավազին։ Այլազ Սեղանի լայնադիր ընմին ճակատը ունի քանդակազարդ, մարմարյա, ոսկեզօծ ճակատ, Փխիպոս կաթողիկոսի օրերն մնացած (1650), իսկ դասերու բրոնզե ճաղերը ունին նյութարվեստ հարդարանք և ոսկեզօծում։

Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարին շուրջ կան ինը փոքր ու մեծ մատուռներ, Մայր Տաճարին քաջվող մուտքերով, բոլորն այլ դարձարված Մայր Տաճարի ոճով։ Մատուռները ունին սատավյա դեղեցիկ դոներ, գործ ժԸ դարու, իսկ Ս. Պողոսի և Ս. Պետրոսի մատուռները՝ փայտյա հայկական ոճով քանդակներով դուռ մը, ժԱ դարեն մնացած։ Մայր Տաճար և ինը մատուռները ունին սուրբ պատարագի 21 սեղաններ փայտյա, ոսկեզօծ, քանդակազարդ խաչկալներով, շինված Գրիգոր Շղթայակիր պատրիարքեն ժԸ դարուն, ինը մատուռները ունին հետևյալ անունները. Ս. էջմիածին, Ս. Հակոբ Գլխադիր, Ս. Մինաս, Ս. Մակար, Ս. Ստեփանոս, Ս. Նշան, Ս. Առաքելոց, Ս. Պողոս, Ս. Պետրոս։

Մայր Տաճարի և մատուռներու կառուցման թվականները և կառուցողները կման անհայտ։ Մայր Տաճարը կենթադրվի որ ըլլա Թ դարու կառույց, իսկ Ս. Մինասի և Ս. Գլխադիր մատուռները հայտնապես Դ դարու շինություններ են։ 1959-ին, Մայր Տաճարի սալահատակման առթիվ, քաջվեցան Ս. Մինաս և Ս. Գլխադիր մատուռներու հիմքերը, որոնց լուսանկարներու վրայեն հնագետ և նշանավոր պատմադետ ու Ս. Նրկրի պատ-



Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարին ներսը

մության մասնագետ Պեր վենսան հետևյալ տեսակետը հայտնեց. «Զույգ մատուռները Դ դարու գործ են, իսկ հիմքերը առաջին դարու մնացորդներ պետք է ըլլան։ Այս մատուռները հայտնապես հաստատված են նախկին տան մը հիմքերուն վրա»։

Նրուսադեմի մայրավանքը ունի արժեքավոր գանձատուն, ոսկեհյուս և թանկարժեք զգեստներ, անոթներ և այլն։ Գանձատան կարեւորագույն ցուցանմուշներն են Հեթում Բ թագավորի միակտուր սաթե արքայական գավազանը, Գրիգոր Պարոնտեր և Գրիգոր Շղթայակիր, Հովհաննես Կուրտ և Հովակիմ, Թեոդորոս և Կարապետ պատրիարքներու խույրերն ու ձուներագին շուրջառները և այլ թանկարժեք իրեր։ Գանձատան առարկաներուն 85 տոկոսը մեծագործությունն են Գրիգոր Շղթայակիրի։

Վանքին լուսարարապետ, որ նույն ատեն արարողապետն է Ս. Տեղյաց և ընդհանուր հսկիչը, երեք վեղարավոր վանականներու հանձնախումբի մը հետ հոգատարն ու պահապանն է գանձատան։

Ս. Թուռս եկեղեցի.— Ս. Թորոս եկեղեցին կգտնվի Սրբոց Հակոբյանց մայրավանքին

մեջ, Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարին հյուսիս-արևելքը: Կառուցված է ԺԳ դարուն Հեռում Բ թագավորին կողմի: Ներքնապես շատ վախճուլ է մանավանդ իր ճարտարապետական համաշխարհայինություններով: Ունի սուրբ պատարագի շորս սեղան և հարգարված է Մայր Տաճարի ոճով՝ ոսկեզօծ, քանդակադարձ, փայտակերտ փառավոր խաչկալ, պատերուն ծածկ Կոթինայի հախճապակիով և մեծադիր յուղաներկ նկարներով: Տաճարի հյուսիսային պատին մեջ կգտնվի եգիպտացիներու դեմ պատերազմի մեջ նահատակված Թորոս իշխանի գերեզմանը (որդի Հեթում թագավորի):

Տաճարը կգործածվի նաև որպես վանքի ձեռագրատուն:

Պատրիարքարան.— Պատրիարքարանը շինված է ԺԹ դարուն, Հովհաննես Զմյուռնիացի պատրիարքին: Գեղեցիկ կառույց մը, շքեղ և ընդարձակ ընդունելության դահլիճով, կամարակալ, գմբեթաձև և քարձրադիր առաստաղով, տպավորիչ հարդարանքով ու կահույքով: Կրնա հյուրասիրել մինչև 300—400 հոգի: Պատրիարքական ու ոսկեզօծ և քանդակազարդ գահույթին ետև կախված կահնորյա, ծիրանեզույն, ոսկեթել, արծեքավոր վարագույր մը, իսկ դահլիճի պատերը դարձրված են նշանավոր եկեղեցականներու և պետական գործիչներու, վեհապետներու նկարներով: Դահլիճի ապակեծածկ պահարանները կպարունակեն հնարժեք առարկաներ և դարերու ընթացքին պատրիարքներու ստացած պետական շքանշաններ: Սրահին շուրջ դասավորված են պատրիարքի բնակության սենյակները:

Սրբոց Հակոբյանց ձեռագրաց մատենադարան.— Հայաստանի Ս. Մեսրոպ Մաշտոցի ձեռագրաց մատենադարանն հետո, իր 4 000 ձեռագիրներու թվով, երկրորդ մեծագույն հայկական գրչագիրներու մատենադարանն է Երուսաղեմի ձեռագրատունը: Կիլիկյան գրչարվեստի լավագույն գործերու մեծամասնությունը կգտնվի Երուսաղեմ, ինչպես նաև լավագույն նմուշները Սարգիս Պիծակի և Թորոս Ռոսլինի գործերուն: Դարձյալ մեր արքունական տուններն մնացած շարք մը ձեռագիրներ, որոնցմե նշանավոր են Կեռան թագուհիի, Գագիկ Արասյան Կարսի թագավորի, Լեոն արքայորդիի, Վասակ իշխանի և ուրիշներու Ավետարանները: Կան մարդկային մշակույթի զանազան ճյուղեր շոշափող կրոնական և աշխարհիկ այլազան նյութերով ձեռագիրներ: Զեռագիրներեն կարևոր մաս մը արդյունք են Սրուսաղեմի վանականներուն ճարտար գրչարվեստին: Բոլոր ձեռագիրները, որոնց հնագույնները կվերանան մինչև Թ դար, թվագրված են ու կպահվին մեծ խնամ-

քով: Դժբախտաբար ցարդ լուսինք Երուսաղեմի ձեռագրատան լիակատար և տպագրված ցուցակը: Վանքի միաբաններն և ձեռագրատան տեսուչ գերաշնորհ Տ. Նորայր եպիսկոպոս Պողարյան լծված է այդ աշխատանքին և արդեն իսկ հրատարակած ցուցակին վեց հատորները:

Կյուլպենկյան մատենադարան.— Վանքի լավագույն թաղամասին մեջ կառուցված է 1929-ին, հանգուցյալ բարերար Գալուստ Կյուլպենկյանի կողմի: Երկհարկանի, քարաշեն, ընդարձակ, վախճուլ կառույց մըն է: Ունի հայերեն և օտար լեզուներով 50 000 տպագիր հատոր, կարգավորված հանրածանոթ ՏՈՒԻ-ի դասավորությամբ (Տուրիզ սիստեմ): Գրադարանը Ս. Քաղաքին մեջ ունի համարվ, անկե կօգտվին մերայիններու կարգին նաև քանիմաց օտարներ: Գրադարանը կստանա հայերեն և օտար լեզուներով 150 անուն թերթեր:

Կյուլպենկյան մատենադարանը ամբողջ Հորդանանի, ինչպես նաև արտասահմանի հայության մեծագույն գրադարանն է, իսկ Մերձավոր Արևելքի տասը մեծ գրադարաններն մին է:

Սրբոց Հակոբյանց տպարան.— Վանական այս տպարանը հաստատված է մոտ 130 տարի առաջ և մեծ ծառայություն մատուցած է մեր մշակույթին: Մինչև այսօր տպագրած է մոտ 1000 անուն հայերեն, կրոնական, բուսասիրական, գրական, պատմական լուրջ հատորներ: Հայաստանյայց Եկեղեցվո ծխական տպարանյանց գրքերու մատակարարությունը գրեթե ամբողջությամբ կկատարվի Երուսաղեմի տպարանին: Տպարանը 1870-են ի վեր կհրատարակե Պատրիարքարանի «Միոն» ամսաթերթը, որ ունի կրոնական, բանասիրական, գրական, պատմական բովանդակություն: Ներկայիս տպարանը կշարունակե իր մոտ մեկուկես դարու լուսավորության գործը, իսկ այս տարի օժտվեցավ արդիական նոր մեքենաներով:

Տպարանի ընդարձակ և հնօրյա կառույցը շինված է ԺԶ դարուն Եղիազար պատրիարքին և ունի գրատան, կազմատան և տպագրատան երեք բաժիններ: Տպարանը ունի հատուկ տեսություն և պաշտոններություն:

Ժառանգավորաց վարժարան և Ընծայարան.— Երուսաղեմի վանքը շատ հինն է ի վեր եղած է Հայաստանյայց Եկեղեցվո հոգևոր առաքելության կարևոր կեդրոն, իր սրբազան հարկեն ներս սնած ու կազմված եկեղեցականներով: Իսկ 120 տարի առաջ հաստատված է նաև եկեղեցականներու պատրաստության իր դպրեմանքը՝ Ժառանգավորաց վարժարանը և Ընծայարանը, որոնք ցայսօր տված

են հարյուրավոր եկեղեցականներ մեր ազգին:

Ներկայիս ժառանգավորաց վարժարանը ունի 43 աշակերտ, վարժարանի երկու մասնարածիներուն մեջ: Այդ մասնարածիներն առաջինը ժառանգավորաց վարժարանն է իր քառամյա շրջանով, ուր կուսուցվին լեզվական, պատմական, գիտական, կրոնական նյութեր, իսկ երկրորդը սարկավաղներու մասնարածինն է՝ Ընծայարանը, եռամյա ծրագրով, որմե հետո ընծայացուներ կձեռնադրվին վարդապետ: Այս երկրորդ բաժնին մեջ կուսուցվին աստվածաբանական, իմաստասիրական և եկեղեցագիտական ճյուղեր:

Ժառանգավորաց վարժարանը կբաղկանա երկու հոյակապ շենքերե, կառուցված Հովհաննես Զմյուտնիացի պատրիարքեն ժ. պալտուն: Ունի մայրիկներու ընդարձակ սլարտեղներ և խաղարան:

Վարժարաններու տեսչությունն ու փոխտեսչությունը կվարեն Պատրիարքարանեն նշանակված երկու վարդապետներ:

Սրբոց Թադևոսյանց երկրորդական վարժարան.— Սրբոց Թադևոսյանց երկու վարժարանը, մայրավանքի շրջափակեն ներս, քարաշեն ու քառահարկ, փառավոր շինություն մըն է, 1929-ին կառուցված Պատրիարքարանի նյութական միջոցներով: Ունի 4—18 տարեկան 400 հայ աշակերտ, ընդհանրապես զավակները նրուսաղեմի հայ գաղութին, որոնց 90 տոկոսը կուսանին անվճար: Վարժարանի ծախքերը կհոգացվին Պատրիարքարանեն, իսկ մաս մըն ալ արտաստեմանեն եկած նվիրատվություններով:


Կրթական ընթացքը կբաժնվի երեք մասերու՝ մանկապարտեղ երեք դասարաններով, նախակրթարան վեց դասարաններով և երկրորդական բաժին հինգ դասարաններով:

Վարժարանը ունի 30 հոգինոց ուսուցչական պաշտոնեություն, գլխավորված վանքեն նշանակված վարդապետ տեսչով մը:

Նրուսաղեմի համալսարանական սրբավայրերը և Հայ եկեղեցւոյ իրավունքներ.— Ավարտած ըլլալով շարքը նրուսաղեմի Հայկական թաղամասի ազգային սրբավայրերուն և հաստատություններուն, կանցնինք նշելու Ս. Երկրի համաքրիստոնեական սրբավայրերը և հայ ժողովուրդի դարավոր իրավունքները անոնցմէ ներս: Այդ սրբավայրերն են Ս. Հարություն Տաճարը, Ս. Աստվածամոր Գերեզմանի տաճարը, Համբարձման լեռան սրբավայրը և Բեթղեհեմի Ս. Մնեղյան Տաճարը:

Մենք պիտի խոսինք միայն Ս. Հարության Տաճարին մասին:

Ս. Հարության Տաճար.— Ս. Հարության Տաճարը կգտնվի Հին Նրուսաղեմի քրիստո-



Քրիստոսի Ա. Գերեզմանը Ս. Հարության Տաճարին մեջ

նեական թաղամասին մեջ, հաղիվ մեկուկես մղոն հեռու Սրբոց Հակոբյանց մայրավանքեն: Հսկա տաճար մըն է կառուցված Քրիստոսի գերեզմանին, Գողգոթայի խաչելության տեղվուն և իսկալուտի քարայրին ու այլ սրբատեղիներու վրա: Տաճարին սկզբնական կառուցողը եղած է Մեծն Կոստանդիանոս, Քրիստոսն վերջ 335-ին: 614-ին, պարսկական հարձակումներու առթիվ, կկործանի Տաճարը, նրուսաղեմի Մոտեստոս պատրիարքը նույն դարուն կվերաշինե զայն, բայց ոչ նախկին մեծությամբ ու փառքով: Հաջորդ իսլամ մուսուլման խալիֆան 1009-ին կկործանե Մոտեստոս պատրիարքի շինությունը, Կոստանդին Մոնոմախոս կայսրը 1048-ին կվերականգնե զայն, խաչակիրներ ժ.Ա դարուն անգամ մը ևս կվերաշինեն, այս անգամ մեկ ընդհանուր ծածկի տակ ամփոփելով Ս. Գերեզմանին մերձակա Գողգոթայի մատուռը և այլ սրբատեղիները: 1802-ին հրդեհ մը կլափե Տաճարին որոշ մասերը, որոնք 1808-ին կվերաշինվին, և սակայն եկեղեցւոյ շենքը, թե՛ ամրության և թե՛ գեղարվեստական տեսակետեն շատ բան կկորսեցնե: Այսօրվան Տաճարը գլխավորաբար խաչակիրներու շինություն է, պատրաստված Մեծն Կոստանդինի և Մոտեստոս պատրիարքի շինություններու մնացորդներու վրա:

Տաճարի կեդրոնական սրբավայրն է Քրիստոսի Ս. Գերեզմանը, որուն վրա կառուցված է բոլորաշեն հսկա Տաճարը 12 սյուներով և Մերձավոր արևելքի ամենն մեծ զմբեթով։ Այս բոլորաշենին կցված շուրջանակի կան մոտ 19 մատուռներ և եկեղեցիներ։

Տաճարի սեփականատիրության իրավունքը դասավորված է հետևյալ ձևով. Տաճարին ընդարձակ գավիթը, ներքին մուտքը, մուտքին Քրիստոսի պատանավայրը և շրջափակը, Քրիստոսի Ս. Գերեզմանը և անոր վերև բոլորաշեն մեծ Տաճարը ընկերովի սեփականություն են Հայ, Հույն և Կաթոլիկ եկեղեցիներուն և տեղվույն մաքրությունը, նորոգությունը և գործածությունը վերապահված է այս երեքին միայն։ Այս մասերուն իրենց կանթեղները, սրբանկարները, եկեղեցական զարդերն ու անոթները ունին երեք համայնքները միշտ հավասար թվով և չափով։ Ամեն հայ ուխտավոր, որ կմտնե մեծ բոլորաշեն Տաճարեն կամ Քրիստոսի Ս. Գերեզմանեն ներս, հպարտանքով կդիտե հայերեն գրերով սրբանկարները, կանթեղներն ու անոթները, քրիստոնեության ամենն նվիրական այս սրբավայրին մեջ։

Ամեն գիշեր ժամը 12-են մինչև առավոտյան 7, նախ հույներ և ապա հայեր ու հետո կաթոլիկներ սուրբ պատարագ կմատուցանեն Քրիստոսի Ս. Գերեզմանին վրա։

Տաճարի մնացյալ 19 մատուռներն ու եկեղեցիներն հայերուն կպատկանին Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, Երկրորդ Գողգոթայի վերնատան եկեղեցին, Ծրաշխավոր Ս. Աստվածածնա մատուռը, Յուդարերից Ս. Սեղանը, Աստվածածնա ուշաթափման սրբավայրը և շրջափակը, Հովսեփ Արեմաթացիի և Նիկողոզիմոսի գերեզմանները և մատուռը, Քրիստոսի հանդերձից բաժանման մատուռը, Ս. Հովհաննես ավետարանչի մատուռը եկեղեցիի գավթին մեջ։

Հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Ս. Հարություն Տաճարին մեջ.— Ս. Հարության Տաճարի մեր սեփականությունը մեջ բացառիկ նշանակություն մը ունի այս տաճարը իր հնությունը, գեղեցկությունը և մեծությունը։

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կգտնվի Ս. Հարության Տաճարին արևելքը, Տաճարի ընդհանուր մակերեսն բավական ցած, Գողգոթայի ժայռակերտ բարձունքին փեշերուն կից, ու դրացի խաչգլուտի քարայրին, ուրկե գտնվեցավ Քրիստոսի խաչափայտը Դ գարուն, Մեծն Կոստանդիանոսի մոր՝ Հեղինեի ձեռքով։

Այս շատ սիրուն եկեղեցին կառուցված է նույնինքն Հեղինեի կողմն, քստ մերայիններուն Ս. Լուսավորչի և Ս. Տրդատ Թագավորի կողմն։ Ունի 20 մետր լայնք և 20 մետր եր-

կայնք, քառակուսի հատակագիծ ու կեդրոնական չորս սյուներու վրա բարձրացող զմբեթ, Ընդհանուր կառույցը խաչակրներու կողմն ենթարկված է հիմնական նորոգության։ Ս. Լուսավորիչ եղած է մեր ժողովուրդի զարավոր սեփականությունը և հետևաբար մեր կողմն ենթարկված է կարևոր նորոգություններու, մին 1720-ական թվականներուն, մյուսը 1940—1945-ին, Այս վերջին նորոգության վար առնվեցան եկեղեցվո ծեփերը և բացվեցան Դ դարու շատ տպավորիչ քարակերտ որմերը, սալահատակվեցավ ամուր սալաքարերով ու կառուցվեցան պատարագի երկու սուրբ սեղաններուն վրա մարմարյա երկու շքեղ կաթողիկե խաչակարներ հայկական ոճով։ Իսկ պատերը զարդարվեցան մեծազդյուղանկարներով, որոնք Ս. Երկրի բազմահաղար հայ թե օտար ուխտավորներուն կծանոթացնեն Հայաստանյայց եկեղեցվո և ժողովուրդին պատմությունը. այսպես՝ քրիստոնյա առաջին պաշտոնական եկեղեցի Ս. Էջմիածնի հիմնադրությունը Ս. Գրիգոր Լուսավորչի կողմն, առաջին քրիստոնյա Թագավոր Տրդատի մկրտությունը, Ս. Սահակ և Ս. Ենսրոպ, հայ գրերու գյուտը, Աստվածաշունչի թարգմանությունը հայերեն, Ս. Վարդան, Ս. Տրդատ, Ս. Հուսիկ, Ս. Վրթանես և Հայաստանյայց եկեղեցվո այլ սուրբեր։

Ս. Հարության համաքրիստոնեական Տաճարին մեջ Ս. Լուսավորիչ տաճարը լավագույն կերպով կներկայացնե կենդանի, ապրող Հայաստան մը, իր սրբապատկերներով և հայկական կաթողիկե խաչակարներով։ Այս բոլորը իրականացած են շնորհիվ Սրբոց Հակոբյանց միաբանության նախանձախնդիր, փիտակից ու հավատավոր, ազգանվեր ոգիին և ճիգերուն։

Ս. Հարություն Տաճարի վերանորոգությունը.— Ցավով պետք է նշել, որ 1802 թվականի հրդեհին հաջորդող վերանորոգությունը եղած է շատ թերի, անճաշակ ու մեղավոր հալածություն մը, որով ոչ միայն այլանդակորեն փլացված կամ խեղաթյուրված են Տաճարին կառույցին գեղարվեստական արժեքները, այլև տկարացած է տեղեկությունը։ Այս բոլորին դերակատարը կհանդիսանա Հունաց Պատրիարքարանը, որ վերանորոգությունը իրեն միայն սեփականացնելու դիտումով, չէ վարանած դիմելու ամեն տեսակ մեղավոր միջոցներու, հապճեպ և անճաշակ, ճարտարապետական տեսակետն անհավակնիչու, մեղավոր դարմանումներու, որոնք փառավոր Տաճարը խեղճացուցած են, դարձնելով զայն նմուշ մը իրենց այլամերժ սադրանքներուն։ Կպատմվի, թե այդ օրերուն Ս. Հարության Տաճարի վերանորոգությունը արժած է 5 000 000 ոստական ուլալի, որուն մեկուկես

միլիոնը ծախսված է վերանորոգության համար, իսկ երեքուկես միլիոնը տրված է որպես կաշառք իշխանությանը, իրենց նենգ մտադրություններու հաջողության համար:

Այս բոլորին վրա կավելնա Ս. Երկրի 1927-ի երկրաշարժը, որ նոր հարված մը եղավ շենքի տոկունության:

30 տարի երկարաձգվեցան Տաճարի վերանորոգության քանակցությունները Հայ, Հույն և Կաթոլիկ Պատրիարքարաններուն միջև, մինչև որ կարելի եղավ որոշ եզրակացության մը հանգիլ: Այսօր երեք Պատրիարքարաններու գործակցությամբ սկսած է վերանորոգությունը, որ պիտի արժե 3 000 000 դոլար՝ մեկական միլիոն վճարելի յուրաքանչյուր Պատրիարքարանի կողմից, Երեք Պատրիարքարաններ ունին իրենց առանձին ճարտարապետները և ճարտարապետական գրասենյակը, ճարտարագետը, որոնք պիտի համագործակցին Տաճարին այն մասերուն մեջ, որոնց սեփականությունը ընկերվի է ու նորոգությունը և ծախքը վճարելի երեք համայնքներեն: Իսկ համայնքին սեփականությունները պիտի նորոգվին յուրաքանչյուր համայնքի ճարտարագիտական գրասենյակին կողմից առանձնակի ու ծախքը պիտի ըլլա վճարելի պատկան համայնքին միայն:

Ազգիս Սրբազնագույն ու Վեհափառ Կաթողիկոսը Տ. Տ. Վազգեն Ա. Գերագույն Պետը հանուրը Հայաստանյայց եկեղեցիին, արժեւորելով Ս. Հարության Տաճարի վերանորոգության համազգային հանգամանքը և Հայաստանյայց եկեղեցւոյ Ս. Հարության Տաճարեն ներս դարավոր իրավունքներու անաղարտ պահպանության նախանձախնդրությամբ, իր նախազանցության տակ կազմած է համազգային հանգանակիչ մարմին, մասնակցությամբ առաջավոր հայ եկեղեցականներու և աշխարհական հավատացյալներու, որուն պարտա-

կանություն տված է կազմակերպել համահայկական հանգանակություն մը, որով պիտի հողացվի Տաճարի նորոգության ծախքերու հայկական բաժինը՝ 1 000 000 դոլար:

Նորին Ս. Օծությունը նորոգության գործին մեջ կրերն նաև Իր շոշափելի նյութական օժանդակությունը հանուն Ս. Էջմիածնի:

Վստահ ենք, որ հանուրը Հայաստանյայց Հայրապետին սրտառուշ օրինակը պիտի խանգավառե հոգիները Հայաստանյայց եկեղեցւոյ բոլոր հավատացյալներուն՝ բերելու իրենց լավագույն մասնակցությունը Ս. Հարության Տաճարի նորոգության և մեր դարավոր ու նվիրական իրավունքներու պահպանության ի խնդիր:

Նորոգության գործին տեղվույն վրա հսկողն ու գործադրիչը պիտի ըլլա Երուսաղեմի հայոց պատրիարքը՝ ամենապատիւ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյան, մասնակցությամբ Ս. Հակոբյանց միաբանության: Պատրիարք հայրը նույն ժամանակ փոխ-նախագահն է Համազգային հանձնախումբին:

Էջմիածինն ու Հայկական Երուսաղեմ, աւստիք հաւատոյս Հայաստանյայց եկեղեցւոյ Եթեմիա Ս. Հայաստանյայց եկեղեցւոյ Գլխին ու առաջնորդող ղեկավարն է Արարատյան Մայր Աթոռը Ս. Էջմիածին, ապա Հայաստանյայց եկեղեցւոյ մարմինն ու սիրտն է Հայկական Երուսաղեմը, իրեն երկրորդ հանդիսարանը հայուն կրոնազգած ու ազգանվեր ասրումներուն ամենեւեց ըյրերեղացած թրթռացումներուն:

Հայկական Երուսաղեմը մեր պապերեն մեղի հասնող կոթողական ժառանգություն է: Պահենք զայն համազգային ճիգերով, գերագույն և անայլայլ սիրով և ընծայենք զայն մեր և զալիք օրերուն, որպես լուսավոր փարոս հայուն հավատքին, կրոնական և ազգային ոգեկանություն:





ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ

„REVUE DES ETUDES ARMENIENNES“ ՀԱՆԴԵՍԻՆ

«Հանգես հայագիտական ուսումնասիրություններում» («Revue des études arméniennes») պարբերաթերթը, հիմնված 1920-ին Ա. Մեյսի և Ֆ. Մակլիերի ձեռքով, դադրեցավ հրատարակությունը 1933, թողլով պարապ մը, զոր ոչ մեկ այլ հրատարակություն հաջորդեցավ լեցնել:

Հաճույքով տեղեկացանք, թե Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության առատաձեռն աջակցության շնորհիվ, «Հայագիտական ուսումնասիրություններում» հանգեսը պիտի վերածննդի նոր ձևի մը տակ և նյութական պայմաններու մեջ, որոնք կապահովեն կանոնավոր հրատարակություն մը բազմաթիվ տարիներու համար:

«Հանգես»-ը պիտի ունենա խմբագրական մարմին մը, որ ներկայացված են հայագիտության զանազան մարզերը, ինչպես և զանազան մշակույթներ, որոնցմով հյուսված է Հայաստանի պատմությունը: Խմբագրական մարմինին կանգամակցին պր. պր. Ե. Բենվենիստ, Կ. Գահեն, Մ. Գանարդ, Ժ. Դյումեզիլ, Ա. Դյուրոն-Սոմմեր, Ֆ. Ֆրեյդի, Ա. Կրապար, Պ. Լեմիրլ, Շ. Մերսիե, Ա. Միրամբել, Լ. Ռոբեր:

Խմբագրության քարտուղարն է պր. Հայկ Պերպերյան, 10 Bd. Delessert, Paris (16):

Կառաչադրենք 1963-ին հրատարակել «Հայագիտական ուսումնասիրություններում» նոր շարքին առաջին հատորը:

«Հանգես»-ը լայնորեն տրամադրելի է բոլոր հրկիրներու գիտնականներուն, պիտի հրապարակե գիտական հոդվածներ, ուսումնական ամեն ճյուղերու վերաբերյալ, լեզվագիտություն և բանասիրություն, պատմություն և հնագիտություն, րեկերաբանություն և ազգագրություն, ամենեն տարածուն և միևնույն ատեն ամենեն հասկնալի հեռապատկերի մը մեջ, ընդգրկելով հարաբերությունները հայկական մշակույթին՝ դրացի երկիրներուն հետ:

Լայն տեղ պիտի տրվի Հայաստանի մեջ կատարված աշխատանքներու Թարգմանություն, որոնք, այլապես, անմատչելի կմնան Արևմուտքի բազմաթիվ գիտնականներու ջանազան ուսմանց զարգացման մասին ընդհանուր ակնարկներ, գրախոսական ցուցակներ և ժամանակագրություններ պիտի ավելնան հոդվածներուն և ինքնագիր ծանոթագրություններու վրա, որոնք կրնան ընդգրկել քարտեզ և նկար:

Ուրախ պիտի ըլլանք ունենալով Ձեր ալ աջակցությունը, խնդրելով նույնպես, որ ներկա հայտարարությունը հանձնեք Ձեր ընթերցողներու գիտության:

Խմբագրական մարմնի կողմից
տնօրեն

Ե. Բենվենիս

Փարիզ,

հոկտեմբեր 1962





Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՍԻՍՆԵՐԻ ՀԱՅԱՅՔԻ ՏԱԿ*

Ե՛րբ են եղել այսքան բեղուն, այսքան բերրի հողերն հայոց,
Ե՛րբ են ծաղկել այգիները այսքան ջօայլ ու լիաճող,
Ե՛րբ է այսպես լուսարծակվել հայոց երկնի աստղը սուտակ՝
Ջանգուն այսքան ուրախ եղել Մասիսների հայացքի տակ:

Ե՛րբ է այսպես շատրվանել հայոց բախտի արևը բոլր,
Հույզ ու երազ ծիածանվել հայոց հողում դարերով որբ,
Ե՛րբ է, ե՛րբ է եղել այսքան մեր գարունը լուսապսակ՝
Զմեռը մեր՝ ջերմ ու թեթև՝ Մասիսների հայացքի տակ:

Ե՛րբ է տեսել հայն իր կյանքում այսօրվա պես մի Հայաստան,
Հեքիաթային ու լուսակերտ Երևանի նման ոստան.
Ու այսպիսի մի նոր սերունդ՝ աշխարհացունց մի նոր բանակ,
Ե՛րբ է աճել, ռ՛վ է տեսել Մասիսների հայացքի տակ:

Ե՛րբ է եղել հայը այսքան մեծասքանչ ու հրաշագործ,
Ե՛րբ է այսպես հեռու թռել աստղերի մեջ միտքը հայոց,
Մեր վերելքի սանդուղքները՝ դեպ երկնքի ծովը անտակ,
Ե՛րբ է եղել այսքան ամուր՝ Մասիսների հայացքի տակ:

Ե՛րբ է եղել հին աշխարհում այսքան ջենջուղ ու շինարար,
Ո՛վ է տեսել հրաշք մի նոր՝ մեծակառույց մի նոր աշխարհ,
Ու երգն հայոց ե՛րբ է հնչել այսքան խնդուն ու անպարփակ,
Այսքան ծաղիկ ե՛րբ է բուսել Մասիսների հայացքի տակ:

Ե՛րբ է եղել այսքան հպոր ժողովուրդը նաիրական,
Ե՛րբ է եղել ազգերի հետ այսքան մոտ ու եղբայրական,
Հազարամյա իր պայքարում աշխարհն հայոց ողբանվազ,
Ե՛րբ է այսքան խաղաղ ապրել Մասիսների հայացքի տակ:

Ե՛րբ է եղել ուղին հայի այսքան շիտակ ու ապահով,
Այսքան ճամբա՝ ե՛րբ է անցել մեր երկնամերձ լեռնաշխարհով,
Դուռն աշխարհի բաց է մեր դեմ ու դռները մեր անխորտակ
Բաց են հավերժ աշխարհի դեմ՝ Մասիսների հայացքի տակ:

1959

* Հանույքով վերադրատարակում ենք Ա. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի ջրջանավարտ և Մայր Աթոռի գրասենյակային աշխատող Վաչագան Հովհաննիսյանի վերջերս Հայպետհրատի կողմից Երևանում լույս ընծայված «Վաղվա համար» բանաստեղծությունների գրքուկից սույն քերթվածը, ի քաջալերություն երիտասարդ բանաստեղծի:—խմբ.:

ԳՈՒԳԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ*

№ 169

ՄԱՅՐ ՏՈՄԱՐ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ

Փետրեղ՝ 352, Պրակտիկե՝ 35, յուրաքանչյուրը 10-ական թերթիք: Մեծադյուրե՝ 46,8×31,5×5,5 սմ.: Նյութը՝ շատ հասարակ թուղթ: Կաշե-
պատ ստվարաթուղթ: Պաշտպանակներ՝ սկզբում 3 հատ, իսկ վերջում բազմաթիվ հասարակ թղթեր: Վի-
նակ՝ թավարար: Գրություններ՝ միասույն: Դատարկ
թղթեր՝ 1ա—3բ (յուրաքանչյուր իրի հատկացված էջի
վերջավորության կա 2—3—4 թերթ դատարկ թուղթ, հե-
տագայում շարունակելու համար) 298բ—352բ: Տողե-
ր՝ անհամաչափ, 2 տողից մինչև 30—35 տող: Գծումներ՝
զրկած է աչքի լսիկով, առանց գծումների: Գիր՝
շեղագիր: Զատնագրություն՝ չկա: Գրքի՝ ան-
հայտ: Պատվիրատուն՝ Գևորգ Գ Ամենայն Հայոց Կա-
թոլիկոս: Ժամանակը՝ 1875 թ.: Վայրը՝ Ս. Էջմիածնի
վանք: Մանրագրություն՝ սույն ձևագիրը հանված է
Մայր Աթոռի Դիվանատան արխիվից:

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Թ. 4ա.— Գևորգ Գ Ամենայն Հայոց Կա-
թոլիկոսի կոնդակը Մայր Տաճարի նորահաս-
տատ թանգարանի մասին:
Թ. 8ա.— Աղանիք Ս. Միլոտնի (աղավնի-
ներ, անոթներ և արկղեր) 11 հատ:
Թ. 11ա.— Ասազանք Միլոտնի և ջրօրհնաց
(6 հատ):
Թ. 13ա.— Աման վարդաջրոյ (կիլեպտան)
(13 հատ):
Թ. 15ա.— Աշտանակք (75 հատ):
Թ. 21բ.— Ափսէք (6 հատ):
Թ. 23ա.— Զեռագիր և տպագիր մագաղա-
թեայ և թղթեայ Անտարանք (66 հատ): (Զե-
ռագրերը ընդամենը 29 հատ են, որոնցից
մեկը, № 61 Տոնացույց է, 1289 թվականի,
իսկ մնացյալ 28 հատը Ավետարաններ՝
№ № 1, 5, 6, 7, 10, 12, 13, 23, 24, 25 (1294
թվի), 27, 28, 30, 33, 34, 35, 36, 37, 38, 39,
40, 41, 42, 44, 45, 53, 59 և 60: Կա յուրա-
քանչյուր ձեռագրի և կազմի համառոտ նկա-
րագրականը 3—5 տողով):
Թ. 32ա.— Անուանք և տեսակք թենցաց
(54 զույգ բազպան):
Թ. 37ա.— Բուրվաք (27 հատ):
Թ. 40բ.— Բաժակք (19 հատ):
Թ. 43ա.— Գաւազանք (100 հատ):

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1960 թվա-
կանի № № 5-ից, 6-ից, 7-ից, 8-ից, 1961 թվականի
№ № 9-ից, 10-ից, 11-ից, 12-ից, 1962 թվականի
№ № 1-ից, 2-ից, 3-ից, 4-ից և 5-ից:

- Թ. 50ա.— Կօրիւրայք (26 հատ):
Թ. 53ա.— Գինդ (2 հատ):
Թ. 53բ.— Գոգնոց Ս. Սեղանաց (29 հատ):
Թ. 58ա.— Գօտիք ժամարարաց (65 հատ):
Թ. 64ա.— Գրկալք (6 հատ):
Թ. 66ա.— Ոսկեայ, արծաթեայ և պղնձեայ
հին դրամք (311 հատ):
Թ. 70ա.— Ծմիկորոնք (77 հատ):
Թ. 77ա.— Ծմիկորոն կարճ (10 հատ):
Թ. 79ա.— Թագ հայրապետական և եպիս-
կոպոսական և Տրդատայ թագաւորին (59
հատ):
Թ. 87ա.— Թաշկինակք (9 հատ):
Թ. 88բ.— Ժամացոյցք (1 հատ ժամա-
ցույց և 1 հատ շղթա):
Թ. 91ա.— Շապիկք փոխասաց մոմակա-
լաց (4 հատ):
Թ. 93ա.— Ս. Գեղարդն և Կենաց փայտք և
Աջք և մասունք սրբոց (և խաչեր) (160 հատ):
Թ. 109ա.— Խաչք վեղարի և պարանոցի
(16 հատ):
Թ. 112ա.— Խաչվառք (12 հատ):
Թ. 115ա.— Ոսկեայ և արծաթեայ մեծ, մի-
ջակ և փոքր քառաթև և բոլորակ խաչք (320
հատ):
Թ. 136ա.— Խնկոյ տապանակք վասն աւագ
սարկաւազաց և խնկատուփք (19 հատ):
Թ. 139ա.— Խնկանոցք յորս ծխին խունկք
(9 հատ):
Թ. 141.— Խաչելայք կաթողիկոսական (36
հատ):
Թ. 146ա.— Մածկոցք Միլոտնի կաթսայի
և կաթողիկոսական ամպհովանեաց (12
հատ):
Թ. 150ա.— Մածկոցք սկզույ (31 հատ):
Թ. 155ա.— Կոնքեք (18 հատ):
Թ. 159ա.— Կանթեղք արծաթիք (116
հատ):
Թ. 164բ.— Կնիք արծաթիք կաթողիկո-
սական և եպիսկոպոսական (53 հատ):
Թ. 165ա.— Կաթսայք Միլոտնի (3 հատ):
Թ. 166բ.— (Կաղամարներ) (3 հատ):
Թ. 167բ.— (Համրի) (1 հատ):
Թ. 168ա.— Հողաթափք (26 զույգ):
Թ. 170ա.— (Չագար) (1 հատ):
Թ. 171ա.— (Ճրագարան) (2 հատ):
Թ. 173ա.— Մատենք եկեղեցականք (38
հատ, որոնց 5 հատը ձեռագրի մաշտոցներ
են՝ № № 31, 32, 33, 34 և 35):
Թ. 176ա.— Մատանիք (13 հատ):
Թ. 179ա.— (Մկրատ և պատառաքաղ (3
հատ):
Թ. 180ա.— Շապիկք սարկաւազաց և դրպ-
րաց (369 հատ):
Թ. 196ա.— Շապիկք դրակալի (3 հատ):

- Թ. 198ա.— Շապիկը ժամարարի (12 հատ)։
- Թ. 200ա.— Շար Աւետարանաց (33 հատ)։
- Թ. 204ա.— Շար գաւազանաց (15 հատ)։
- Թ. 208ա.— Շքանշանք (15 հատ)։
- Թ. 211ա.— Շուրշառքի պատուական դիպակաց և ի թանկագին նիւթոց (128 հատ)։
- Թ. 223ա.— Շուրշառքի հասարակ դիպակաց և յայլ նիւթոց (77 հատ)։
- Թ. 223ա.— Ուրարք սարկաւազաց (42 հատ)։
- Թ. 237ա.— Ուրարք կիսասարկաւազաց (7 հատ)։
- Թ. 238ա.— Պատկերք և զարդք, որ ի վերայ նոցա, բացի պատկերաց որ ի խաչկալս և յորմս Տաճարի (54 հատ)։
- Թ. 243ա.— Պնակք հայրապետական և արժիւք (10 հատ)։
- Թ. 247ա.— Զահք (15 հատ)։
- Թ. 251ա.— Սկիհք և մազգմայք (62 հատ)։
- Թ. 257ա.— Սաղաւարտք (25 հատ)։
- Թ. 260ր.— Սրբատուփք (10 հատ)։
- Թ. 261ր.— Սրբիչ սեղանոյ (1 հատ)։
- Թ. 262ա.— Ստոման և կոնք (իրրուլ և լեկէն) (10 հատ)։
- Թ. 264ա.— Վակասք (61 հատ)։
- Թ. 270ա.— Վարագոյրք Ս. Սեղանաց և խորհրդանոցի (60 հատ)։
- Թ. 277ա.— Տուփք (5 հատ)։
- Ս. 279ա.— Փորուրարք (77 հատ)։
- Թ. 286ա.— Քօղք կաթողիկոսականք (13 հատ)։
- Թ. 289ա.— Անուանք և տեսակք արծաթեայ քշոցաց (17 հատ)։
- Թ. 291բ.— Օղ (2 հատ)։
- Թ. 292ա.— Օթոցք (43 հատ)։
- Թ. 298ա.— (Զանազան իրեր՝ կոնք, սեղան, կրակարան և այլն—19 կտոր)։

ՀԻՇԱՍԱԿԱՐԱՆ

Թ. 4ա.— Գէորգ Ստոյ Բրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս ամենայն Հայոց, Սայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ չքմիածնի Շնորհք, խաղաղութիւն և ողորմութիւն Աստուծոյ առ սիրելի եղբարսդ իմ, որ յետ ելանելոյ իմոյ յաշխարհէս յայսմանէ՝ ընտրութեամբ և զօրութեամբ Հոգւոյն ունիք ժառանգել զԱթոռ նրանելի Սրբոց Առաքելոց՝ զառաքինաշաւիղ սրբոց հարց յաջորդաց նոցա՝ և զիմոյ նուաստութեանս, որ չեմ իսկ արժանի թէ՛ կոչեցայց յաջորդ և զահակալ ընտրելոցն այնոցիկ, որ զՀոգի և զմիտս Բրիստոսի և զՀրեղէն լեզու Սրբոյ Հոգւոյն ունէին ի րանս իրեանց, որք յօրինակ հաւատացե-

լոց ի մարմնի իբրև դանմարմինս քաղաքավարեալ՝ և յիրկրի ի մէջ կամակոր և խեղաթիւր ժողովրդոց իբրև զլուսաւորս ի հաստատութեան երկնից փայլեցան, որք զերեւելի երկիրս լրիւ իւրով ընդ ոտիւք իբրև զկղզեանս ունելով, և զանձանց ինչ ոչ խնդրելով ի թէս Հոգւոյն միշտ յաւիտենականն վերամարման, յամենայնի միայն զփառս Եկեղեցւոյ Բրիստոսի և զխաղաղութիւն ազգիս խորհելով՝ արեամբ շափ նահատակեալ ընդդէմ տարերց աշխարհիս, թողին զաւանդս պատուականս և զազգի ազգի յիշատակս անմահս, և ջանդի լի էին յուսով անմահութեան ընդ ուր և ընդ սուր անցեալք ընդ երկիրնս ի քաղաքակցութիւն սրբոց, և գրեցան անուանք նոցա ի դպրութեան կենաց անմահ Գառնին՝ կալով և մնալով կենդանի յեկեղեցւոյ։

Արդ հայեցեալ իմ յիս գնացից երանելեացն ընդ բազում պարտութեամբ անհապաւր և ճմլէր անձն իմ, յորոց վնասեցեալ ճողովարեւ զանձն՝ զանց զտկարութեամբ իմով և զանձնոնտութենէ՝ ժամանակիս արարեալ՝ ոչ վհատեալ լքայ՝ թէ ոչ ոք է որ համաշունչ և ընտանեւար հոգայցէ ընդ իս զանտեսութենէ՝ Առաքելական Սրբոյ Աթոռոյս, և ոչ իսկ ոգին ընտանի ապստամբութեան՝ որ յօտարաշունչ ազդեցութենէ՝ դրդեալ զօրանալոյ յազգայինս ոմանս ի Կ. Պօլիս, զՍտոյն սասն և զԱղթամարայն՝ խորհելով զխորհուրդ վտանգաբեր, և զփառս Հարսիս լուսոյ, և զերեսս որդւոց Արեւելից հնարէր ճգնէր յարեւ(թ. 4բ)մուտս կոյս դարձուցանել, և փեռնկտումն՝ հասուցանել միութեան Սրբոյ Եկեղեցւոյն, ոչ երբէք կարաց թուլացուցանել զոգի իմ, այլ վառեալ ի սէր ազգի և Եկեղեցւոյ՝ օգնականութեամբ Աստուծոյ ի դիմի հարեալ՝ միայնակ ամենայն հնարից խորամանկ օձին, կէտ եղեալ նպատակի մտաց իմոց անթուլ աշխատութեամբ և անըմբերելի դժուարութեամբ յազթել թշնամեաց Եկեղեցւոյ մերոյ, և զանկեալ փեռնակ նորին բարձրացուցանել, հոգալով զկարեւորացն և զանհրաժեշտ պիտոյից ի հաստատութիւն և ի փառս Մօրս լուսոյ Սրբոյ չքմիածնի և համայն լրութեան ազգիս ընդ իմում կարի։

Իսկ յորժամ յառաջին նուագի մտի ի պահարան Տաճարիս մեծի, որ խորան կոչիր, որ և կայ և երեկ արդ ընդ հին կաղմութեանն առ դրամր նորակառոյց պահարանացս, գտի փոքր յոյժ և անձուկ, և ոչ բաւական ի պարունակել զամենայն զգեստ, սպաս և զանօթս Աթոռոյս, որ մի ի միոյ վերայ խառն և դիզաղէզ զմիմեամբք կուտակեալ՝ մերձ էին յապականութիւն, և կարծել այնպէս էր տեսողաց՝ եթէ ոչ ոք խնամատ էր լեալ և հոգաժող պահպանութեան այնոցիկ, և յայնպիսի անշքացեալ պայմանի գտանէին, մինչ զի և

Ք. 318բ.—Այս աղալվել էմ և չի աղալում:

Ք. 327ա.—Այս աղալվել էմ չի աղալում:

Ք. 337ա.—Այս գրածիս մեջն շատ սխալներ գալ որովհետեւ օրինացն հին գրքերիցն էմ վեր գրել և այտ հղել աղալներ դեռ ես ուղղեցիմ թիւ:

Ք. 402.—1926. վեռը գաղանաց կառավարութեանըն լինի թէ ոչ:

№ 171

ԻՐԱՎԱՅԻՆ ԱՆՏԱՐԱՆ

Թերքերը՝ 10—Պրակները՝ 2, առաջինը՝ 6 թերթ, իսկ երկրորդը՝ 4:—Մեծությունը՝ 38,5×27,5×1,3 սմ.:—Նյութը՝ հաստ թուղթ:—Կազմը՝ թավշապատ ստվարաթուղթ: Կողքի երկու արտաքին երեսները զարդարված են արծաթյա քանդակներով, իսկ ներքին երեսները ծածկված են թիթեղով: Առջին կողքի վրա, ներքևում, կա մի բաց գերեզման. վերևում երեսում է հարուցյալ Քրիստոսը, ձախ ձեռքում զրոշակակիր մի խաչ: Կենտրոնի ձախակողմյան մասում կա մի հրեշտակ, իսկ աջակողմյան մասում՝ երեք կանայք և երեք խաչեր: Կողքի շրջա անկյուններում կան ժեկական հրեշտակ: Կողքը հզերված է փորագրված արծաթյա շրջանակով և ունի մի քանդակ, որը ներկայացնում է Քրիստոսի պատանեցով ծածկումը Հովսեփ Արեմաթացու և երկու յուզարբեր կանանց կողմից: Վերևում կա Քրիստոսի խաչելությունը, իսկ շրջա անկյուններում՝ մեկական հրեշտակ: Կողքը հզերված է փորագրված արծաթյա շրջանակով:—Պատկերակներ՝ ակզրում և վերջում երկուական թերթ սպիտակ հաստ թուղթ:—Վիեակը՝ քայքայված:—Գծությունը՝ երկայուն:—Տողերը՝ 22:—Գծումները՝ ճշումով:—Գիրը՝ բուրդգիր:—Ձառագրությունը՝ կան գեղեցիկ շրաների նկարներ: Չորս ամբողջական էջերում (Ք. թ. 1բ, 3բ, 5բ և 7բ) կան նկարներ Քրիստոսի կյանքից, իսկ այլ շրջա էջերում՝ հիսախորաններ (Ք. թ. 2ա, 4ա, 6ա և 8ա) շրջա ավետարանիչների նկարներով: Արանցից բացի կան նաև 4—5 ծաղկեփղեշի և մի քանի թղնագրեր:—Գրիլը՝ Թովմաս սարկավաց Կոստանդնուպոլսեցի:—Պատվիրատունը՝ Սեմեփան, Խորայն և Պետրոս Էյպիֆաններ:—Մոդելը՝ անհայտ է, շատ հավանաբար Թովմաս սարկավագը հանդիսանում է ն' գրիլը ն' ծաղկողը:—Ժամանակը՝ 1832 թ.:—Վայրը՝ Կարնո շրջանի Զիթավոզ գյուղը:—Մանրությունը՝ սույն ձևագիրը 1832 թվականին հանված է Մայր Տաճարի թանգարանի հյուսիսային խորանից:

ՀԻՇԱՏԱՆԱԳՐԱՆՆԵՐ

Ք. 1ա.— Յիշատակ է Իշխանից Սուրբ Աւետարանս Կարնոյ գիւղն, որ կոչի Զիթաւոզը, առ հասարակ բարեպաշտ ժողովրդոց, ի դուռն Սուրբ Նշան եկեղեցւոյ: Ի թուին հայոց ՌՄՁԱ (1832) օգոստոսի Ա:

Ով ոք գողանայ, երկու աշն կուրանայ, Անտուծոյ տեսութեան, նա զբրկեալ մընայ, Սուրբ արքայութեան, նա շարժանանայ: Եւ աշխատութեամբ և արդեամբ Զիթողիք էլ: Կէկեան Պետրոսին և Խորայիլին և Սեմեփա-

նին, սոքայ արդար վաստակաց իւրեանց և տուն յիշատակ:

Ք. 9բ.— Գրեցաւ ձեռամբ Թովմաս սարկավագի Կոստանդնուպոլսեցւոյ:

№ 172

ՊԱՆԺԵՆԻԱ

Թերքերը՝ 64—Պրակները՝ մեկ հատ, 64 թերթից:—Մեծությունը՝ 32,8×24×0,7 սմ.:—Նյութը՝ գրի սովորական թուղթ:—Կազմը՝ թղթակազմ:—Պատկերակներ՝ լուսին:—Վիեակը՝ լավ: 31 և 44—64 թերթերի վրա գրություն կա:—Գծությունը՝ միասուն:—Տողերը՝ 34:—Գծումները՝ թղթի տողերը ապված են առաջուց:—Գիրը՝ մանր շեղդգիր:—Ձառագրությունը՝ լուսին:—Գրիլը՝ անհայտ:—Ժամանակը՝ 1833-ից հետո:—Վայրը՝ Կոստանդնուպոլս:—Մանրությունը՝ սույն ձևագիրը հանված է Վեհարանի զրադարանից:

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ք. 2ա.— Պալամենիա որ է Սահմանադրութիւն կամ բարձրագոյն կարգադրութիւն Սուրբ Գրիգորեան Հայոց եկեղեցւոյ դործոց կառավարութեան համար, ի Ռուսաստան, Հաստատեալ 11 մարտ 1836:

Թարգմանեալ յաշխարհիկ բառերա ի ձեռն Գարբիէլ վարդապետի Այվազեան և հրատարակեալ մասն առ մաս ի Մասեաց Աղաւնի ամսաթերթին, յամի 1857 մարտ—1858 մարտ:

Ք. 3ա.— Սահմանք տեսութեան Հայաստանեայց եկեղեցւոյ ի Ռուսիա (Գարբիէլ վարդապետ Այվազեան):

Ք. 3բ.— Կայսերական հրովարտակ առ տնօրէն ծերակոյտն, ի Փեթրպուրկ, 11 մարտի 1836, նիկողայոս:

Ք. 3բ.— Սահմանք Տեսութեան Հայաստանեայց եկեղեցւոյ ի Ռուսիա:

Գլուխ Ա, Հայաստանեայց եկեղեցւոյ ընդհանուր իրաւանց և արտօնութեանցը վրայ:

Ք. 4բ.— Գլուխ Բ, Գերագոյն Պատրիարքին (Կաթողիկոսին) վրայ:

Ք. 6ա.— Գլուխ Գ, էջմիածնայ Սինհոդոսին վրայ:

Ք. 8բ.— Գլուխ Դ, Վիճակաւոր Առաջնորդ եկեղեցւոյն հայոց:

Ք. 10ա.— Գլուխ Ե, Հայոց Եպիսկոպոսական ատեաններուն և հոգեւորական տեսութեանցը վրայ:— Ա. Եպիսկոպոսական ատեանը:

Ք. 11ա.— Բ. Հոգեւորական ատեանը:

Ք. 11բ.— Գլուխ Զ, Վանորէից վրայ:

Ք. 13ա.— Գլուխ Է, Ամուսնացեալ եկեղեցականը:

Ք. 13բ.— Գլուխ Ը, Հոգեւորական դպրատուններ:

Ք. 14ա.— Գլուխ Թ, Կառավարութիւն ստացուածոց Հայաստանեայց եկեղեցւոյ:

Ք. 15ա.— Գլուխ Ժ. Քաճանայից և ուրիշ եկեղեցական պաշտօնէից թոշակները, և անոնց այրիներուն ու որբերուն հոգաբարձութիւնը:

Ք. 16ա.— Ստորագրեալ նախագահ Կալսիրական խորհրդականին՝ Կոմս Նովոսիլցով:

Ք. 16բ.— Պալատէնեայի ԺԹ-րդ յօդուածին համաձայն Ամենայն Հայոց Հայրապետին ըրած ուխտին օրինակն է:

Ուխտագիր Տ. Տ. Գէորգ Դ հոգեւոյս Հայրապետի Ամենայն Հայոց:

Ի յայիսի 1867 ամի:

Ի Ս. Էմիլաժին:

Ք. 17ա.— Եղանակ ընտրութեան Ամենայն Հայոց Հայրապետի որ օրինակեալ է Կաթողիկոսական ձեռնադրութեան Մաշտոցէ մը (ձեռագիր, անթուական):

Ք. 17բ.— Եղանակ ընտրութեան վիճակաւոր առաջնորդի կամ եպիսկոպոսի, որ օրինակեալ է եպիսկոպոսական ձեռնադրութեան Մաշտոցէ մը (ձեռագիր, անթուական):

Ք. 19ա.— Սահմանք կարգաց և կանոնաց հայրապետական իշխանութեան Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ 1883 յայիս 24:

Ք. 20ա.— Մասն Առաջին, Գլուխ Ա, Հայաստանեայց Ս. Եկեղեցի և Ընդհանրական վարչութիւն Հայրապետութեան Ամենայն Հայոց:

Ք. 21ա.— Հրահանգ ընտրութեան Հայրապետի Ամենայն Հայոց:

Ք. 24ա.— Ընտրական եղանակք ի Ռուսիա:

Ք. 24բ.— Գլուխ Բ, Իրաւունք և պարտք Հայրապետին Ամենայն Հայոց:

Ք. 26ա.— Կալուածք և իրաւունք սեփականութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ:

Ք. 27ա.— Գլուխ Գ, Հայրապետական Ժողով և Կաթողիկոսական փոխանորդ:

Ք. 27բ.— Պարտաւորութիւնք Հայրապետական Ժողովոյ:

Ք. 28բ.— Կաթողիկոսական փոխանորդ և պարտաւորութիւնք նորա:

Ք. 29ա.— Գլուխ Դ, Պարտք և իրաւունք առաջնորդաց, վանահարց, վանական միաբանութեանց և քահանայից:

Ք. 31բ.— Անդամք մասնախմբի կաթողիկոսական յանձնաժողովոյ:

(ստորագրութիւնք)

Խորէն արքեպս. Նարայէյ
Մատթէոս Եպս. Իգմիրլեան
Յովհաննէս Բճճյ. Մկրեան
Մարկոս Աղաբէգեան

24 յայիս 1883

Ի Ս. Գրիգոր Լուսաւորիկ

Եկեղեցւոյ հայոց

Ի Ղալաթեա:

Ք. 32ա.— Մասն Ներքորդ, Գլուխ Ա, Ազգային հոգեւորական վարչութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ի Ռուսաստան:

Տեսչական խորհուրդ:

Ք. 33ա.— Թեմակալ առաջնորդք վիճակաց Ռուսաստանի և Պարսկաստանի:

Ք. 33բ.— Առաջնորդական փոխանորդ:

Վիճակային խորհուրդ:

Ք. 34բ.— Թեմական գործակալք:

Թեմական եկեղեցականք:

Ք. 35ա.— Վիճակային եկեղեցականաց խորհուրդ:

Ք. 36ա.— Թեմական հոգաբարձութիւն:

Վիճակային հոգաբարձութեան խորհուրդ:

Ք. 37ա.— Գլուխ Բ, Ընդհանուր իրաւունք և արտօնութիւնք Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ ի Ռուսաստան:

Ք. 38բ.— (Ք. 31բ-ում եղող նոյն թվականն ու ստորագրութիւնները):

Ք. 39ա.— Մասն Ներքորդ, Ազգային հոգեւորական վարչութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ի Տաճկաստան:

Գլուխ Ա, Պատրիարքութիւն հայոց Կ. Պոլսոյ:

Ք. 40ա.— Գլուխ Բ, Պատրիարքութիւն հայոց Ս. Երուսաղէմի:

Ք. 41ա.— Գլուխ Գ, Կաթողիկոսութիւն Տանն Կիլիկիոյ և Տանն Ալթամարայ:

Ք. 43ա.— (Ք. 31ա-ում եղող նոյն թվականն ու ստորագրութիւնները):

№ 173

ՏԱՂԱՐԱՆ

Թերթեր՝ 45:—Պրակներ՝ 6, անկանոն ծախովով Ա՝ 6, Բ՝ 9, Գ՝ 8, Դ՝ 8, Ե՝ 9 և Զ՝ 5 թերթ:—Մեծուրյունը՝ $12 \times 8,5 \times 1,5$ սմ.:—Նյութը՝ կեղտոտած շատ հասարակ կապտավուն թուղթ:—Կտգը՝ լաթակաղմ ստվարաթուղթ:—Պակասեցնելու շունչ:—Վիճակը՝ քայքայված:—Գրութիւնը՝ միասուն:—Տողերը՝ անկանոն, 14—16:—Գծումները՝ ոչ ճշգրտով:—Գիրը՝ ետքգիր:—Դատարկ թղթերը՝ թ. թ. 41—45:—Ձաղաղութիւնը՝ շունչ: Կան միայն երկու թերթ տպագրիչ նկարներ (թ. թ. 34ա և 40բ):—Գրիչը՝ Ղաղաթու:—Ժամանակը՝ ԺԹ դար:—Վայրը՝ անհայտ:—Մտնորութիւնը՝ ստացված է Ռուստովի եկեղեցւոյ 1854 թվականին, զոկտ. 2 պրոֆ. Ա. Արաբաճեանի միջոցով:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ք. 27ա.—

Սուրբ Սարգիս և Մարտիրոս,
Աղաչեցէք առ Տէր Քրիստոս,
Լեռուք միջնորդ և բարեխօս,
Պահել զձառայս ձեր Ղապարոս:

(Շարունակելի)